



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ст. Уф. 67 жет
Группа кувшинов
Старокулевская.

497.99-5

У - 13



5415

491.99-5

0 405-10

Տպագրուած է հանգուցեալ գլխաւոր բժիշկ Գեորգ Աւետիքեան Տիգրանեանի ծախքով՝ հայ աղքատ մանուկներին ձրի բաժանելու համար:

425 ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԱՌՕՏ
9-ԱԲ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—*o*—

1005
22439

80P11688

Ս. ԱՐԵՂԵԱՆ



Սլիֆտաւարձ սպարձմ. Ստրայ Էջմիածնի

1907

Գ. Ս. Է. ՔԵՐԱ

լով այդ մեր Աշխարհաբարի քերականութեան վերին դասընթացի մէջ դնելու համար: Այս «Համառօտ քերականութեան» միջից, քանի որ գրաբարի ուսումնի աշխարհաբարի ուսումից յետոյ պիտի գայ, զուրս է թողնուած այն ամենը, որ ընդհանուր քերականութեանն է վերաբերում և յատուկ է նաև աշխարհաբարին, որ և աշակերտն առաջուց սովորած պիտի լինի մեր «Տարրական քերականութիւնից» կամ «Աշխարհաբարի քերականութիւնից»: Այստեղ նոյնը կրկնելն աւելորդ ծանրաբեռնութիւն կը լինէր: Բայց զրա փոխանակ, որքան կարելի է, մանրամասն վերցուած են գրաբարի ձևերը՝ խսկապէս խոնարհուած, հոլովուած, նախդիրների գործածութիւն և մի քանի շարահիւսական կանոններ, որոնք գրաբարին միայն յատուկ են կամ աշխարհաբարում հազուադէպ են պատահում: Քերականութեանս մէջ բերած օրինակների հեղինակները չնշանակեցինք աւելորդ տեղ չբռնելու համար, մանաւանդ որ այժմ լեզուի ընտրութեան և ոչ ընտրութեան խնդիր չկայ:

Մ. Ա.

1907 թգոտտու 25

Ս. Էջմիածին.

ԳՐԱԲԱՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Գրաբարն այժմ կառոււմ են աշխարհաբարի ձևով, իսկ աշխարհաբարը գում են մեծ մասամբ գրաբարի ձևով:

Գրաբարի և աշխարհաբարի բառերը մեծ մասամբ նոյն են. սակաւաթիւ բառեր կան գրաբարում, որոնք աշխարհաբարում չեն գործածուած: միայն գրաբարում բառերն երբեմն ուրիշ իմաստով են առնուած, քան ինչ որ աշխարհաբարում: օրինակ՝ մորթել գրաբարում նշանակում է մորթազերծ անել, քերթել և ապա երկրորդաբար՝ փողոտել, վիզը կտրել. իսկ աշխարհաբարում նոյն բառը գործ է ածուած միայն երկրորդ իմաստով:

Բառակազմութեան նկատմամբ գրաբարն և աշխարհաբարն իրարուց առանձին տարբերութիւն չունին:

Գրաբարի էական տարբերութիւնը աշխարհաբարից՝ ձևարանութեան և շարահիւսութեան մէջ է:

Չեւարանութեան համար պիտի իմանալ.

ա, Շատ ձևեր գրաբար և աշխարհաբար բոլորովին նոյն են, օրինակ՝ գնացի, գնահ, գնացէք ևլն. տրեան, հիմամբ ևլն:

բ, Կան ձևեր, որ գրաբար և աշխարհաբար նոյն են՝ միայն իմաստի շրջումով, ինչպէս՝ գընամ, գնաս, գնայ գրաբարում նշանակում են աւելի՝ գնում եմ, գնում ես, գնում է, և երկրորդաբար՝ կը գնամ, կը գնաս, կը գնայ կամ գնամ, գնաս, գնայ:

գ, Կան ձևեր, ինչպէս և բառեր, որ գրաբար և աշխարհաբար նոյն են՝ միայն օրոշ հնչափովս թեամբ, ինչպէս՝ փախեայ, փախեար, փախեաւ ևլն, գնացեալ, տեսեալ, լեառն աշխարհաբարում լինո մ են՝ փախոյ, փախար, փախաւ, — գնացել, տեսել, լեռ:

դ, Կան ձևեր ևս, որ աշխարհաբարում նոր կազմուած են ուրիշ ձևերի նմանութեամբ, որով ձևի շրջում է եղել, այսինքն գրաբարի մի սովորական ձևի փոխանակել է մի ուրիշ սովորական կամ քիչ պատահող ձև, ինչպէս օրինակ՝ Անցեալ կատարեալի՝ հասի, հասեր, հաս, հասաք, հասէք, հասին ձևերի տեղ անցել են ուրիշ բայերի համար սովորական և խոնարհման վերջաւորութիւնները և աշխարհաբարում այդ բայի

Անցեալ կատարեալը բոլոր դէմքերի մէջ ունի ա ձայնաւորը՝ հասայ, հասար, հասաւ ևլն: Այսպէս և Հրամայականի յոգն. 2-րդ դէմքի համար գրաբարի էք, այք, արուք, իք վերջաւորութիւններից աշխարհաբարում մնում է բոլոր բայերի համար միայն էք վերջաւորութիւնը: Իսկ անունների յոգնակի թուի համար ընդհանրացել է եար, նեար = եր, ներ մասնիկը, որ գրաբարում քիչ է պատահում:

Շարանիւսութիւնը գրաբարում և աշխարհաբարում մեծ մասամբ նոյն է. երկուսի հիմնական տարբերութիւնը հետեւեալն է.

ա, Կողմնակի խնդիրները գրաբարում սովորաբար իրենց խնդրառուից յետոյ են դըրուում, մինչդեռ աշխարհաբարում առաջ են ընկնում. օրինակ՝ կին մի = աշխ. մի կին. Լեառն Ձիթենեաց = Ձիթենեաց լեռը. Բարձումն ազգին Արշակունեաց = Արշակունեաց ազգի բարձումը:

բ, Մականունները գրաբարում կարող են իրենց անունից յետոյ էլ դրուել և յետադաս ժամանակ սովորաբար, երբեմն և նախադաս ժամանակ, թուով և հօլովով համաձայնում են իրենց անունը, մինչդեռ աշխարհաբարում մականուններն անփոփոխ են մնում, ինչպէս՝ մեծ զօրութիւն, մեծի զօրութեան, մեծաւ զօրու

Թեամբ և ին, կամ յետագաս՝ զօրավարն քաջ,
 զօրավարին քաջի, ի զօրավարէն քաջէ և ին, աշ-
 խարհաբար լինում է՝ մեծ զօրութիւն, մեծ զօ-
 րութեան, մեծ զօրութեամբ, — քաջ զօրավարը,
 քաջ զօրավարին, քաջ զօրավարից և ին:

գ, Գրաբարում շատ գործածական են՝
 գ, ի (յ), ց, առ, ընդ, ըստ նախդիրները՝ գա-
 նազան իմաստներով, սրտնց փոխանակում են
 աշխարհաբարում դանազան հօլովներ կամ ու-
 րիշ կապեր ու կապական բառեր, օրինակ՝
 ընդ ծառով = ծառի տակ, Զքաղաքան = քա-
 ղաքի շուրջը:

Բ Ա Յ

Ա Ն Ո Ր Ո Շ Դ Ե Ր Բ Ա Յ

1. Գրաբարում կայ չորս դերբայ՝ անո-
 րոշ, ապառնի, անցեալ և ենթակայական:

Անորոշ դերբայը վերջանում է ալ, ել, իլ,
 ուլ ինչպէս՝ խաղալ, գրել, ուսանիլ, հեղուլ:
 Լծորդ ձայնաւորներն ուրեմն չորս են՝ ա, ե, ի,
 ու: Մի բայ միայն՝ զոլ՝ ունի յ լծորդ:

Ի լծորդն անորոշ դերբայի մէջ, ինչպէս աշխար-
 հաբարում, սովորաբար փոխւում է ե լծորդի. օրինակ՝
 խօսիլ, ուսանիլ, փախչիլ ձևերի փոխանակ սովորաբար
 գործ են ածւում՝ խօսել, ուսանել, փախչել: Այս պատ-
 ճառով բայերն անուանելու համար պէտք է առնել Սահ-
 մանական եզանակի 1-ին գէմբը. ինչպէս՝ խօսիմ, ու-
 սանիմ, գրեմ, խաղամ:

2. Գրաբարում բայերը մեծ մասամբ նոյն
 կազմութիւնն ունին, ինչ որ աշխարհաբարում:

ա, Պարզ բայեր, որոնց հիմքի վրայ անմի-
 ջապէս աւելանում է ալ, ել, իլ, ուլ, օրինակ՝
 խաղալ, գրել, բնակիլ, հեղուլ:

բ, Սոսկածանց բայեր, որոնց հիմքի և
 լծորդի մէջ մտնում են ան, նն, ն, չ ածանց-
 ները, օրինակ՝ գոհ-ան-ամ, մերձ-կն-ամ, տես-

ան-եմ, ուս-ան-իմ, փախ-չ-իմ, դարթ-ն-ում, վեց բայ չ միջածանցի տեղ ունին նչ, անչ, աչ ձևերը՝ կորնչիմ, երկնչիմ, մարտնչիմ, յարնչիմ, մեղանչեմ, ճանաչեմ:

գ, Բազմապատկական բայեր, ատ, ոտ, տ ածանցներով, ինչպէս՝ խածատեմ, կոտորատեմ, կոտորտեմ, յոշտեմ, կրճատեմ:

դ, Պատճառական բայեր, որոնք կազմուած են պարզ և սոսկածանց բայերի ընդ վրայ աւելացած ուղան միջածանցով, որ կրկնածանց է՝ կազմուած պատճառական ոյց և սոսկածանց ան մասնիկներով: Լծորդ ձայնաւորն է, ինչպէս աշխարհաբարում, միշտ եւ օրինակ՝ զարմացուցանեմ = զարմացնել:

Յ, Բայերի բունը նոյն կազմութիւնն ունի, ինչ որ աշխարհաբարում, այսինքն՝

ա, Աց աւելանում է ամ, անամ՝ վերջացած բայերի հիմքի վրայ, ինչպէս՝ խաղ-ամ, զարմ-անամ՝ ունին բուն՝ խաղաց, զարմաց, որոնցից կազմուած են պատճառական բայեր՝ խաղացուցանեմ, զարմացուցանեմ:

բ, Եաց աւելանում է եմ, իմ, ենամ՝ վերջացած բայերի հիմքի վրայ, ինչպէս՝ յիշ-եմ, խօս-իմ, մերձ-ենամ՝ բուն ունին՝ յիշեաց, խօսեաց, մերձեաց, որոնցից կազմուած են պատ-

ճառական բայեր ձայնափոխութեամբ՝ յիշեցուցանեմ, խօսեցուցանեմ, մերձեցուցանեմ:

գ, Հիմքն իբրեւ բուն բանում է, ինչպէս աշխարհաբարում, անեմ, անիմ, չիմ, նում, ում՝ վերջացած բայերի համար, ինչպէս՝ հաս-անեմ, ուս-անիմ, թու-չիմ, դարթ-նում՝ պատճառական ունին՝ հասուցանեմ, ուսուցանեմ, թուուցանեմ, դարթուցանեմ: Մարտնչիմ՝ ունի՝ մարտուցանեմ, երկնչիմ՝ երկուցանեմ կամ երկեցուցանեմ, յարնչիմ՝ կամ յարնեմ՝ յարուցանեմ, մեղանչեմ՝ մեղուցանեմ, ճանաչեմ՝ ճանուցանեմ:

Մի քանի բայ պատճառական ոյց ածանցից բաղաձայնի տեղ ունին զ կամ ո՛ ել-անեմ, ելուզանեմ (այլ և ելուցանեմ), փլ-անիմ (աշխ. փլչիլ), փլուզանեմ (այլ և փլուցանեմ), ընկ-նում, ընկուզանեմ, կոր-նչիմ (աշխ. կորչիլ), կորուսանեմ:

Ծան. 1. Գրաբարում պատճառական իմաստ են ստանում բայերը, երբ անորոշ գերբայի հետ գրուած են առնեմ, քամ բայերը, ինչպէս՝ ամենեմ՝ մտաներմուծանեմ, մտուցանեմ, անեմ՝ աշխատելու աշխատեցուցանեմ, անեմ՝ տալ ելի: Եւ այնպէս՝ տամ՝ ամելու բերել տալ, տամ՝ տանելու տանել տալ, տամ՝ գրելու գրել տալ ելն: Տամ՝ բայի այս գործածութիւնը շատ սովորական է, ինչպէս և աշխարհաբարում: Իսկ ամենեմ բայն այս կիրառութեամբ քիչ է պատահում:

Օրինակ՝ Արան այսր մտանել: Առնիցես զմեզ աշխատել: Արան, Տէր, վախճան դադարման առնուլ: Արասցես զօրանալ: Բարի է շարչարանք, զի զԱստուած ճանաչել առնէ: Երբեմն առնեմ բայից յետոյ անորոշ դերբայի տեղ դրուում է երկրորդական խօսք զի շաղկապով կապուած: օրինակ՝ Արարից զի յարդարութիւնս իմ գնայցեք (= գնացուցից): Արարից զնոսա. զի կկեսցեն և երկիր պապցեն առաջի օտից քոց: Ես արարից զի լացցես:

Ծան. 2. Աշխարհարարի պատճառական բայերը ծագում են զբարարի պատճառական ձևերից հնչափոխութեամբ, այն է՝ պատճառական ուց ածանցի ու ձայնաւորը և աճ սոսկ միջածանցի ա ձայնաւորը սղուում են. ինչպէս քաուցանել, հասուցանել զառնում են թոցնել, հասցնել: Աց, եաց բների և ոյց ածանցի երկու ց բաղաձայնները՝ ձայնաւորների սղուելով՝ իրար մօտ են ընկնում և զրանցից երկրորդ ց տան ևս դուրս է ընկնում. ինչպէս՝ զարմացուցանել, բնակեցուցանել զառնում են՝ զարմացնել, բնակեցնել և ապա զարմացնել, բնակեցնել: Նոյն ձևով անցուցանել, լցուցանել, կացուցանել, կեցուցանել, դարձուցանել զառնում են՝ անցնել, լցնել, կացնել, կեցնել, դարձնել: Աշխարհարարի առանց սղուելու. պատճառական բայերը՝ մատուցանել, ուսուցանել, զեկուցանել են. առնում են զբարարից:—Այսպէս և տեսանել, ելանել, մտանել են. զառնում են՝ տեսնել, ելնել, մանել:

4. Բայերի ձևերի և նրանց լծորդների մէջ յաճախ փոխանցում է լինում, այնպէս որ մի և նոյն բայը երբեմն մի քանի ձևով է կազմուում:

Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել հետեւեալ փոխանցումների վրայ.

1. Եմ, իմ, ինչպէս՝ բնակեմ, բնակիմ. ապստամբեմ, ապստամբիմ. ծաղկեմ, ծաղկիմ. պատահեմ, պատահիմ. փայլեմ, փայլիմ. պակասեմ, պակասիմ. պարպեմ, պարպիմ են:

2. Եմ, եամ, ամ, իմ, ինչպէս՝ ատեմ, ատեամ. խնայեմ, խնայեամ. անխայեմ, անխայեամ. փրկեմ, փրկիրիմ, փրկիւրամ, փրկիւրեամ. լողեմ, լողիմ. ծփիմ, ծփամ. որոճեմ, որոճամ. տեղեմ, տեղամ, տեղեամ. նոյնպէս՝ քարոզեալ, արձուկեալ, խզեալ, ասեալ, ծնանեալ փոխանակ՝ քարոզել, արձակել. խզել, ասել, ծնանել ձևերի:

3. Ում, եմ, ինչպէս՝ կասում, կասեմ. առաւելում, առաւելեմ. յաւելում, յաւելեմ. կիզում, կիզեմ. յեռում, յեռեմ. քերծում, քերծեմ. յառում, յառեմ (յառիմ). կարկառում, կարկառեմ. հինում (հենում), հինեմ. արձակեմ, արձակում. կրծեմ, կրծում են: (Տես ներքեւում՝ 8): Նոյն ձևով՝ արգելում, զենում, հեղում, զեղում, ցելում, լիզում, լիսում, թողում են, ինչպէս և զարթնում, թռնում, զբռնում, փախնում են. աշխարհարար ունին՝ արգելել, զենել, հեղել, զեղել, ցելել, լիզել, լիսել, թողել (աւելի՝ թողնել), զարթնել, թռնել, զբռնել, փախնել են:

4. Ամ, անամ, ինչպէս՝ անձկամ, անձկանամ. ցանկամ, ցանկանամ. զղջամ, զղջանամ. մուրամ, մուրանամ. խրոխտամ, խրոխտանամ. ծուլամ, ծուլանամ. յոխորտամ, յոխորտանամ. սողամ, սողանամ, այլ և սողիմ. սոսկամ, սոսկանամ. տենչամ, տենչանամ. փութամ,

փութանամ. քինամ, քինանամ. երթամ, երթանամ:
Այսպէս և մերկեմ, մերկանամ. մարթեմ, մարթանամ:

5. Իմ, եմամ, — եմ, եմամ, ինչպէս՝ արբիմ, արբենամ. մերձիմ, մերձենամ. մօտիմ, մօտենամ. թշնամիմ, թշնամենամ, այլ և թշնամանամ. պարծիմ, պարծենամ. յագիմ, յագենամ, — յամեմ, յամենամ:

6. Եմ, անեմ, — իմ, անիմ, ինչպէս՝ տարածեմ, տարածանեմ. ներկեմ, ներկանեմ. զանգեմ, զանգանեմ. մերկեմ, մերկանեմ. դատեմ, դատանեմ. լքեմ, լքանեմ. բեկեմ, բեկանեմ, — ծիւրբիմ, ծիւրբանիմ կէն Եոյն ձեւով՝ ստեղծանեմ, լուծանեմ, սպանանեմ, ծնանիմ, սկսանիմ կէն, աշխարհաբար ունին՝ ստեղծել, լուծել, սպանել, ծնել, սկսել:

7. Ում, անեմ, — ում, անիմ, ինչպէս՝ հանում, հանանեմ. հեղձում, հեղձանեմ (այլ և հեղձուցանեմ), զերծում, զերծանեմ, — գելում, գելանիմ. գեղում, գեղանիմ. հեղում, հեղանիմ:

8. Եմ, ում, անեմ, ինչպէս՝ գերծեմ, գերծում, գերծանեմ. հերձեմ, հերձում, հերձանեմ. դիզեմ, դիզում, դիզանեմ. կիզեմ, կիզում, կիզանեմ. հարեմ, հարում, հարկանեմ. հիւսեմ, հիւսում, կրաւոր.՝ հիւսանիմ. ստեղծեմ, ստեղծում, ստեղծանեմ:

9. Եմ, նում, անեմ, — իմ, նում. անիմ, ինչպէս՝ թքեմ, թքում, թքանեմ. կզեմ, կզում, կզանեմ, — հեղձիմ, հեղձում, հեղձանիմ. զերծիմ, զերծում, զերծանիմ:

10. Նում, անեմ, — նում, անիմ, ինչպէս՝ կլնում, կլնանեմ, — զբօսնում, զբօսանիմ (այլ և՝ զբօսանամ):

հեծնում, հեծանիմ. ջեռնում, ջեռանիմ. սկսնում, սկսանիմ. սիւածնում, սիւածանիմ:

11. Իմ, նում, — ում, նում, ինչպէս՝ զբաղիմ, զբաղնում. զգածիմ, զգածնում, — կալում, կալնում:

12. Չիմ, նում, ինչպէս՝ փախչիմ, փախչնում. գարթչիմ, դարթնում. գատչիմ, գատնում. ուռչիմ, ուռնում (ուռենամ). թռչիմ, թռնում. հարթչիմ, հարթնում (= աշխ. խորտչել, խորտնել). ցասչիմ, ցասնում. սատչիմ, սատնում. այտչիմ, այտնում. մատչիմ, մատնում. խափչիմ, խափնում. թագչիմ, թագնում. հանգչիմ, հանգնում. պակչիմ, պակնում. սառչիմ կամ՝ սառնչիմ, սառնում:

Ա Պ Ա Ռ Ն Ի Դ Ե Ր Բ Ս Յ

5. Ապառնի դերբայի վերջաւորութիւնն է ոց, որ աւելանում է անորոշ դերբայի վրայ. ի լծորդն այս դէպքում դառնում է ն, իսկ ու լծորդը ձայնափոխութեամբ դուրս է ընկնում. ինչպէս՝ գրել, գրելոց. խօսիլ, խօսել, խօսելոց. հեղուլ, հեղլոց. զենուլ, զենլոց = աշխ. գրելու, խօսելու, հեղելու, զենելու:

Գրաբարում ապառնի դերբայը սակաւ անգամ միայն իբրև մականունն է գործածւում. սովորաբար զբնում է եմ բայի վրայ և կաղմում բաղադրեալ ժամանակներ՝ ինչպէս՝ գրելոց եմ = գրելու եմ: Երբեմն անանցողական բայերի ապառնի դերբայը իբրև գոյական էլ է բանում, ինչպէս՝ լիալք և լինելոցք = եղածները և լինելիքները: Զգալոցսն պատմեսցէ = գալիքները պատմէ:

6. Անցեալ դերբայի վերջաւորութիւնն է նալ, որ գրուում է.

ա, Պարզ եմ, իմ, ում և սոսկածանց անեմ, անիմ վերջացած և բազմապատկական բայերի համար բայի հիմքի վրայ. ինչպէս՝ գրեմ, մերձիմ, հեղում, տեսանեմ, ուսանիմ ունին՝ գրեալ, մերձեալ, հեղեալ, տեսեալ, ուսեալ:

Կան պարզ եմ, իմ վերջացած բայեր, որոնք ունին և բնից կազմուած անցեալ դերբայ եցեալ ձևով, որ աւելի կրաւորական իմաստով է գործածուում. ինչպէս՝ գրեմ՝ գրեալ, գրեցեալ (=գրած, գրուած). կոչեմ՝ կոչեալ, կոչեցեալ. սիրեմ՝ սիրեալ, սիրեցեալ. խօսիմ՝ խօսեալ (նշանած աղջիկ իմաստով), խօսեցեալ. նոյնպէս՝ ատեցեալ, այրեցեալ, գործեցեալ, ննջեցեալ, ամաչեցեալ, անեցեալ, հայեցեալ, նայեցեալ երև. կամիմ ունի միայն՝ կամեցեալ ձևը:

բ, Պարզ ամ և սոսկածանց անամ, ննամ վերջացած բայերի համար բայի բնի վրայ, ինչպէս՝ զարմանամ, զարմացեալ. մերձեանամ, մերձեցեալ:

գ, Պատճառական բայերի համար՝ պատճառական բնի վրայ, այսինքն ոյց ածանցից յետոյ. ինչպէս՝ զարմացուցանեմ, զարմացուցեալ. թռուցանեմ, թռուցեալ:

դ, Ըիմ, նում վերջացած բայերը չունին առանձին անցեալ դերբայ, որի իմաստով գործ է ածուում կամ կրկին ձևերից մէկի անցեալ դերբայը, ինչպէս՝ թքեալ, եղծեալ, դերծեալ, զբաղեալ (§ 4. 9—11), կամ եթէ ուրիշ կըրկին ձև չունին (§ 4. 12), գործ է ածուում նոյն բայի հիմքից կազմուած պատճառական բայերի անցեալ դերբայը (§ 6. գ.). ինչպէս՝ թռուցեալ, ուռուցեալ, փախուցեալ (թռուցանեմ, ուռուցանեմ, փախուցանեմ բայերից) նշանակում են թէ թըռցրած, ուռցրած, փախցրած և թէ թռած, ուռած, փախած, այսինքն թռչիմ թռնոււմ, ուռչիմ — ուռնոււմ, փախչիմ — փախնոււմ բայերի իմաստով:

Ծան. 1. Գրաբարի անցեալ դերբայը նայելով տեղին աշխարհաբար թարգմանուում է կամ վաղակատար (ել վերջաւորութեամբ) կամ յարակատար (ած վերջ.) դերբայով. օրինակ՝ իմ տուեալ հրամանն կատարեցաւ — իմ տուած հրամանը կատարուեցաւ: Զի 199ի ասացեալն ի մարգարէէն — որպէս զի կատարուի մարգարէից ասուածը կամ մարգարէի ասածը: Այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին — այսպէս է գրուած մարգարէի ձեռով: Մերձեալ է արքայութիւն երկնից — մտեցել է (կամ մտեցած է) երկնքի թագաւորութիւնը: Ահաւասիկ թագաւոր քո գայ նստեալ ի վերայ գաւառակի իշոյ — անհաջող թագաւորը դալիս է ինչ կրկնուած նստեալ տանէին զնա — նրանք արքայութեան վրայ նստեալ բարբառին — նստել խօսում են: 7/11-1922



Ծան. 2. Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել անցեալ դերբայի հետեւալ կիրառութեանը: Նոյն ենթական ու ժամանակն ունեցող երկու, երեք բայերից առաջինը սովորաբար գրւում է անցեալ դերբայով, և ենթական, մանաւանդ երբ անցեալ դերբայից յետոյ է գալիս, գրւում է յաճախ իբրև սեռական խընդիր: Այսպիսի անցեալ դերբայն աշխարհաբար թարգմանւում է կամ զիմաւոր բայով կամ անորոշ դերբայի գործիական հոլովով: Օրինակ՝ Եւ նա յաբուցեալ առ զմանուկն և զմայր նորա և եկն յերկիրն Իսրայէլի— Եւ նա վեր կացաւ, առաւ մանուկին ու նրա մօրը և եկաւ Իսրայէլի երկիրը: Դու յաբուցեալ գնասցես— Դու պիտի վեր կենաս, գնաս: Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս և եկն ի քաղաք իւր— Եւ նաւ մտաւ (կամ մտնելով) անցաւ այն կողմը և եկաւ իւր քաղաքը: Եկեալ բնակեցաւ ի քաղաքին— Եկաւ, բնակուեց քաղաքում: Ահա ետքեալ առ որդիան Իսրայէլի՝ ասիցեմ ցնոսա— Ահա ես կերթամ ... կասեմ: Եւ ելեալ անտի Յիսուսի՝ գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի— Եւ Յիսուս այնտեղից ելաւ (կամ ելնելով) գնաց Տիւրոսի և Սիդոնի կողմերը: Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ կազել ընդ նմա: Եւ նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ: Աստուած կանխագէտ գրացեալ (—գրաւով) յիւր արարածսն տարածամ մահուամբ զերծուցանէ զմարդն ի չարեաց: Եւ հրաման առեալ (—առնելով, առած լինելով) ի տեսլեան չղաճնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:

Երբեմն տարբեր ենթակայ ունեցող բայերից ես առաջինը գրւում է անցեալ դերբայով, որ և աշխարհ

հաբար կատարուած կերպի անորոշ դերբայի գործիական հոլովով է աւուտ. օրինակ՝ Օգնութիւն հասեալ առ ի յԱստուծոյ՝ մինչև ցայսօր կացի ...— Աստուծոց օգնութիւն հասած լինելով՝ մինչև այսօր մնացի ...

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

7. Ենթակայական դերբայի վերջաւորութիւնն է ող (հին աւղ=օղ), և նոյն կազմութիւնն ունի, ինչ որ աշխարհաբարում. օրինակ՝ բամբասող, լսող, ասող (այլ և ասացող), զրկող, պատերազմող, գիտող, հնձող, — խնդացող, որսացող, բարկացող, մոռացող, լացող, — տեսանող, սպանանող, հարկանող, — զենող, արգելող, — փախչող:

Ծան. 1. Հին գրաբարի աւ երկբարբառը բաղաձայններից առաջ՝ դարձել է օ, ուստի մեր այբբենաբանի մէջ մտել է նոր օ տառը. այսպէս հին՝ աւր, աղաւթք, առաւաւտ, մաւտ ելն. գրւում են՝ օր, աղօթք, առաւօտ, մօտ: Երբեմն օ տառի տեղ անցել է ո, ինչպէս ենթակայական դերբայի վերջաւորութեան մէջ՝ զրկաւղ, ծնաւղ ելն. — զրկօղ, ծնօղ կամ զրկօղ, ծնօղ: Պէտք է ուշադրութիւն դարձնել և հետեւալի վրայ. իւ երկբարբառը հին գրաբարում գրւում է եւ, ինչպէս՝ եւղ, աղբււր, գեւղ, հեւս, արեւն, ալբւր, մեծութեւն, սրբութեւն ելն. — իւղ, աղբիւր, գիւղ, հիւս, արիւն, ալբւր, մեծութիւն, սրբութիւն ելն:

Ման. 2. Անեմ, աճիմ ե մի քանի պարզ եմ, իմ վերջացած բայերի համար ենթակ. դերբայ կազմուում է և բնից, ինչպէս՝ տեսանող, տեսող. հատանող, հատող. հարկանող, հարող. ուսանող, ուսող. սպանանող, սպանող. ծնանող, ծնող. գտանող, գտող. ստեղծող, օծող. զգեցուցանող, զգեցուցող. դարձուցանող, դարձուցող.— կամեցող, պահեցող, իշխեցող, երգեցող, ատեցող: Իսկ որսալ, յուսալ, մուրալ, հոգալ ունին և որսող, յուսող, մուրող, հոգող, որոնք սովորաբար իբրև անուն են գործածուում:

Ման. 3. Ենթակայական դերբայի իմաստն արտայայտուում է նան՝

1. Իչ ածանցով կազմուած բայական ածականներով, ինչպէս՝ տուիչ, առաքիչ, փառաւորիչ:

2. Անորոշ դերբայից ի, յողնակի իք, ածանցով կազմուած բայական ածականներով. օրինակ՝ սիրելի, առնելի, լսելի, առեղծանելի, գործելի, կրելի, երևելի, ծորելի, ծնանելի, բերելի ելն. նշանակուում են թէ՛ ինչ որ արժանի է սիրելու, սիրուելու կամ՝ ինչ որ պէտք է սիրել ելն, և թէ՛ սիրող, անող, լսող, առեղծանող, գործող, կրող, երևացող, ծորող, ծնող, բերող:

3. Որ յարաբերականով երկրորդական խօսք կազմելով. այս դէպքուում բայի վրայ վերջից յաճախ գրուում է և յօդը: Օրինակ՝ փոխանակ ասելու՝ զքեզ տեսանողն, ասողն, պատմողն ասուում է՝ որ տեսանէ զքեզ, որ ասէն, որ պատմէն:

Տ. Բայերն ունին երկու եղանակ.

ա, Սահմանական, որ ունի հինգ պարզ ժամանակ՝ ներկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, առաջին ապառնի կամ ստորադասական ասական և երկրորդ ապառնի:

բ, Հրամայական, որ ունի միայն եզ. և յօդն. Չ-րդ գէմք և երեք պարզ ժամանակ՝ ներկայ, առաջին ապառնի և երկրորդ ապառնի:

Ման. Սահմ. Եղանակի առաջին ապառնին քերականները սովորաբար դնում են իբրև Ստորադասական եղանակ:

9. Բացասական ձեւերը կազմուում են սովորաբար ոչ, երբեմն չ(ը), մակբայով: Բացասական Հրամ. ներկան կամ Արգելականը միայն առանձին կազմութիւն ունի և ստանուում է մի՛ մակբայը, որը սակայն արգելական իմաստով գրուում է նաև ապառնի ժամանակների և նոյն իսկ անորոշ դերբայի վրայ: Օրինակ՝ Մի՛ լինիցիս (=չլինիս) որպէս կեղծաւորըն: Այլ ես ասեմ ձեզ. մի՛ կալ հակառակ չարին:

Ոչ, մի՛ բացասականները կարող են յաճախ բայից բաժանուել ուրիշ բառերով և նոյն իսկ բայից յետոյ գրուել, օրինակ՝ Մի՛ այսուհետև հոգայցիք վասն վաղուի: Որ ոչն գործիցէ և կերիցէ մի՛: Եւ ամաչեին իսկ ոչ:

10. Լծորդի ձեւերն են՝ Սահմ. ներկայ, անց. անկատար և առաջին կամ Ստորագասական ապառնի, Հրամ. առաջին ապառնի և Արգելա- կան ներկայ: Ներքեում դրուած են այս ժա- մանակներէ վերջաւորութիւնները լծորդ ձայնա-ւորներէ հետ, որոնք դրուած են Անորոշ դեր-բայի ալ: Ել, իլ, ուլ վերջերի տեղ:

11. Բնի ձեւերն են՝ Սահմ. անց. կատա-րեալ և երկրորդ ապառնի, Հրամ. ներկայ և երկրորդ ապառնի, որոնք կազմուած են երեք տեսակ վերջաւորութիւններով, ուստի և կայ երեք խոնարհում՝ ներգործակերպ, կրաւորա-կերպ և խառն: Վերջաւորութիւններն աւելա-նում են՝ անեմ, անիմ, ում, չիմ-նում վերջա-ցած բայերի հիմքի վրայ. իսկ ամ, անամ, եմ, իմ, ենամ, ուցանեմ վերջացած բայերի աց, եաց, ոյց բների վրայ, որոնց ց տառը յաջորդ ց, ջ տառերից առաջ դառնում է ս:

Ներքեւում դրուած են երեք խոնարհման վերջաւորութիւնները բնի ածանցների հետ, եթէ ունին: Դրանց հետ առնուած են սկզբից և Սահմ. ներկայի ձևերը, որոնցից կիմացուի, թէ որ բայը որ խոնարհման տակ է գնում և ինչպիսի ձևով: Վերջից կրկնուած են այն ձևերը, որոնց վրայ առանձին ուշադրութիւն պիտի դարձնել:

Ա. ԼԾՈՐԴԻ ՉԵԻԵՐ

| Անրշ. դերբ. ալ | Ել | Իլ | ուլ |
|--------------------|--------------|------------|--------------|
| Սահմ. | | | |
| Ներկայ | ամ | եմ | իմ |
| | աս | ես | իս |
| | այ | է | ի |
| | ամք | եմք | իմք |
| | այք | էք | իք |
| | ան | են | ին |
| Անց. անկ. | այի | էի | իի |
| | այիր | էիր | իիր |
| | այր | էր | իր (իւր) |
| | այաք | էաք | իաք |
| | այիք | էիք | իիք |
| | ային | էին | իին |
| (Ստ.) Ապ. Ա. այցեմ | իցեմ | իցիմ | ուցում |
| | այցես | իցես | ուցուս |
| | այցէ | իցի | ուցու |
| | այցեմք | իցեմք | ուցումք |
| | այցէք, այջիք | իցէք, իջիք | ուցուք |
| | այցեն | իցեն | ուցուն |
| Հրամ. | | | |
| Ապառնի Ա. | այջիր | իջիր | իջիր (չունի) |
| | այջիք | իջիք | իջիք (չունի) |
| Արգ. ներկ. | ար | եր | իր |
| | այք | էք | իք |

1. ԿԵՐԳՈՐԾԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ

| Սահման. Ներկայ | ամ | եմ | ուցանեմ | ուժ անեմ |
|-------------------|--|---|---|--|
| Անց. կատ. | աց-ի աց-եր աց աց-աք {աց-իք, {աց-էք աց-ին | եց-ի եց-եր եաց եց-աք եց-իք, եց-էք եց-ին | ուց-ի ուց-եր ուց ուց-աք ուց-իք, ուց-էք ուց-ին | ի եր (հիմքը) աբ իբ, էբ ին |
| Ապառնի Բ. | աց-ից աս-ցես աս-ցէ աս-ցուք աս-ջիք աս-ցեն | եց-ից ես-ցես ես-ցէ ես-ցուք ես-ջիք ես-ցեն | ուց-ից ուս-ցես ուս-ցէ ուս-ցուք ուս-ջիք ուս-ցեն | ից ցես ցէ ցուք ջիք ցեն |
| Հրամայ. Ներկայ | ա՛ աց-էք | եա՛ եց-էք | ա՛ ուց-էք | (հիմքը) է՛ք |
| Ապառնի Բ. | աս-ջիր աս-ջիք | ես-ջիր ես-ջիք | ուս-ջիր ուս-ջիք | ջի՛ր ջի՛ք |
| Անց. դերբայ | աց-եալ | (եց)-եալ | ուց-եալ | եալ |
| Սահմ. ներկ. | ամ | եմ | ուցանեմ | ուժ, անեմ |
| Անց. կատ. | ացի | եցի | ուցի | ի |
| Հրամ. ներկ. | ա՛ | եա՛ | ա՛ | (հիմքը) |

2. ԿՐԱՒՈՐԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ

| անամ | եհամ | իմ | անիմ | չիմ (նուժ) |
|--|--|--|---|--|
| աց-այ աց-ար աց-աւ աց-աք {աց-այք, {աց-արուք աց-ան | եց-այ եց-ար եց-աւ եց-աք եց-այք, եց-արուք եց-ան | եց-այ եց-ար եց-աւ եց-աք եց-այք, եց-արուք եց-ան | այ ար աւ աք այք, արուք ան | եայ եար եաւ եաք եայք, եարուք եան |
| աց-այց աս-ցիս աս-ցի աս-ցուք աս-ջիք աս-ցին | եց-այց ես-ցիս ես-ցի ես-ցուք ես-ջիք ես-ցին | եց-այց ես-ցիս ես-ցի ես-ցուք ես-ջիք ես-ցին | այց ցիս ցի ցուք ջիք ցին | եայց իցես իցէ իցուք իջիք իցեն |
| աց-ի՛ր {աց-այք {աց-արուք | եց-ի՛ր եց-այք եց-արուք | եա՛ց եց-այք եց-արուք | ի՛ր ա՛յք արու՛ք | ի՛ր եա՛յք երու՛ք |
| աս-ջիր աս-ջիք | ես-ջիր ես-ջիք | ես-ջիր ես-ջիք | ջի՛ր ջի՛ք | իջի՛ր իջի՛ք |
| աց-եալ | (եց)-եալ | (եց)-եալ | եալ | (ուցեալ) |
| անամ | եհամ | իմ | անիմ | չիմ (նուժ) |
| ացայ | եցայ | եցայ | այ | եայ |
| ացիր | եցիր | եաց | իր | իր |

3. ԽԱՌՆ
ԽՈՆԱՐՀՄ.

12. Լծորդի ձևերի համար.

ա, Եամ լծորդի (§ 4. 2) եա երկբարբառը, երբ շեշտը յաջորդ վանկին է անցնում, դառնում է ե=է, ի. ինչպէս՝ ատեամ, ատեաս, ատեայ. ատեամք, ատեայք, ատեանս. Ատէի, ատէիր, ատեայր. ատէաք, ատէիք, ատէինս. Ատիցեմ, ատիցես, ատիցէ կընս. Մի ատեար, մի ատեայք:

ը, Եմ, իմ լծորդների Սահմ. առաջին ապառնու յոգն. 1-ին դէմքի համար պատահում է և իցուք ձևը, ինչպէս՝ խօսիցուք:

զ, Իմ լծորդի Անց. անկ. եզ. 3-րդ դէմքի իւր ձևը՝ խօսիր, ազանիր՝ քիչ է գործածուում:

դ, Ում լծորդի ոյ ձևը՝ բացի Անց. անկատարի եզ. 3-րդ դէմքից՝ պատահում է և ուրիշ դէմքերի մէջ՝ հեղոյի, հեղոյիր, հեղոյր կընս:

13. Բնի ձևերի համար.

ա, Անցեալ կատարեալի եզ. 3-րդ դէմքը, եթէ միավանկ բառ է մնում, սկզբից կարող է ստանալ է ձայնաւորը, որ բաղաձայններից առաջ դառնում է ե. օրինակ՝ օծանեմ՝ օծի, օծեր, օծ կամ էօծ: Տեսանեմ՝ տեսի, տեսեր, տես կամ ետես: Եթէ բայը է կամ ե ձայնա-

ւորով է սկսում, է-ն չի դուռում, ինչպէս՝ ելանեմ՝ ելի, ելեր, ել: Իջանեմ, իջի, իջեր, էջ:

ը, Անցեալ կատարեալի եզ. 3-րդ դէմքի վերջին վանկի մէջ վերականգնում են բնի կամ հիմքի եա, ոյ երկբարբառները և է, ու ձայնաւորները, որ միւս դէմքերի մէջ ձայնափոխուածեամբ դառնում են՝ ե, ու, ի, ղ (որ չի դուռում). նոյնը լինում է, երբ անց. կատարեալի 3-րդ դէմքը միավանկ է, ինչպէս և միավանկ հրամայականի մէջ. օրինակ՝ սիրեցի, սիրեցեր, սիրեաց, մատուցի, մատուցեր, մատուցց: Լուծանեմ՝ լուծի, լուծեր, լոյծ. Հրամ. լիյծ: Իջի, իջեր, էջ. Հրամ. է՛ջ: Անիծանեմ՝ անիծի, անիծեր, անէծ. Հրամ. անէ՛ծ: Մասնեմ՝ մտի, մտեր, միտ կամ եմիտ. Հրամ. միտ: Թքանեմ՝ թքի, թքեր, թուք:

զ, Մահմ. երկրորդ ապառնի ժամանակի եզ. և յոգն. 1-ին դէմքերի և յոգն. 2-րդ դէմքի համար պատահում են նաև ցեմ, ցիմ, իցեմ, — ցեմք, ցիմք, իցեմք, — ցէք, ցիք, իցէք վերջաւորութիւնները:

դ, Հրամ. ներկայ ժամանակի յոգն. 2-րդ դէմքի համար մի քանի բայ ունին իք վերջաւորութիւնը, ինչպէս՝ մատչիմ՝ մատչիք, դարթչիմ՝ զարթիք: Իսկ պարզ իմ վերջացած բայերի Հրամ. ներկայի եզ. 2-րդ դէմքը լինում է

երբեմն նաև պարզ եմ վերջացած ներգործակերպ խոնարհուող բայերի ձևով, կամ թէ բնի կամ հիմքի վրայ աւելանում է ի՞ր վերջաւորութիւնը. ինչպէս՝ ողորմիմ՝ ողորմեաց, ողորմեան. համարիմ՝ համարեանց, համարեան, համարիր. աշխատիմ՝ աշխատեանց, աշխատեան. ճեպիմ՝ ճեպեան. շահիմ՝ շահեան. երևիմ՝ երևեանց, երևեցիր. հետեիմ՝ հետեեանց, հետեեցիր:

ե, Երգողծակերպ խոնարհման տակ դընում են՝ ամ, եմ, ուցանեմ, անեմ, ում և կըրկնաձև նում-անեմ (§ 4. 9, 10) վերջացած բայերը: Վերջինը խոնարհում է ինչպէս անեմ վերջացած բայ՝ թքնում - թքանեմ՝ թքի, թքեր և չն:

զ, Կրատորակերպ խոնարհման տակ գնում են՝ անամ, ենամ, իմ, անիմ և կրկնաձև նում-անիմ, իմ-նում (§ 4. 9, 10) վերջացած բայերը: Վերջինները խոնարհում են ինչպէս անիմ վերջացած բայ՝ ջեռնում-ջեռանիմ՝ ջեռայ և չն:

է, Խառն խոնարհման տակ գնում են՝ չիմ, նչիմ, չիմ-նում (§ 4. 12) վերջացած բայերը՝ կառչիմ, փախչիմ-փախնում, մարտնչիմ: Բացի դրանցից նաև մի քանի ուրիշ բայեր՝ պչնում, ցածնում, քաղցնում (անցեալ դերբայ՝ քաղցեալ՝ քաղցեմ բայից), շրտնում:

14. ԼԾՈՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ս ա հ մ ա Գ ա կ ա Գ

Ն եր կ ա յ

| | | | |
|-------|--------|--------|---------|
| աղամ | սիրեմ | խօսիմ | հեղում |
| աղաս | սիրես | խօսիս | հեղուս |
| աղայ | սիրէ | խօսի | հեղու |
| աղայք | սիրեմք | խօսիմք | հեղումք |
| աղայք | սիրէք | խօսիք | հեղուք |
| աղան | սիրեն | խօսին | հեղուն |

Անցեալ անկատար

| | | | |
|--------|--------|---------------|---------|
| աղայի | սիրէի | խօսէի | հեղուի |
| աղայիք | սիրէիք | խօսէիք | հեղուիք |
| աղայը | սիրէք | խօսէր, խօսիւր | հեղուք |
| աղայաք | սիրէաք | խօսէաք | հեղուաք |
| աղայիք | սիրէիք | խօսէիք | հեղուիք |
| աղային | սիրէին | խօսէին | հեղուին |

Ապառնի Ա. (Ստորադաս.)

| | | | |
|----------|----------|----------|------------|
| աղայցեմ | սիրիցեմ | խօսիցիմ | հեղուցում |
| աղայցես | սիրիցես | խօսիցիս | հեղուցուս |
| աղայցէ | սիրիցէ | խօսիցի | հեղուցու |
| աղայցեմք | սիրիցեմք | խօսիցիմք | հեղուցումք |
| աղայցէք | սիրիցէք | խօսիցիք | հեղուցուք |
| աղայցեն | սիրիցեն | խօսիցին | հեղուցուն |

Հ ր ա մ ա յ ա կ ա Գ

Արգելական ներկայ

| | | | |
|-----------|-----------|-----------|------------|
| մի՛ աղար | մի՛ սիրեր | մի՛ խօսիր | մի՛ հեղուր |
| մի՛ աղայք | մի՛ սիրէք | մի՛ խօսիք | մի՛ հեղուք |

Ապառնի Ա.

| | | | |
|----------|----------|----------|---|
| աղայջի՛ր | սիրիջի՛ր | խօսիջի՛ր | — |
| աղայջի՛ք | սիրիջի՛ք | խօսիջի՛ք | — |

Անորոշ դերբայ

| | | | |
|------|-------|---------------|--------|
| աղալ | սիրել | խօսիլ (խօսել) | հեղուլ |
|------|-------|---------------|--------|

Ապառնի դերբայ

| | | | |
|--------|---------|---------|--------|
| աղալոց | սիրելոց | խօսելոց | հեղուց |
|--------|---------|---------|--------|

15. ԲՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

1. ՆԵՐԳՈՐԾԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ս ա հ մ ա Գ ա կ ա Գ

աղամ սիրեմ մատուցանեմ օծանեմ հեղում

Անցեալ կատարեալ

| | | | | |
|------------|-------------|--------------|----------|-----------|
| աղացի | սիրեցի | մատուցի | օծի | հեղի |
| աղացիը | սիրեցիը | մատուցիը | օծիը | հեղիը |
| աղաց | սիրեաց | մատուց | օծ, էօծ | հեղ, եհեղ |
| աղացաք | սիրեցաք | մատուցաք | օծաք | հեղաք |
| աղացիք,-էք | սիրեցիք,-էք | մատուցիք,-էք | օծիք,-էք | հեղիք,-էք |
| աղացին | սիրեցին | մատուցին | օծին | հեղին |

Ապառնի Բ.

| | | | | |
|---------|-----------|-----------|--------|---------|
| աղացից | սիրեցից | մատուցից | օծից | հեղից |
| աղացես | սիրեսցես | մատուցես | օծցես | հեղցես |
| աղացէ | սիրեսցէ | մատուցէ | օծցէ | հեղցէ |
| աղացուք | սիրեսցուք | մատուցուք | օծցուք | հեղցուք |
| աղասչիք | սիրեսչիք | մատուսչիք | օծչիք | հեղչիք |
| աղացին | սիրեսցին | մատուցին | օծցին | հեղցին |

Հ ր ա մ ա յ ա կ ա Գ

Ներկայ

| | | | | |
|---------|----------|-----------|-------|--------|
| աղա՛ | սիրեա՛ | մատո՛ | օ՛ծ | հե՛ղ |
| աղացե՛ք | սիրեցե՛ք | մատուցե՛ք | օծե՛ք | հեղե՛ք |

Ապառնի Բ.

| | | | | |
|----------|------------|-------------|---------|----------|
| աղասչի՛ր | սիրեսչի՛ր | մատուսչի՛ր | օծչի՛ր | հեղչի՛ր |
| աղասչի՛ք | սիրեսսչի՛ք | մատուսսչի՛ք | օծսչի՛ք | հեղսչի՛ք |

Անցեալ դերբայ

| | | | | |
|---------|----------|-----------|-------|--------|
| աղացեալ | սիրեցեալ | մատուցեալ | օծեալ | հեղեալ |
| | (սիրեալ) | | | |

ԲՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

2. ԿՐԱԽՈՐԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ

5. ԽՈՆՆ ԽՈՆԱՐՀՄ.

Ս ա հ մ ա Գ ա կ ա Գ

զոհանամ մերձենամ խօսիմ ուսանիմ փախչիմ

Անցեալ կատարեալ

| | | | | |
|------------|-------------|------------|----------|-----------|
| զոհացայ | մերձեցայ | խօսեցայ | ուսայ | փախեայ |
| զոհացար | մերձեցար | խօսեցար | ուսար | փախեար |
| զոհացաւ | մերձեցաւ | խօսեցաւ | ուսաւ | փախեաւ |
| զոհացաք | մերձեցաք | խօսեցաք | ուսաք | փախեաք |
| {զոհացայք, | {մերձեցայք, | {խօսեցայք, | {ուսայք, | {փախեայք, |
| {-արուք | {-արուք | {-արուք | {-արուք | {-արուք |
| զոհացան | մերձեցան | խօսեցան | ուսան | փախեան |

Ապառնի Բ.

| | | | | |
|----------|-----------|----------|---------|----------|
| զոհացայց | մերձեցայց | խօսեցայց | ուսայց | փախեայց |
| զոհացիս | մերձեցիս | խօսեցիս | ուսցիս | փախիցես |
| զոհացի | մերձեցի | խօսեցի | ուսցի | փախիցէ |
| զոհացուք | մերձեցուք | խօսեցուք | ուսցուք | փախիցուք |
| զոհասչիք | մերձեսչիք | խօսեսչիք | ուսչիք | փախիչիք |
| զոհացին | մերձեցին | խօսեցին | ուսցին | փախիցին |

Հ ր ա մ ա յ ա կ ա Գ

Ներկայ

| | | | | |
|-------------|--------------|-------------|-----------|------------|
| զոհացի՛ր | մերձեցի՛ր | խօսեա՛ց | ուսի՛ր | փախի՛ր |
| {զոհացայ՛ք, | {մերձեցայ՛ք, | {խօսեցայ՛ք, | {ուսայ՛ք, | {փախեայ՛ք, |
| {-արուք | {-արուք | {-արուք | {-արուք | {-արուք |

Ապառնի Բ.

| | | | | |
|-----------|-------------|------------|----------|-----------|
| զոհասչի՛ր | մերձեսչի՛ր | խօսեսչի՛ր | ուսչի՛ր | փախիչի՛ր |
| զոհասչի՛ք | մերձեսսչի՛ք | խօսեսսչի՛ք | ուսսչի՛ք | փախիսչի՛ք |

Անցեալ դերբայ

| | | | | |
|----------|-----------|----------|--------|-----------|
| զոհացեալ | մերձեցեալ | խօսեցեալ | ուսեալ | փախուցեալ |
| | | (խօսեալ) | | |

Ս ա հ մ ա ց ա կ ա ց

Ներկայ
խաղամ
խաղաս
խաղայ
խաղամբ
խաղայք
խաղան
Անցեալ անկատար
խաղայի
խաղայիր
խաղայր
խաղայաք
խաղայիք
խաղային
Ապառնի Ա. (Ստոր.)
խաղայցեմ
խաղայցես
խաղայցէ
խաղայցեմք
խաղայցէք, խաղայջիք
խաղայցեն

Անցեալ կատարեալ
խաղացի
խաղացեր
խաղաց
խաղացօք
խաղացիք, խաղացէք
խաղացին
Ապառնի Բ.
խաղացից
խաղացես
խաղացէ
խաղացցօք
խաղացիք
խաղացեն

Հ ր ա մ ա յ ա կ ա ց

Արգել. ներկայ
մի խաղար
մի խաղայք
Ապառնի Ա.
խաղայջիր
խաղայջիք

Ներկայ
խաղս
խաղացէք
Ապառնի Բ.
խաղասջիր
խաղասջիք

Վ ե ր ք ա յ ց ե ր

Անորոշ
խաղալ
Ապառնի
խաղալոց

Անցեալ
խաղացեալ

ԿՐԱՒՈՐԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

17. Գրաբարում առանձին կրաւորական բայեր չկան ինչպէս աշխարհաբարում, այլ կայ միայն կրաւորական խոնարհում, որ կազմւում է լծորդի կամ վերջաւորութեան շրջումով այսպէս. ա, Հծորդի ժամանակներում՝ ե լծորդն ունեցող անցողական բայերի այս ե լծորդը, (ե, է ձայնաւորը վերջին վանկերի մէջ) փոխւում է ի լծորդի և բայն ստանում է կրաւորական իմաստ. օրինակ՝ աղայցեմ, մերկանայցեմ, սիրեմ, սիրիցեմ, մի սիրեր, մի սիրէք, սիրել կրաւորական իմաստով լինում են՝ աղայցիմ, մերկանայցիմ, սիրիմ, սիրիցիմ, մի սիրիր, մի սիրիք, սիրիլ, — նմանապէս և միւս դէմքերը (Անց. անկատ. եզ. 3-րդ դէմքի մասին տես ներքեւ՝ ծան. 1, ք):

Ա, Բնի ժամանակներում ներգործակերպ խոնարհուող անցողական բայերը խոնարհուելով կրաւորակերպ ստանում են կրաւորական իմաստ, այսպէս՝ պարզ ամ վերջացածները խոնարհուում են ինչպէս անամ վերջացածները, պարզ եմ՝ ինչպէս իմ վերջացածները, իսկ անեմ և պարզ ում՝ ինչպէս անիմ վերջացածները: Օրինակ՝ աղացի, սիրեցի, մատուցի, օծի, հեղի կրաւոր

րական իմաստով լինում են՝ աղացայ, սիրեցայ, մատուցայ, օծայ, հեղայ,—նմանապէս և մւս գէմքերն ու ժամանակները:

գ, Կան անցողական բայեր և ժամանակներ, որոնք խոնարհման այս շրջումն ևս չեն կրում. այլ անփոփոխ միեւնոյն ձևով մնալով՝ գործ են ածւում հասարակ իմաստով (= ընդհանուր իմաստով), այսինքն թէ իբրև անցողական և թէ իբրև անանցողական. մտքից և կիրառութիւնից միայն պիտի հասկացուի դրանց ներգործական կամ կրաւորական լինելը: Օրինակ՝ սկսանիմ, գողանամ, հեղում կարող են նշանակել թէ սկսել, գողանալ, թափել եւ թէ սկսուել, գողացուել, թափուել:

Ծան. 1. Լծորդի ժամանակների համար պէտք է իմանալ.

ա, Ամ լծորդի ժամանակները հասարակ են, բացի Սահմ. առաջին ապառնուց (Ստոր.), որի այցեմ, այցես, այցէ կըն. ձևը դառնում է՝ այցիմ, այցիս, այցի:

բ, Եւ լծորդի ժամանակները փոխուում են իմ լծորդի, օրինակ՝ ճանաչեմ, ճանաչես կըն. դառնում են՝ ճանաչիմ, ճանաչիս, ճանաչի կըն: Միայն Սահմ. անց. անկատարը հասարակ ձևով է մնում՝ ճանաչէի, ճանաչէիր, ճանաչէր կըն.—ճանաչում էի, ճանաչում էիր, ճանաչում էր, կամ ճանաչուում էի, ճանաչուում էիր, ճանաչուում էր: Այս ժամանակի եզակի 3-րդ դէմքը կարող է իւր վերջաւորութեամբ ևս կրաւորական ունենալ՝ ճանաչիր,

ճառիւր, ասիւր, կոչիւր, գործիւր, հատանիւր, տեսանիւր.

գ, Իմ, ում լծորդների ժամանակները հասարակ իմաստ ունին: Միայն պարզ իմ վերջացած բայերից մի քանիսը, ինչպէս՝ համարիմ, խոստովանիմ, դատիմ ունին նաև ե լծորդով ձևեր՝ համարեմ, խոստովանեմ, դատեմ: Սրանց եւ լծորդով ձևերը միայն ներգործական իմաստով են գործածւում, իսկ իմ լծորդով ձևերը թէ ներգործական և թէ կրաւորական իմաստով: Անց. անկ. իւր ձևը միայն կրաւորական է:

Ծան. 2. Բնի ժամանակների համար պէտք է իմանալ.

ա, Անամ, իմ, անիմ վերջացած անցողական բայերի բնի ժամանակները հասարակ իմաստ ունին. ինչպէս՝ գողացաւ, խօսեցաւ, ծնաւ—գողացաւ, խօսեց, ծնեց կամ գողացուեց, խօսուեց, ծնուեց:

բ, Ներգործակերպ խոնարհուող անցողական բայերի չքամ. երկրորդ ապառնին, Սահմ. անց. կատարելայի յոյն. 1-ին դէմքը, երկրորդ ապառնու յոյն. 1-ին և 2-րդ դէմքերը (ցուր, ջիւր վերջաւորութեամբ) հասարակ իմաստ ունին. բայց այս վերջին դէմքերը ներգործականի մէջ ունին նաև ցեմք, ցեք վերջաւորութիւնները, որոնք ցիմք, ցիք ձևով կրաւորականի են վերածուում:

գ, Անցողական բայերի կրաւորական ձևը երբևէմ գործածուելով անդրադարձ կամ փոխադարձ նշանակութեամբ պահում է իւր ներգործական իմաստը, օրինակ՝ գօտի ընդ մէջ իւր ածաւ (փոխ. էած): Բաժանեցան (փոխ. բաժանեցին) զճանդերձս իմ յինքեանս:

դ, Պատճառական բայերի կրաւորականը ընդհանրապէս քիչ է գործածւում. նոյն իմաստով բանում են, ինչպէս և աշխարհաբարում, սովորաբար համապատասխան չեղոք բայերը. օրինակ՝ Մասեաւ (փոխանակ՝ մատուցաւ) ի վերայ նորա պատարագ:

Ե, Երբեմն կրաւորակերպ խոնարհուող հասարակ բայերն անցողական իմաստով ունենում են ներգործակերպ ձև, ինչպէս՝ ծնանի=ծնում է, ծնւում է. Անցկատ. ունի սովորաբար ծնայց, ծնցիս, ծնցի, ծընցուք, ծնցիք, ծնցին, բայց կայ ներգործական իմաստով նաև՝ ծնցես, ծնցէ, ծնցեն: (Տես վերևը ծան. 1, 9):

Ման. 3. Իմ լծորդն ունեցող անցողական բայերը, ինչպէս՝ խօսիմ, սկսանիմ, որովհետեւ թէ՛ լծորդի և թէ՛ բնի բոլոր ժամանակներում հասարակ իմաստ ունին, կոչւում են հասարակ բայ:

18. Գրաբարում կայ կրաւորականի համար և բաղադրեալ խոնարհում: որ գործ է ածւում աւելի հասարակ բայերի և ժամանակների համար: Բաղադրեալ կրաւորականը կազմւում է անցեալ դերբայով, որ անփոփոխ է մնում, և լինիմ բայով, որ խոնարհւում է: Օրինակ՝ մոռացեալ լինիմ, մոռացեալ լինիս, մոռացեալ լինի ելն. մոռացեալ լինէի, մոռացեալ եղէ ելն. որ նշանակում են՝ մոռացւում եմ, մոռացւում ես, մոռացւում է ելն. մոռացւում էի, մոռացուեցայ ելն:

Գիտեմ՝ բայը միայն բաղադրեալ ձևով կրաւորական ունի՝ գիտացեալ լինել:

Ման. Բաղադրեալ կրաւորական խոնարհումը, որ յատուկ է և ուրիշ լեզուների, միջին դարերում հետզհետէ վերացւում է, որովհետեւ լիցիւմ բայով բաղադրեալ ձևը՝ մոռացեալ լինել՝ միայն կրաւորական իմաստ չունի, այլ նոյն իսկ հին գրաբարում գործ է ածւում նաև ներգործական իմաստով իբրև մոռացած լինել. ուստի մոռացեալ լիցիւմ նշանակում է թէ մոռացւում եմ և թէ մոռացած եմ լինում, մոռացած լինիմ, մոռացած կը լինիմ: Այս երկդիմութեան պատճառով հասարակ ժամանակների համար, հաւանօրէն բարբառներից օգտուելով, գործածութեան մէջ են մըտցնում կրաւորական խոնարհումներ, որ յատուկ չեն դասական գրաբարին: Օրինակ՝ բանամ, բանիմ. թանամ, թանիմ. բառնամ, բառնիմ. լուանամ, լուանիմ. մոռանամ, մոռանիմ. ստանամ, ստացանիմ. տամ, տուիմ. լնում, լնանիմ, լնիմ. ընթեանում, ընթերցանիմ. արգելում, արգելանիմ կլն:

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

19. Բոլոր անկանոն բայերի լծորդի ժամանակները կանոնաւորապէս այս կամ այն լծորդի ձևով են խոնարհւում: անկանոն են միայն բնի ժամանակները: Անկանոն բայերը բաժանւում են մի քանի խմբի: Ներքևում դրուած են այդ

բայերի ժամանակների համար մեծ մասամբ մի կամ մի քանի դէմքեր միայն. միւս ձեւերը դրանցով գտնելը հեշտ է:

20. Առաջին խումբ: Խոնարհում են իբրև չիմ-նում վերջացած բայեր:

Մեղանցեմ, մեղայ, մեղայց (մեղեցես, մեղիցէ ելն.), մեղիր, մեղիջիր, մեղուցեալ:—Խոնարհում է երբեմն և մեղանչեցի, մեղանչեցից ելն. ձևով:

Ճանաչեմ, ծանեայ, ծանեայց (ծանիցես, ծանիցէ ելն.), ծանի, ծանիջիր, ծանուցեալ:

Անկանոնութիւնը միայն Ե-ի ծ փոխուելու մէջ է: Պատճառականն է ճանուցանեմ, որի կրաւորական Սահմ. անց. կատարեալն ու երկրորդ ապառնին՝ ծանուցայ, ծանուցար ելն., ծանուցայց ելն. գործ են անում նաև կրաւորական նանաչիմ բայի իմաստով. բայց կան նաև ծանեայց, ծանիցիս, ծանիցի, ծանիցուք, ծանիջիք, ծանիցին ձևերը կրաւորական իմաստով:

Եղանիմ, Սահմ. անց. կատ. եղէ կամ եղեայ, եղեր, եղև. եղաք կամ եղեաք, եղէք կամ եղեայք, եղեն. Ապառնի Բ. եղէց կամ եղիցիմ, եղիցիս կամ եղիցես, եղիցի կամ եղիցէ, եղիցուք կամ եղիցիմք. եղիջիք, եղիցին կամ եղիցեն. Հրամ. ներկայ եզ. շունի. յոգն. եղերուք: Ապառնի Բ. եղիջիր, եղիջիք: Անց. դերք. եղեալ:

Լինիմ, Սահմ. անց. կատ. չունի. Ապառնի Բ. լիցիմ, լիցիս, լիցի, լիցուք կամ լիցիմք, լիջիք կամ լիցիք, լիցին: Հրամ. լեր, լերուք. լիջիր, լիջիք: Անց. դերք. լեալ կամ լիեալ:

Եղանիմ, լինիմ, որ մի և նոյն բայն են, պակասաւոր են: Դրանց իմաստով գործ են անում նաև առնի, գործի կրաւորականները:

Ափածանիմ, պրծանիմ, գառածիմ-գառածանիմ, ծիւրիմ-ծիւրանիմ կանոնաւոր՝ սփածայ, պրծայ, զառածայ, ծիւրեցայ ձևերի հետ ունին նաև՝ սփածեայ, պրծեայ, զառածեայ, ծիւրեայ:

Անկանիմ, կանոնաւոր ձևի հետ ունի Ապառնի Բ. նաև՝ անկեայց. իսկ յոգն. Հրամ. միայն՝ անկերուք:

Ագանիմ կանոնաւոր ձևի հետ ունի յոգն. Հրամ. նաև՝ ագերուք: Անց. դերք. ագեալ ձևի հետ և ագուցեալ:

Յանցանեմ խոնարհում է ամբողջապէս խառն նայ խոնարհման ձևով՝ յանցեայ, յանցեայց (յանցիցես ելն.), յանցիր, յանցերուք, յանցիջիր, յանցուցեալ:

Չանցանեմ, զառանցանեմ, ներկանեմ. կանոնաւոր զանցի, զառանցի ելն. ձևերի հետ ունին նաև զանցեայ, զանցեար ելն, զառանցեայ ելն, ներկեալ:

Յառնեմ (յարնչիմ) խոնարհուում է ամբողջապէս խառն եւայ խոնարհման ձևով՝ յարեայ, յարեայց (յարիցէ ելն.), յարիջիր, յարուցեալ: Հրամ. կանոնաւոր յարիր, յարեայք, յարերոք ձևերի հետ ունի և արի, արիք:

Յառում խոնարհուում է կրաւորակերպ՝ յառայ, յառայց, յառիր. ունի նաև յառեայ, յառեայց կամ յառիցեմ, յառուցեալ ձևերը: Կան և յառեմ, կրաւոր. յառիմ՝ բայերը, որ կանոնաւոր են:

Երդնում, երդուայ, երդուար ևլն. երդուայց կամ երդուիցեմ (երդուիցիմ), երդուիցես, երդուիցէ ևլն: Երդուիր, երդուարոք, երդուիջիր, երդուեալ: Կայ և երդմնեմ՝ բայը, որից պատճառական երդմնեցուցանեմ:

21. Երկուոր խումբ: Խոնարհուում են իբրև անեմ, անիմ՝ կամ պարզ ում՝ վերջացած բայեր: Հանեմ, հանի, հան:—Կայ կրաւորական հանանիմ՝ բայը: Իսկ հանում (հենում, հինում = հինել) ունի հասարակ իմաստով Անց. կատ. հանայ, հինայ ևլն. Հրամ. հանիր:

Ածեմ, ածի, ած:—Այս բայի ածանեմ ձևից կազմուած են՝ տարածանեմ = տարածեմ. Անց. կատ. տարածեցի ևլն. զառածանեմ, զա-

ռածեմ. Անց. կատ. զառածի, Ապառնի Բ. զառածից. Հրամ. զառածեմ:

Բերեմ, բերի, բեր:—Այսպէս խոնարհուում է և համբերեմ, համբերի, համբերեր, համբեր ևլն, —որ սակայն ունի կանոնաւոր ձևեր՝ համբերեցի, համբերեցեր ևլն. համբերեսցէ, համբերես ևլն:

Հեղուսեմ, հեղուսի, հեղոյս:

Նսսիմ, նստայ, նստար, նստաւ ևլն. նըստայց, նստցիս, նստցի ևլն. նիտ, նստարոք, նստեալ:—Այս բայի սոսկածանց ձևից կազմուած կայ զնստանիմ-զնստիմ՝ բայը. Անց. կատ. զնստայ:

Չգածիմ-զգածնում, հագածիմ ունին՝ զգածայ, զգածիր, զգածեալ. հագածայ ևլն:

Դիպիմ, սովորական ձևն է կանոնաւոր՝ դիպեցայ, դիպեցար, դիպեցաւ ևլն. դիպեցայց, դիպեսցիս, դիպեսցի ևլն. բայց Անց. կատ. ունի և դիպայ ձևը:

Առնում, առի, առ: Ենթ. դերբ. առող:

Կայում, կայնում, կանոնաւոր կալի, կալեր, կալ կամ եկալ ևլն. ձևերի հետ ունի և հետեւեալ ձևերը, որ աւելի գործածական են՝ կալայ, կալար, կալաւ. կալար, կալայք կամ կալարոք, կալան: Կալայց, կալցիս, կալցի. կալցուք, կալջիք, կալցին (այլ և կալցեն): Հրմ. կալ

կամ կն, կալէք կամ կարնյք, կալարնւք: Անց-
դերը. կալեալ:—Այսպէս խոնարհուած են և ըն-
կալում, ընկալնում բայերը. Անց. կատ. ընկա-
լայ և ըն: Ասլ. Բ. ընկալայց և ըն. Հրամ. ընկնլ,
ընկալնյք կամ ընկալարնւք:

Կլանեմ-կլնում, կանոնաւոր Անց. կատ.
կլի, կլեր, կուլ կամ եկուլ և ըն. ձեերի հետ
ունի և կրաւորակերպ՝ կլայ, կլար, կլաւ և ըն:
Ասլ. Բ. կլայց, կլցիս, կլցի և ըն. ձեերը, որ սա-
կայն աւելի կրաւորական իմաստով են գործած-
ուում:—Այսպէս խոնարհուած է և ընկլնում.—
ընկլի, ընկլից, ընկլցես, ընկլցէ կամ ընկլայ,
ընկլայց և ըն: Այս բայի ձեերի տեղ գործ են
ածուում աւելի պատճառական ընկլուզանեմ
բայի ձեերը՝ ընկլուզի, ընկլուզից, ընկլն և ըն:

Հաւկանեմ, հարում ունի միայն առանց
կ բաղաձայնի՝ հարի, հարեր, հար կամ եհար
և ըն. հարից, հարցես և ըն. հար, հարէք, հարեալ:

22. Երրորդ խումբ: Խոնարհուած են իբրև
պարզ ամ վերջացած բայեր:

Ասեմ, ասացի, ասն. ասացից, ասացես և ըն:

Գիտեմ, գիտացի. Հրամ. գիտեան:

Կարեմ, (=կարողանալ), կարացի, կարացեալ:

Մարքեմ, մարթացի, մարթացեալ. Մար-

թեմ բայն ունի և մարթանամ՝ ձեք, որից Անց.
կատ. մարթացայ և ըն:

Մերկեմ, մերկացի, մերկացեր, մերկաց
կամ մերկեաց և ըն: Հրամ. մերկեան (կրաւոր.
մերկեաց): Մերկեմ բայն ունի և մերկանամ՝
ձեք, որ ունի՝ մերկացայ, մերկացայց, մերկա-
ցիր, մերկացարնւք:

23. Չորրորդ խումբ: Վերջանում են պարզ
ամ ձեով, բայց ընի ձեերից մի քանիսը խոնարհ-
ուում են կրաւորակերպ, իբրև թէ վերջանային
անամ՝ ձեով: Ներքեում առնուած են միայն
անկանոն կազմութեան ժամանակները. չի շուած-
ները կանոնաւոր են:

Յուսամ, Սահմ. անց. կատ. յուսացայ, յու-
սացար, յուսացաւ և ըն: Ապառնի Բ. յուսացայց,
յուսացիս և ըն: Հրամ. յոգն. յուսացարնւք:

Լողամ, Սահմ. անց. կատ. լողացայ:

Ձանամ, գրամ. Սահմ. անց. կատ. կանո-
նաւոր ջանացի, գթացի և ըն. ձեերի հետ ունին
և ջանացայ, գթացայ և ըն: Ասլ. Բ. ջանացայց,
գթացայց և ըն. Հրամ. կանոնաւոր ջանան, գթան
ձեի հետ և ջանացիր, գթացիր. յոգն. ջանա-
ցարնւք, գթացարնւք:

Իողամ, Սահմ. անց. կատ. գողացի և ըն.

կանոնաւոր ձևի հետ և զողացայ ելն: Հրամ: յոգն. զողացարնք:

Ծփամ, դլամ, գոռամ, խանդամ, սուրամ, ոռնամ, եռամ, գեռամ, սպառնամ, ցնծամ, զգամ Սահմ: անց. կատ. ունին և ներգործակերպ և կրաւորակերպ:

Ուրամ, ողբամ, հոգամ, խոկամ անցողական իմաստով խոնարհուում են թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ:

Ծան. Ամ, անամ վերջացած կրկնածի բայերի (§ 4. 4) բնի ժամանակները երբեմն կրկին ձևով թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ են լինում. երբեմն էլ ժամանակներից մէկը կամ մյուսը միայն այս կամ այն ձևով են լինում. օրինակ՝ ցանկամ, ցանկանամ. ունի Անց. կատ. ցանկացայ, Ապ. Բ. ցանկացայց. Հրամ. ցանկան կամ ցանկացիր: Նոյն ձևով՝ փութամ, փութանամ, փութացայ, փութացայց, փութան կամ փութացիր. սոսկամ, սոսկանամ, սոսկացայ, սոսկան կամ սոսկացիր. տեղամ, տեղանամ, տեղացայ, տեղան կամ տեղացիր: Իսկ զոլամ լինում է՝ զոլացի, զոլան. զոլանամ՝ զոլացայ, զոլացիր ելն:

24. Հինգերորդ խումբ: Խոնարհուում են իբրև պարզ ամ, եմ՝ վերջացած բայեր:

Լուանամ, լուացայ, լուացար ևլն. լուացայց, լուացիս ևլն. ձևերի հետ ունին նաև լուացի, լուացեր, լուաց ևլն. լուացից, լուացես ևլն: Հրամ: լուան, լուացէք:

Մոռանամ, րնթանամ, իմանամ, Հրամ: ունին կանոնաւոր մնացիր, ընթացիր, իմացիր ձևերի հետ և մոռան, ընթան կամ ընթանց. իման կամ իմանց:

Ընկենում, ընկեցի, ընկեցեր, ընկեսց կամ ընկէց (ընկեց). ընկեցաք, ընկեցիք, ընկեցին. ընկեցից, ընկեսցես, ընկեսցէ ևլն: Հրամ: ընկես կամ ընկեսց, ընկեցէք, ընկեսջիր: Անց. դերը. ընկեցեալ:

25. Վեցերորդ խումբ: Բնի մէջ ստանում են ց կամ ծ բաղաձայնը, որ պահուում է ապառնի ժամանակների մէջ ց, ջ տառերից առաջ և Հրամայականի մէջ:

Բանամ, քանամ, Սահմ: անց. կատ. բացի, բացեր, բաց կամ եբաց. բացաք, բացիք, բացին: Ապ. Բ. բացից, բացցես, բացցէ, բացցուք, բացջիք, բացցեն: Հրամ: բանց, բացէք, բացջիր: Անց. դերը. բացեալ: Նոյնպէս՝ թացի. թացից, թացցես, թացցէ ևլն. թանց, թացէք. թացեալ:

Կամ, կացի, կացեր, կաց կամ եկաց, կացաք, կացիք, կացին. կացից, կացցես, կացցէ, կացցուք, կացջիք, կացցեն: Կանց, կացէք, կացջիր, կացեալ:

Կեամ, կեցի, կեցեր, կեսց, կեցաք, կեցիք, կեցին. կեցից, կեցցես, կեցցէք, կեցցուք, կեցջիր, կեցեալ:

Ղեք, կեցցեն: կենց, կեցէք, կեցջիր, կեցեալ: Ապառնի Ա. (Ստոր.) կեայցեմ կամ կեցեմ, կեայցես, կեայցէ եւն:

Լամ, լացի, լացեր, լաց եւն: Լացից, լացցես, լայցէ եւն: Լաց, լացէք, լացջիր, լացեալ:

Ընթեռնում, ընթերցայ, ընթերցար, ընթերցաւ եւն: Ընթերցայց, ընթերցցիս (այլ և ընթերցցես), ընթերցցի եւն: Ընթերցիր, ընթերցեալ, ընթերցող:

Յենում, յեցայ, յեցար, յեցաւ եւն. յեցայց, յեցցիս, յեցցի եւն. յեցիր, յեցեալ:

Չգեռում, զգեցայ, զգեցար, զգեցաւ եւն. զգեցայց, զգեցցիս, զգեցցի եւն. զգեցիր, զգեցեալ:

Լնում, լցի, լցեր, լից կամ ելից. լցաք, լցիք, լցին. լցից, լցցես, լցցէ եւն: Հրամ: լից, լցէք, լցջիր: Անց դերը. լցեալ, ենթ. դերը. լցող:

Խնում, խցի, խցեր, խից կամ եխից եւն. խցից, խցցես, խցցէ եւն: Հրամ: խից, խցէք. Անց. դերը. խցեալ:

Բառնամ, բարձի, բարձեր, բարձ կամ եբարձ. բարձաք, բարձէք, բարձին: Բարձից, բարձցես, բարձցէ եւն: Բարձ, բարձէք, բարձջիր. բարձեալ, բարձող: Այսպէս խոնարհուում է հաւրառնամ (բարձրացնել), համբարձի, համբար-

ձից, համբարձ եւն: Կրաւորականը՝ համբարձայ, համբարձայց եւն. նշանակում է քարծրանալ:

Դառնամ, դարձայ, դարձար, դարձաւ եւն. Դարձայց, դարձցիս, դարձցի եւն. Դարձիր կամ դարձ, դարձեալ:

26. Եօթներորդ խումբ: Բնի մէջ ստանում են ը բաղաձայնը:

Առնեմ, բուն՝ արար: Սահմ: անց. կատ. արարի, արարեր, արար, արարաք, արարիք, արարին: Ապ. Բ. արարից, արասցես, արասցէ, արասցուք, արասջիք, արասցեն: Հրամ: արա, արարէք, արասջիր: Անց. դերը. արարեալ: Ենթ. դերը. արարող: Կրաւորականը կանոնաւոր կազմութիւն ունի՝ արարայ, արարար եւն. արարայց, արասցիս, արասցի եւն: Հրամ: չունի:

Դնեմ, բուն՝ դիր Սահմ: անց. կատ. եդի, եդիր (եդեր), եդ. եդաք, եդիք (եդէք), եդին: Ապ. Բ. եդից (գիցեմ), գիցես, գիցէ. գիցուք (գիցեմք), գիջիք (գիցէք), գիցեն: Հրամ: գիր, գիք, գիջիր: Անց. դերը. եդեալ: Ենթ. դերը. դնող, եդող: Կրաւորականը կանոնաւոր կազմութիւն ունի՝ եդայ, եդար, եդաւ, եդաք, եդայք, եդան: Եդայց, գիցիս, գիցի, գիցուք, գիջիք, գիցին: Հրամ: եդ. չունի. յոգն. եդարուք:

Տանիմ, բուն՝ տար: Սահմ: անց. կատ.

տարայ, տարար, տարաւ. տարաք, տարայք, տա-
րան. Ապ. Բ. տարայց, տարցիս (տարցես),
տարցի (տարցէ). տարցուք, տարջիք, տարցին
(տարցեն): Հրամ. տար, տարայք: Անց. դերք.
տարեալ:

Լսեմ, բուն՝ լու, լուր: Սահմ. անց. կատ.
լուայ, լուար, լուաւ. լուաք, լուայք, լուան:
Ապ. Բ. լուայց, լուիցես, լուիցէ. լուիցուք, լուի-
ջիք, լուիցեն: Հրամ. լուր, լուարուք, լուիջիր:
Անց. դերք. լուեալ: Կրաւորական ունի միայն՝
լուիցիս, լուիցի, լուիցին ձեւերը. միւս ձեւերի
համար գործ է ածուում լսելի լինիմ:—Լսեմ՝ բայի
կանոնաւոր ձեւերը՝ լսեցի, լսեցեր և չն. լսեցից,
լսեցես և չն. լսեան, լսեցէք, և պատճառական՝
լսեցուցանեմ՝ քիչ գործածական են:

Տամ, բուն՝ տու, տուր: Սահմ. անց. կատ.
ետու, ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն:
Ապ. Բ. տաց, տացես, տացէ. տացուք, տաջիք,
տացեն: Հրամ. տուր, տուք, տաջիր: Անց. դերք.
տուեալ. Ծնթ. դերք. տուող: Կրաւոր. տուայ,
տուար, տուաւ. տուաք, տուայք, տուան: Տուայց
կամ տացիմ, տացիս, տացի. տացուք, տաջիք,
տացին: Միւս ձեւերի համար գործ է ածուում
տուեալ լինիմ:

Դամ, բուն՝ եկ: Սահմ. անց. կատ. եկի,

եկիր (եկեր), եկն. եկաք, եկիք (եկէք), եկին:
Ապ. Բ. եկից, եկեսցես, եկեսցէ. եկեսցուք,
եկեսջիք, եկեսցեն: Հրամ. եկ, եկայք, եկեսջիր:
Անց. դերք. եկեալ: Անորոշ դերք. գալ, երբեմն՝
գոլ—Սյս բայի բնի ը յաւելումը մտում է
միայն գաւառական հրամ. եկիւր ձեւի մէջ:

27. Ուրբերոդ խումբ: Բունն ուրիշ արմա-
տից է առնուում. իսկապէս երկու պակասաւոր
բայեր իրար լրացնում են:

Ուսեմ, բուն՝ կեր: Սահմ. անց. կատ. կե-
րայ, կերար, կերաւ. կերաք, կերայք, կերան:
Կայ և քիչ գործածական՝ կերի, կերեր, եկեր.
կերաք, կերիք, կերին: Ապ. Բ. կերայց (կերի-
ցեմ), կերիցես, կերիցէ. կերիցուք, կերիջիք,
կերիցեն: Հրամ. կեր, կերայք (կերէք), կերի-
ջիր: Անց. դերք. կերեալ: Կրաւորականը կանո-
նաւոր է. չունի ապառնի 1-ին դէմք և Հրամ.
գործ է ածուում բաղադրեալ ձեւով՝ կերեալ
լինել բայով: Պատճառական իմաստով գործ է
ածուում կերակրեմ = ուտեցնել, կերցնել:

Երթամ, բուն՝ երթ և չոգ (չոք): Սահմ.
անց. կատ. չոգայ, չոգար, չոգաւ. չոգաք, չո-
գայք, չոգան: Ապ. Բ. երթայց (երթիցեմ), եր-
թիցես, երթիցէ. երթիցուք, երթիջիք, երթի-

ցենս: Հրամ: երթ (կամ չոգ), երթայք, երթի-
ջիր: Անց. դերք. երթեալ:

Ըմպեմ, բուն՝ արք: Սահմ: անց. կատ. ար-
բի, արբեր, արբ կամ էարբ. արբաբ, արբիբ
(արբէք), արբին: Ապ. Բ. արբից, արբցես, արբ-
ցէ. արբցուք, արբջիք, արբցենս: Հրամ: արբ,
արբէք, արբջիր: Անց. դերք. արբեալ: Կրաւորա-
կանը կանոնաւոր՝ արբայ կէն. արբայց, արբցիս
և շն: Հրամ: յոգն. արբարոք. եզ. չունի. գործ
է ածուում բազադրեալ ձևը՝ արբեալ լեր:—
Արք արմատից կազմուած է արբիմ կամ արբե-
նամ կանոնաւոր բայը, որ նշանակում է հար-
բել, արբենալ:—Ըմպեմ՝ բայի բնի ձևերն ևս
կան՝ ըմպեցի, ըմպեցից կէն. ըմպեան, ըմպեցէք,
ըմպեալ, որոնք ասկայն գործածական չեն:

Պ Ա Կ Ա Ս Ա Ի Ո Ր Բ Ա Յ Ե Ր

28. Ունիմ, խոնարհուում է միայն լծորդի
ժամանակներով՝ Սահմ: ներկ. ունիմ, ունիս, ունի
և շն: Անց. անկ. ունէի, ունէիր, ունէր կէն:
Ապ. Ա. ունիցիմ, ունիցիս կէն: Հրամ: ունիջիր,
ունիջիրք. Արգել. մի ունիր, մի ունիրք. Անորոշ
դերք. ունել. Ապ. դերք. ունելոց. Ենթ. դերք.

ունող: Պակասը լրանում է սովորաբար կաշնում՝
ամբողջական բայով և ապա նայելով իմաստին՝
ըմբռնեմ, առնում, տիրեմ, իշխեմ, բռնեմ, բուռն
հարկանեմ, պահեմ, արգելում, ինչպէս և ստա-
նամ, ժառանգեմ, բարձեալ բերեմ, կրեմ և շն.
բայերով: Նոյն ձևով խոնարհուում է ընդունիմ՝
բայը, որի պակասը լրանում է ընկաշնում՝ ամ-
բողջական բայով:

Պարսիմ, Սահմ: ներկ. պարտիմ, պարտիս,
պարտի. պարտիմք, պարտիք, պարտին: Անց.
անկ. պարտէի, պարտէիր, պարտէր. պարտէաք,
պարտէիրք, պարտէին: Ապ. Ա. պարտիցիմ, պար-
տիցիս, պարտիցի. պարտիցիմք, պարտիցիք,
պարտիցին: Անց. կատ. պարտեցայ, պարտե-
ցաւ: Ապ. Բ. պարտեցայց, պարտեցի: Անորոշ
դերք. պարտել: Անց. դերք. պարտեցեալ: Բնի
ժամանակները քիչ են պատահում: Պակասը լրա-
նում է՝ պարտ լինիմ, պարտական լինիմ, պար-
տաւոր լինիմ, պարտաւորիմ բայերով: Չպիտի
շփոթել պարտեմ = յաղթեմ բայի հետ:

Պիտի, պիտէր, պիտիցի, պիտեցաւ, պի-
տեցի, պիտեցեալ: Պակասը լրանում է՝ պար-
տիմ, պիտոյ լինիմ բայերով:

Մարթի, մարթէր, մարթիցի: Պակասը լրա-
նում է՝ մարթ է, մարթանամ, մարթեմ բայերով:

Գողցես, գողցէ, գողցուք, գողջիք, գողցեն: Հրամ. գոգ, գողէք: Անորոշ դերք. գողել: Պակասը լրանում է ասեմ՝ բայով, որի հետ երբեմն և կրկնուած գործ է ածուում. ինչպէս՝ Ասացէք ցարքայ, գողէք: Ասիցեն և գողցեն:

Դում, Սահմ. ներկ. գում, գոս, գոյ. գումք, գոյք (գոք), գոն, Անց. անկ. գոյի, գոյիր, գոյր. գոյաք, գոյիք, գոյին: Ապ. Ա. (գուցեմ, գուցես), գուցէ, (գուցեմք, գուցէք), գուցեն: Անրշ. դերք. գոր: Պակասը լրանում է եղանիմ: լինիմ՝ բայերով, որոնք նոյնպէս պակասաւոր են, և եմ, կամ՝ բայերով:

Չիք=ոչ գոյ, ունի միայն այս ձևը, ինչպէս և սրա դրականը՝ իք (=գոյ, կայ, է), որ քիչ է պատահում:

Եմ, Սահմ. ներկ. եմ, ես, է, եմք, էք, են: Անց. անկ. էի, էիր, էր. էաք, էիք, էին: Հրամ. եր, էք կամ երուք: Ապառնի՝ իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն: Անոր. դերք. ել, Ապ. դերք. ելոց: Անց. դերք. եալ: Պակասը լրանում է լինիմ: եղանիմ: կամ՝ բայերի ձևերով.— Հրամայականը գործ է ածուում միայն ողջ բառի հետ, ինչպէս՝ ողջ եր, ողջ էք, ողջ երուք=ողջ լեր, ողջ լերուք: Դերբայներն անգործածական են:

Ծան. 1. Եմ բայը, սովորաբար չեչտուած, նշանակում է նաև գում, կամ. ուստի և Սահմ. ներկան և անց. անկատարն այս դէպքում աշխարհաբար թարգմանուում են կամ բայով (միւս ժամանակները լինիմ բայով): Օրինակ՝ Եւ էր անդ երամակ մի: Եւ էր ի անդուջն յայնմիկ պարուէդ: Եթէ զիտան ի վայրի, որ այսօր է և վաղիւն ի հնոց արկանի, Աստուած այնպէս զղիցուցանէ, որչափ ևս առուել զձեզ, թերահաւատք: Այր մի էք (=կար) յերուսաղէմ, որոյ անուն էր (=էր) Սիմէոն: Ոչ ոք է յագգի քում, որոյ կոչի անուն Յովնաննէն: Բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի:

Այս իմաստով գործ են ածուում՝ ե որ, են որ=ոմն, ոմանք=աշխ. կայ որ, կան որ, որը... որը. նոյնպէս՝ ե զի, եր զի=ե երբեմն, եր երբեմն, ե ուրեք, եր ուրեք =աշխ. կայ որ, կայ ժամանակ որ, կայ տեղ որ, կամ՝ երբեմն, մերթ: Օր. Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն և ի միտ առնու, և տայ զպտուղ, ե որ վաթսուն, և ե որ երեսուն (=կայ որ... կայ որ... կամ որը... որը...): Կրակ... է զի (=երբեմն, մերթ) շիջանի, և է զի (=երբեմն, մերթ) աճեալ բորբոքի: Է ուրեք (=տեղ կայ, երբեմն), զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է զի (=կայ որ, երբեմն) նորա մեզ յաղթեցին: Պտղոց անբերութիւն եղեալ բազում ժամանակս, էր երբեմն վասն բազում անչափ թօնից անձրևաց, և էր երբեմն վասն խորշակի և խոտվութեան:

Ծան. 2. Եմ, գում, կամ բայերի 3-րդ դէմքերը մի սեռական, երբեմն և տրական ինզորով նշանակուում են ունենալ: Օրինակ՝ Են իմ անդ կղբաբք հինգ (=Ես

այնտեղ հինգ եզրայր ունիմ): Ոչ գոյր և ոցա արդեակ
(=Նրանց որդի չկար=նրանք որդի չունենին): Ձիք իմ
այր: Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ: Ոյր իցեն
երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ, ոյր ոչն գուցե. և
ոյր կայցե կերակուր՝ նոյնպէս արատցէ: Ոյր գուցէ՝
տացի նմա և յաւելցի, և ոյր ոչն գուցէ՝ և զոր ունի-
ցին՝ բարձցի ի նմանէ: Սմենեքեան որոց էին հիւանդք
ի պէս պէս ցաւս, բերէին զնոսա առ նաւ Երկու պար-
տապանք էին ուրումն փոխատուի: Ազուխուց որջք
զոն և թռչոց երկնից բոյնք, այլ որդույ մարդոյ ոչ
գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր: Եթէ չիցե՞ ինձ իշխանու-
թիւն յիմաս առնել զինչ և կամիմ: Ձի կայ մեր և քո,
զի եկիր տանջել զմեզ (=ինչ ունինք մենք ու գու,
որ ... կամ ինչ ունիս մեզ հետ, ինչ կայ մեր և քո մէջ):
Եթէ սեռական (կամ տրական) խնդիրն է շեշ-
տում և զրում է, են, եր, էին բայից առջ, եմ բայն
ստանում է յաճախ պատկանել, վերաբերել բայերի
իմաստ և համապատասխան է աշխարհաբարի նոյն դար-
ձումին, միայն աշխարհաբարում սեռականը ն(ը) յօդն
է ընդունում, իսկ զբարբարում անյօդ է մնում: Օրի-
նակ՝ Որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է
այն իմ է (=Սմեն ինչ որ իմն է՝ քոնն է. և ինչ որ
քոնն է, այն իմն է): Ել նա ի մի նաւուցն որ էր Սի-
մոնի (=որ Սիմոնինն էր), Երանի որ հալածեալ իցեն
վասն արդարութեան, զի նոցա է (=նրանցն է) արքա-
յութիւն երկնից:

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

29. Օժանդակ բայերն են՝ 1, եմ, որի Սահմ.
ներկայ, անց, անկատար և ապառնի ժամա-
նակների վրայ դրուում են անցեալ և ապառնի
դերբայները. 2, լինիմ, որի դիմաւոր ձևերի վրայ
դրուում է միայն անցեալ դերբայը:

Անցողական բայերի դերբայները թէ ներք-
գործական և թէ կրաւորական իմաստ ունին,
ուստի եմ բայով բաղադրուած ժամանակներն
ևս կարող են երկու իմաստով էլ առնուել. ինչ-
պէս՝ տեսեալ է նշանակում է թէ տեսել է, թէ
տեսնուել է:

Փան. Եմ բայի ներկայ և անցեալ ժամանակների
տեղ անցեալ դերբայի հետ՝ անանցողական (չեզոք և
կրաւորական) իմաստով գործածուած ժամանակ՝ կա-
րող են զրուել և կամ բայի ձևերը, ինչպէս՝ հասեալ
կամ, գրեալ կայ, պատրաստեալ կայ, եկեալ կայ, եղեալ
կայք. ծածկեալ կան, հաստատեալ կան:

30. Անցեալ դերբայի հետ եմ և լինիմ
բայերի բոլոր դէմքերի տեղ կարող է գործա-
ծուել այդ բայերի եզակի երրորդ դէմքը,
միայն այդ ժամանակ ուղղական հոլովով են-
թակաները փոխուում են սեռական խնդրի.
օրինակ՝ տեսեալ եմ, տեսեալ նս, տեսեալ է,

տեսեալ եմք, տեսեալ էք, տեսեալ են, տեսեալ է արքայ, ձևերի տեղի կարող է ասուել՝ տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա (կամ իւր), տեսեալ է մեր, տեսեալ է ձեր, տեսեալ է նոցա, տեսեալ է արքայի: Նոյնպէս ածեալ լինէի, ածեալ լինէիր, ածեալ լինէր ևլն. ձևերի տեղ կարող է ասուել՝ ածեալ լինէր իմ, ածեալ լինէր քո, ածեալ լինէր նորա: Անցողական բայերի այս կազմութեան բաղադրեալ ժամանակները կրաւորական իմաստ չեն կարող ունենալ. ինչպէս՝ տեսեալ էր քո, ածեալ լինէր քո կը նշանակէ միայն՝ դու տեսել էիր. դու բերած կը լինէիր կամ դու բերած լինէիր:

Ծան. Այս բաղադրեալ ժամանակների կազմութիւնը ծագում է եմ բայի 3-րդ գէմքի սեռական խնդրով գործածութիւնից ունենալ բայի իմաստով. տեսեալ է իմ, տեսեալ է քո ևլն. բառայի նշանակում է ես տեսած ունիմ, դու տեսած ունիս, ինչպէս և կրքինն գործ է ածուում աշխարհաբարում փոխանակ ես տեսել եմ, դու տեսել ես ևլն. ձևերի (Տես § 28. ծան. 2):

31. Եմ բայով բաղադրուած ժամանակներն են.

Ա. Անցեալ դերբայով

Ն եր կ այ

զրեալ եմ
զրեալ ես

զրեալ է իմ
զրեալ է քո

զրեալ է
զրեալ եմք
զրեալ էք
զրեալ են

զրեալ է նորա (իւր)
զրեալ է մեր
զրեալ է ձեր
զրեալ է նոցա(իւրեանց)

Ա. ն ց ե ա լ ա ն կ ա տ ա ր

զրեալ էի
զրեալ էիր
զրեալ էր
զրեալ էաք
զրեալ էիր
զրեալ էին

զրեալ էր իմ
զրեալ էր քո
զրեալ էր նորա
զրեալ էր մեր
զրեալ էր ձեր
զրեալ էր նոցա

Ա. պ ա ո ն ի

զրեալ իցեմ
զրեալ իցես
զրեալ իցէ
զրեալ իցեմք
զրեալ իցէք
զրեալ իցեն

զրեալ իցէ իմ
զրեալ իցէ քո
զրեալ իցէ նորա
զրեալ իցէ մեր
զրեալ իցէ ձեր
զրեալ իցէ նոցա

Բ. Ապառնի դերբայով

Ներկայ

Անց. անկատար

Ապառնի

զրեւոց եմ
զրեւոց ես
զրեւոց է
զրեւոց եմք
զրեւոց էք
զրեւոց են

զրեւոց էի
զրեւոց էիր
զրեւոց էր
զրեւոց էաք
զրեւոց էիր
զրեւոց էին

զրեւոց իցեմ
զրեւոց իցես
զրեւոց իցէ
զրեւոց իցեմք
զրեւոց իցէք
զրեւոց իցեն

32. Հինիմ բայով բաղադրեալ ձևերն ունին երեք տեսակ իմաստ. գրեալ Հինիմ նշանակում է գրում եմ, և ապա՝ գրած եմ լինում, գրուած եմ լինում: Սեռական խնդրով գրեալ լինի իմ նշանակում է միայն գրած եմ լինում:

Ս ա հ մ ա ն կ ա ն
Ներկայ

| | |
|--------------|--------------------------|
| գրեալ լինիմ | գրեալ լինի իմ |
| գրեալ լինիս | գրեալ լինի քո |
| գրեալ լինի | գրեալ լինի նորա (իւր) |
| գրեալ լինիմք | գրեալ լինի մեր |
| գրեալ լինիք | գրեալ լինի ձեր |
| գրեալ լինին | գրեալ լինի նոցա (խրեանց) |

Անցեալ անկատար

| | |
|---------------|--------------------------|
| գրեալ լինէի | գրեալ լինէր իմ |
| գրեալ լինէիր | գրեալ լինէր քո |
| գրեալ լինէր | գրեալ լինէր նորա (իւր) |
| գրեալ լինէաք | գրեալ լինէր մեր |
| գրեալ լինէիք | գրեալ լինէր ձեր |
| գրեալ լինէին: | գրեալ լինէր նոցա(խրեանց) |

Ա պ ա ն ն ի

| | |
|------------------------|--------------------------|
| գրեալ լինիցիմ, լիցիմ | գրեալ լիցի իմ |
| գրեալ լինիցիս, լիցիս | գրեալ լիցի քո |
| գրեալ լինիցի, լիցի | գրեալ լիցի նորա (իւր) |
| գրեալ լինիցիմք, լիցիմք | գրեալ լիցի մեր |
| գրեալ լինիցիք, լիցիք | գրեալ լիցի ձեր |
| գրեալ լինիցին, լիցին | գրեալ լիցի նոցա (խրեանց) |

Անց. կատարեալ

Հրամայական

| | |
|------------|------------------------|
| գրեալ եղէ | գրեալ լըր |
| գրեալ եղեր | գրեալ լինիջիր |
| գրեալ եղև | գրեալ լիջիր |
| գրեալ եղաք | գրեալ լերսւք (եղերսւք) |
| գրեալ եղէք | գրեալ լինիջիք |
| գրեալ եղեն | գրեալ լիջիք |

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

33. Գրարարի Սահմ. անց. կատարեալ, Հրամ. ներկայ և Արգելական ներկայ ժամանակները նոյն իմաստն ու գործածութիւնն ունին, ինչ որ նոյն ժամանակներն աշխարհաբարում. օրինակ՝ գնացի, գնահ, մի գնար=գնացի, գնահ, մի գնար:

34. Գրարարի Սահմ. ներկան և Անց. անկատար տեղին նայելով համապատասխան են աշխարհաբարի

1. Սահմ. ներկային (անկատար կամ բուն ներկայ) և անկատար անցեալին. գնամ=գնում եմ. գնայի=գնում եի.

2. Ըղծական ապառնուն (որ տեղին նայելով և ներկայ է) և անցեալին. գնամ=գնամ. գնայի=գնայի.

3. Ենթադրական ապառնուն (որ տեղին նայելով և ներկայ է) և անցեալին. գնամ=կը գնամ. գնայի=կը գնայի: Եմ, գոմ, կամ (=կամ իմաստով և ոչ կանգնել) ունիմ, գիսեմ բայերի Սահմ. ներկան նշանակում է միայն եմ, կամ, ունիմ, գիսեմ, իսկ անցեալը՝ եի, գոյի, կայի, ունեի, գիսեի=էի, կայի, ունէի, գիտէի, —լինէի:

ունենայի, գիտենայի,—կը լինէի, կուեննայի, կը գիտեննայի: Օրինակներ՝

Մտէք ընդ նեղ դուռն. քանի՛ ընդարձակ է դուռնն և համարձակ ճանապարհն, որ քանի (=տանում է) ի կորուստ, և բազումք են (=են, կան), որ մտանեն (=մըտնում են) ընդ նա: Զի՛ սեսանես (=տեսնում ես) զչիւղ յական եղբօր քոյ և ի քում ական զգերանդ ոչ նուարես (=չես նշմարում): Կամ զիտրդ ասես (=ասում ես) ցեղբայր քո՝ թո՛ղ հանից զչիւղ յականէ քումմէ, և ահաւաղիկ ի քում ականդ գերան կայ (=կայ):— Եւ Երջեք (=չըջում էք) Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս. ուսուցանեք (=ուսուցանում էք) ի ժողովորդս նոցա և քարոզեք (=քարոզում էք) զաւետարանն արքայութեան: Ասեք (=ասում էք) ի մտի իւրում՝ թէ միայն մերձեցամ (=մօտենամ) ի հանդերձս նորա, փրկիմ (=կը փրկուիմ): Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի (=կաւերուի) և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ: Ոչ արկանեն (=չեն ածիլ) գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ տիկքն պատառուին (=կը պատառուին) և գինին հեղու (=կը թափուի). այլ արկանեն (=կածեն) գինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին (=կը պահուին): Տէք, եթէ կամիս (=կամենաս) կարող ես զիս սրբել: Որ հաւատայ (=հաւատայ) և մկրտեսցի՝ կեցցէ: Եթէ թողումս (=թողնենք) զնա այնպէս, ամենեքին հաւատան (=կը հաւատան) ի նա, և զայցեն հոռոմք և բառնայցեն զազգս մեր և զաղղի: Դոյ (=կայ) աստ այր մի ի զրան քում, զի իբրդ այդ նովաւ վճարին (=զլուէս կը գայ): Վաղվաղակի յղեմ (=կուղարկեմ

զքեզ ուր կամիսն (=կամենում ես) զնալ: Եթէ զիս գիտիք (=գիտենայիք, ճանաչէիք) և զչայրն իմ թերես գիտիք (=կը գիտենայիք, կը ճանաչէիք): Եթէ գիտիք (=գիտենայիք) զինչ է (=է) զողորմութիւն կամիմ (=կամենում եմ) և ոչ զգոհ, ապա ոչ դատապարտիք (=չէիք դատապարտիլ) զանպարտսն: Եթէ գիտիք դու զպարգևսն Աստուծոյ և ով է որ ասեղ (=ասում է) ցքեզ թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրեիր (=կը խնդրէիր) ի նմանէ, և ասյր (=կը տար) քեզ ջուր կենդանի: Թէ եր (=լինէր) հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի և ոչ յապաղի (=կը շտապէի և չէի յապաղիլ): Տէք, եթէ աստ լեալ էիր (=եղած լինէիր), եղբայրն իմ չեք մեռեալ (=մեռած չէր լինիլ): Եթէ ի Սողոմ եղեալ էին (=եղած լինէին) զօրութիւնքն, որ ի քեզ եղեն, ապաքէն կային (=կը լինէին, մնացած կը լինէին):

35. Գրաբարի Սահմ. անց. անկասարք յաճախ գործ է ածուում և իւրեւ պատմական ժամանակ, որի տեղ աշխարհաբարում բանում է Սահմ. ներկան կամ Անց. կատարեալը. օրինակ՝ Իբրև զայն լսեք (=լսեց կամ լսում է) Պարթևն, զերզումն ուխտին յիեօք (=յիչեց կամ յիշում է) որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր: Նաև գիտատմունսն յիեօք զպարգևացն, և ի բուն աշխարհն փափագի որ Պարսաւն կոչէր, և վատ խորհուրդ ի միտ արկանեք. առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրու ի պատճառս ինչ զբօսանաց, իբրու խորհուրդ ինչ խորհելոյ ընդ նմա. և զսուսերն թերաքամեալս ունէին. յանկարծ յեղակարք

ծուսն ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն դիւ-
թաւալ կացուցեալ յերկիր կործանեիցն:

36. Գրաբարի Սահմ. Ապառնի Ա. (Ստոր.) և Ա-
պառնի Բ. ժամանակները մեծ մասամբ նոյն իմաստն
և գործածութիւնն ունին և տեղին նայելով համապա-
տասխան են աշխարհաբարի 1, Սահմ. ապառնի, 2, Ըդ-
ձական ապառնի, 3, Ենթադրական ապառնի և 4) Հար-
կադրական ապառնի ժամանակներին. զնայցեմ, զնա-
ցից—գնալու եմ, դնամ, կը գնամ, պիտի գնամ: Սահմ.
ապառնի ժամանակով է թարգմանուում և գրաբարի
ապառնի զերբայով բաղադրուած ներկայ ձեւը՝ գոլոց է
=գալու է, որ նոյն իմաստն ունի, ինչ որ Սահմ. ա-
պառնին, ինչպէս կարելի է տեսնել հետեւեալ օրինակից՝
Որով դատաստանաւ դատէք՝ դատելոց եմ (=դատուելու
էք), և որով չափով չափէք՝ չափեսցի (=չափուելու է)
ձեզ: Ուրիշ օրինակներ.

Չէ ինչ ի ծածուկ որ թէ ոչ յայցեսցի (=չյայտ-
նուի), և ոչ եղև ինչ գաղտնի, եթէ ոչ ի յայտ գայցե
(=երևան չգայ, յայտնի չլինի): Յոր քաղաք մտանիցեմ
(=մտնէք) կամ ի գետը, հարցանիցեմ (=կը հարցնէք)
թէ ո՞ է ի նմա արժանի, և անդ լինիքիք (=կը լինիք,
կը մնաք), մինչև ելանիցեմ (=ելնէք) անտի: Եւ իբրև
մտանիցեմ (=մտնէք) ի տունն, ողջոյն տա իմ (=կը
տաք) նմա և ասասցիք (=կասէք). ողջոյն տանս այս-
միկ: Եթէ իցե (=լինի) տունն արժանի, եկեսցե (=կը
գայ) ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցե
(=չլինի) արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի (=
կը դառնայ): Երանի է ձեզ, յորժամ նախաեսցեմ (=
նախատեն, կը նախատեն) զձեզ և հալածեսցեմ (=հա-

լածեն, կը հալածեն) և ասիցեմ (=ասեն, կասեն) զա-
մենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ:—Եթէ ոչ առա-
ւելաւցու (=չաւելանայ) արգարութիւն ձեր աւելի քան
զգպրացն և փարիսեցւոց, ոչ մտանիցեմ (=չէք մտնիլ,
չպիտի մտնէք) յարքայութիւն Երկնից: Սիբեսցես (=
սիրես, կը սիրես, պիտի սիրես) զընկեր քո իբրև զանձն
քո: Որ սպանանիցեմ (=սպանի), պարտախան լիցի (=
կը լինի, պիտի լինի) դատաստանի, կամիք զի արձա-
կեսցիք (=արձակեմ) ձեզ զարքայն Հրէից: Ամէն ասեմ
ձեզ՝ եթէ ոչ քողցի (=չպիտի թողնուի, չպիտի մնայ)
այդը քար ի քարի վերայ, որ ոչ քակեսցի (=չը
քակուուի): Աստ մեզ, երբ լինիցի (=երբ է լինելու,
պիտի լինի) այդ և զինչ նշան է, յորժամ կատարելոց
իցէ այդ ամենայն: Բազումք եկեսցեմ (=պիտի գան,
գալու են) յանուն իմ և ասիցեմ (=պիտի ասեն, ասե-
լու են), թէ ես եմ Գրիստոսն. և զբազումս մուրե-
ցուսցեմ (=պիտի մուրեցնեն, մուրեցնելու են): Յա-
րիցեմ (=պիտի վեր կենայ) ազգ յազգի վերայ, և թա-
գաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցիմ
(=պիտի լինին) շարժունք ի տեղիս տեղիս, սովք և
սրածութիւնք:

37. Գրաբարի Սահմ. ապառնի Ա. (Ստոր.) ժա-
մանակն ունի այն բոլոր գործածութիւնները, ինչ որ
Սահմ. երկրորդ ապառնին, միայն բուն ըզձական իմաս-
տով, երբ բայը դրական է, այս ժամանակը գրեթէ չի
գործածուում, այլ Ապառնի Բ. օրինակ՝ Անցեալ տեսից
(=անցնեմ, տեսնեմ) զտեսիլն զայն մեծ: Եկայք եր-
թիցուք (=եկէք երթանք): Բայց երբ բայը բացասա-
կան է, շատ սովորական է այս իմաստով ևս. օրինակ՝

Յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս (—մի՛ լինիս—
աչխ. չլինիս) որպէս կեղծաւորքն: Մի՛ այսուհետև հո-
գայցեմ (—հոգասջիք—չհոգւ՛ք) վասն վազուի: Ի ճա-
նապարհ հեթանոսաց մի՛ երբայցեմ (—չերթնա՛ք) և ի քա-
ղաք Սամարացոց մի՛ մտանիցեմ (—չմտնէ՛ք):

38. Գրաբարի Սահմ. առաջին ապառնին (Սսոբ.)
բայցի վերնում գրածներից՝ համապատասխան է նաև
աշխարհաբարի Սահմ. ներկային.

1. Երբ խօսքը հարցական է, օրինակ՝ Գիտիցե՞ս
կամ զգայցե՞ս ինչ արդեօք ցաւս: Պա՞րս իցե ի շաբա-
թու բժշկել: Ո՞չ իցե ընթերցեալ ձեր՝ զոր արար Դա-
ւիթ, յորժամ քաղցեաւն:

2. Երբ խօսքը նմանութեամբ, ենթադրութեամբ,
երկբայութեամբ է ասուում, կամ կարծեցեալ իմաստ
ունի. օրինակ՝ Հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Ար-
զամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի
խորհիցի: Չինչ է զոր դու գիտիցես, և մեք ոչ գիտի-
ցեմք: Ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ
ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն, որք ի
տանն իցեն: Նմանեցաւ արքայութիւն երկնից ան, որ
սերմանիցե սերմն բարի յագարակի իւրում:

Այս կիրառութիւնների տեղ գրաբարում կարող է
և Սահմ. ներկայ գործածուել, իսկ աշխարհաբարում
Սահմ. ներկայի տեղ ենթադրական կամ ըզձական ներ-
կայ՝ Ո՞ իցէ է ձէնջ մարդ, ցոր ինդրիցէ որդի իւր
հաց, միթէ քնք տայցէ նմա: Միթէ քաղիցեն (—կը
քաղեն) ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուզ:
Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս

զի այր մի արկանիցե զսերմանիս իւր յերկիր, և ցնջիցէ և
լառնիցէ զցայց և զցերեկ, և սերմանիքն բուսանիցին և
անիցին. և նա ոչ գիտէ թէ ... Այլ յորժամ ցայցէ զպը-
տուղն, վաղվազակի առախի մանգաղ՝ զի հասեալ են
հունձք:—Ինչպէս որ մի մարդ սերմ է ձգում ... ննջում է
և վեր կենում ... բուսնում են և աճում ... չի իմանում
... տալիս է ... ուղարկում է ... Բայց կարելի է թարգ-
մանել նաև՝ Ինչպէս որ մի մարդ սերմ ձգի (ձգելու
լինի), ննջի և վեր կենայ ... բուսնին և աճեն և նա չի-
մանայ թէ ... տայ ... ուղարկուի ...

39. Գրաբարի երկու Հրամայական ապառնի ժա-
մանակներն ևս նոյն իմաստն ու գործածութիւնն ու-
նին, միայն Սուղին ապառնին (Ստորագաս.) քիչ է
պատահում և սովորաբար գործ է ածուում կրաւորական
իմաստով: Յոգն. 2-րդ դէմքերը նոյն են, ինչ որ Սահմ.
ապառնի ժամանակների յոգն. երկրորդ դէմքերը. բայց
ևզ. 2-րդ դէմքերի տեղ ևս երբեմն գործ են ածուում
Սահմ. ապառնի ժամանակների ևզ. 2-րդ դէմքերը:
Իմաստով համապատասխան են աշխարհաբարի

ա, Հրամայական ներկային. ինչպէս՝ գնայջիր,
գնասջիր—գնա: Օրինակ՝ Երթ նախ հաշտեաց ընդ եղ-
բօր քում և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո
—գնա նախ հաշտուիք ... և ապա եկ պատարագդ արն:

բ, Ենթադր. հարկադր. և ըզձական ապառնի ժա-
մանակներին. ինչպէս՝ գնայջիր, գնասջիր—կը գնաս,
պիտի գնաս: Եւ դու, մանակ, մարդարէ Բարձրելոյն
կոչեսջիր, զի երթիցես առաջի երեսաց Տեառն ...

40. Գրաբարի և աշխարհաբարի ժամանակների
համապատասխանութիւնը կարելի է տեսնել հետևեալ

ցուցակից, որի մէջ առանց ժամանակներն անուանելու՝
ամեն ժամանակի համար իբրև օրինակ գրուած է առա-
ջին դէմքերը միայն, նախ եւ, լինիմ օժանդակները,
սպա գրեմ բայը.

1. Եւմ եւմ
էի էի. կը լինէի. լինէի
իցեմ եւմ. կը լինիմ. լինիմ
2. Լինիմ լինում եւմ. կը լինիմ. լինիմ
լինէի լինում էի. կը լինէի. լինէի
Սյլ և պատմական՝ լինում է. եղաւ
լինիցիմ պիտի լինիմ. կը լինիմ. լինիմ,—լինում եւմ
լինցիմ պիտի լինիմ. կը լինիմ. լինիմ
լինիջիբ, լիջիբ պիտի լինիս. կը լինիս. լինիս,—եղիբ
եղէ եղայ
լեր եղիբ
3. Գրեմ գրում եւմ. կը գրեմ. գրեմ
գրէի գրում էի. կը գրէի. գրէի
Սյլ և պատմական՝ գրում եւմ. գրեցի
գրիցեմ պիտի գրեմ. կը գրեմ. գրեմ,—գրում եւմ
գրեցից պիտի գրեմ. կը գրեմ. գրեմ
գրիջիբ, գրեաջիբ պիտի գրես. կը գրես. գրես,—գրիբ
գրեցի գրեցի
գրես գրէ կամ գրիբ
- Գրեալ եւմ գրել եւմ, գրած եւմ,—գրուել եւմ, գրուած եւմ
գրեալ էի գրել էի, գրած էի,—գրուել էի, գրուած էի
գրած կը լինէի,—գրուած կը լինէի,
գրած լինէի,—գրուած լինէի:

- գրեալ իցեմ գրել եւմ, գրած եւմ,—գրուել եւմ, գրուած եւմ,
գրած կը լինիմ,—գրուած կը լինիմ
գրած լինիմ,—գրուած լինիմ
- Գրելոց եւմ գրելու եւմ,—գրուելու եւմ.
պիտի գրեմ,—պիտի գրուեմ
- գրելոց էի գրելու էի,—գրուելու էի
պիտի գրէի, պիտի գրուէի
գրելու լինէի, գրուելու լինէի:
- գրելոց իցեմ գրելու եւմ,—գրուելու եւմ
(գրուելու կը լինիմ,—գրուելու կը լինիմ)
գրելու լինիմ,—գրուելու լինիմ
- Գրեալ լինիմ գրում եւմ
գրած եւմ լինում,—գրուած եւմ լինում
գրած կը լինիմ,—գրուած կը լինիմ
գրած լինիմ,—գրուած լինիմ
- գրեալ լինէի գրում էի
գրած էի լինում,—գրուած էի լինում
գրած կը լինէի,—գրուած կը լինէի
գրած լինէի,—գրուած լինէի
- գրեալ լիցիմ, պիտի գրուեմ, կը գրուեմ, գրուեմ,
լինիցիմ գրած, գրուած պիտի լինիմ.
գրած, գրուած կը լինիմ.
գրած, գրուած լինիմ
- գրեալ եղև գրուեց,—գրած եղաւ,—գրուած եղաւ.
- Գրեալ է իմ՝ եւ գրել եւմ, գրած եւմ
գրեալ էր իմ՝ եւ գրել էի, գրած էի.
եւ գրած կը լինէի, եւ գրած լինէի

գրեալ իցէ իմ եւ գրել եմ, գրած եմ,
 եւ գրած կը լինիմ, եւ գրած լինիմ,
 եւ գրած եմ լինում
 գրեալ լինի իմ եւ գրած եմ լինում.
 գրած լինիմ. գրած կը լինիմ.
 գրեալ լինէր իմ եւն. եւ գրած էի լինում,
 գրած կը լինէի, գրած լինէի:

41. Թէ գրաբարի այս կամ այն ժամանակն աշխարհաբարի որ ձևով պէտք է թարգմանուի, այդ մեծ մասամբ խօսքի իմաստից պիտի հասկացուի: Վերջին կարգի գրեալ է իմ, գրեալ եր իմ եւն. ձևերի համար միայն առանձնապէս պիտի նկատուի.

1. Դրանց հետ յաճախ ենթակայական սեռական ինդիքը չի գրուում. մաքից միայն պիտի հասկացուի թէ որ թիւն ու դէմքն է, այսինքն իմ, քո, իւր, մեր, ձեր եւն. բառերը՝ օրինակ՝ եթէ կացեալ եմ (=կացած, մնացած լինէինք) ի պատուիրանիդ քու, Տէր, և պահեալ եր (=պահեալ էր մեր=պահած լինէինք) զպատուիրանս զոր եղիր ..., շնորհեալ լինեք ես (=զու շնորհած կը լինէիր) մեզ զկեանս քնցաւ ... և զմեզ յետ ի զբրախտին վայելից և յետ երկրաւոր կարգացո՛յս՝ յանմահութիւն փոխեալ լինեք (=փոխեալ լինէր քո=փոխած կը լինէիր) իբրև զեւովք ի կարգս հրեշտակաց և միահաղոյն ամեալ լինեք (=ամեալ լինէր քո=բերած կը լինէիր) զարքայութիւն քո (Ա.գաթ.), — եթէ ի Տիւրոս և ի Սիզովն եղեալ եիմ (=եղած լինէին) զօրութիւնքն՝ որ ի քեզ եղեն, վաղու եւ արդեօք խորշով և մոխրով ապաշխարեալ եր (=էր նոցա=ապաշխարած կը լինէին): Զինչ ունիս, զոր ոչ իցի առեալ (=առեալ քո=որ

առած չլինիս, կամ որ չես առել): Զքաղաք պտղումս յեցւոց տուեալ լիցի պարգև (=տուեալ լիցի մեր, =տուած լինինք):

2. Երբեմն զօրութեամբ պիտի հասկացուի մի անորոշ անուն (որ, ոմն, — ուրուք, ուրումն) իբրև ենթակայական սեռական: Այս դէպքում աշխարհաբար թարգմանուած է յորն. 3-րդ դէմքով իբրև անենթակայ խօսք: Օրինակ՝ Ուր չէր բնաւ զոք եղեալ (=չէր զոք եղեալ ուրուք=ուր ոչ ոքի չէին գրել): Զայս գրեալ է (=գրեալ է ուրուք=գրել են) ի գիրս, զայս և մեր ընթերցեալ է: Դէպ եղև նոցա դալ մասնել ի նեղագոյն տեղի մի՝ յառուամէջս այգեստանույն, ի փողոցամէջս համբարոցացն՝ առ դրունս քաղաքին. քանզի զգրունս քաղաքին փակեալ եր (=փակել էին). զի ժամ էր հասարակ գիշերոյ:

3. Երբեմն ենթակայական սեռականն և օժանդակ բայը միանգամայն զեղչուում են: Օրինակ՝ Ասէ Սարա ցկրրահամ. տուեալ (=տուեալ է իմ) քեզ զչապար:

Ե Ղ Ա Ն Ա Կ Ի Չ Բ Ա Յ Ե Ր

42. Կան բայեր, որոնք առանձին չործածութեամբ գրուելով անորոշ գերբայի հետ՝ տալիս են նրան որևէ եղանակի, երբեմն աշխարհաբարի որևէ բաղադրեալ ժամանակի իմաստ: Բոլոր պակասաւոր բայերը եղանակի բայ են. բացի դրանցից կան և ուրիշները: Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել ներքևում գրուածների վրայ:

43. ՈւՆԻՒՄ անորոշ գերբայի հետ նշանակում է՝
ա, Կարեմ, մարքեմ, զիսեմ—աչխ. կարողանալ,
կարող լինել, դիտենալ, ունենալ. օրինակ՝ Նաև ոչ չըն-
չական ունիմ անուանիլ—Շնչաւոր էլ չեմ կարող կո-
չուելու. Ասել ոչ ունիմ—Ասել չեմ կարող: Ոչ ունիս չա-
բանալ, իսկութեամբ բարիդ—Չարանալ չունիս կամ
չարանալ չգիտես, կամ չարանալ չես կարող ...

բ. Առաջի կայ ինձ, առաջի կայ քեզ, նմա ելն,
որ բային տալիս է ապառնի ժամանակի իմաստ: Աչ-
խարհարար թարգմանում է կամ ապառնի ժամանա-
կով, կամ թէ ապառնի գերբայով ուՆԻՒՄ բայի հետ:
Օրինակ՝ Ընդ մօտոյ ունիմք տեսանել (—առաջի կայ
մեզ տեսանել) զճշմարիտ վկայսն Քրիստոսի—Շուտով
տեսանելու ենք, կամ պիտի տեսանենք ... Մկրտուեթիւն
մի ունիմ մկրտիլ (—առաջի կայ ինձ մկրտիլ)—Մի
մկրտուեթիւն ունիմ մկրտուելու: Ունիմ ինչ ասել քեզ
—Քեզ բան ունիմ ասելու:

Ծան. ՈւՆԻՒՄ բայն անցեալ գերբայի հետ երբևից,
ինչպէս աշխարհարարում, բանում է եմ, լիցիմ բայի
փոխանակ: Օրինակ՝ Չայս միայն եզեալ ունիջիք ի
մտի—... մտքերդ զրած՝ եղէք, կամ զրած լինիք: Չայ-
խարհն հնազանդեալ ունէք ընդ իւրեաւ—... հնազան-
դեցրել էք, կամ հնազանդեցրած ունէք ... Առեալ ու-
նիմք—առած ունիմք, առել ենք: Բարձեալ ունի (կամ
բարձեալ բերէ)—բարձրացրել է, կամ վրան ունի:

44. ՊԱՐՏԻՄ անորոշ գերբայի հետ նշանակում է՝
պարտաւոր լինել, պարտական լինել, պարտաւորուել
մի բան անել, բայց աշխարհարար թարգմանում է

աւելի հարկադրական եղանակով պիտի (պէտք է) եղա-
նակիչով: Օրինակ՝ Չոր պարտեաքն առնել՝ արարաք—
Ինչ որ պարտական էինք կամ պարտաւոր էինք անել՝
արինք. կամ թէ՛ Ինչ որ պիտի (պէտք է) անէինք՝ ա-
րինք: Պարտիմք զմիմեանս սիրել—Մենք պէտք է մի-
մեանց սիրենք: Ըստ օրինաց մերոց պարտի մեռանիլ—
Մեր օրէնքով պիտի մեռնիլ եւ զուք պարտիք զմիմեանց
ոտս լուանալ—Ինք էլ պիտի միմեանց ոտներ լուա-
նաք: Վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս:

Ծան. 1. Սոյն իմաստն արտայայտում է նաև
պարտ ե ինձ, քեզ, նմա ելն. ձեով: Օրինակ՝ Ի տան
հօր իմոյ պարտ է ինձ լինել—Ես պիտի իմ հօր տանը
լինիմ, կամ՝ ես պարտաւոր եմ իմ հօր տանը լինել:
Ո՞չ էք պարտ ողորմիլ և քեզ ծառայակցին քում—Դու
էլ չպիտի քո ծառայակցին ողորմէիր: Առն մարդոյ չէ
պարտ ծածկել զղլուիս իւր—Տղամարդը գլուխը չպիտի
ծածկի: Ոչ է պարտ, եղբարք իմ, այսմ այսպէս լինել
—Այս այսպէս չպիտի լինի, եղբայրներս: Պարտ է
Որդւոյ Մարդոյ բազում չարչարանս ընդունել: Պարտ է
յամենայն ժամ կալ նոցա յաղօթս:

Ծան. 2. Պարտիմ իբրև անցողական բայ նշանա-
կում է՝ պարտ լինել (պարտք ունենալ), պարտական
լինել (մէկին մի բան): Օրինակ՝ Հասն ինձ զոր պար-
տիսդ—Վճարիք ինձ՝ ինչ որ պարտ ես, այսինքն պարտք
ունիս: Պարտէք նմա հարիւր դահեկան—Նրան պարտ
էք հարիւր դահեկան: Քանի ինչ պարտիս տեառն ի-
մում—Դու ինչքան բան ես պարտ իմ տիրոջը: Դու
զանձն քո ինձ պարտիս—Դու քո կեանքն ինձ ես
պարտական:

45. Պիսի բայն անորոշ դերբայի հետ մի արական խնդրով՝ պիտի ինձ, քեզ, նմա կն, պիտէր ինձ, քեզ, նմա կն. նշանակում է՝ պէտք է, հարկաւոր է ինձ, քեզ կն. մի բան անել. բայց աշխարհաբար թարգմանում է աւելի հարկադրական եղանակով՝ պիտի (պէտք է) եղանակիչով: Օրինակ՝ Ի տեղի այսր ինձ դարձեալ դալ պիտի—Ես պիտի նորից դառնամ այս տեղին: Ոչ պիտի մեզ այր սպանանել յիտրայիէ—Մենք չպիտի մարդ սպանենք Իտրայից կամ Մեզ պէտք չէ մարդ սպանել ... Արեաց տէր որ լինի, արգար աչօք պիտի նայել (=պիտի նայել) յամենայն մարդ:

Ծան. 1. Սոյն իմաստն արտայայտուում է նաև պիտոյ է կամ հարկ է ինձ, քեզ, նմա կն. ձևով. օրինակ՝ Ինձ պիտոյ է ի քէն միրտիլ և դու առ ին գաս —Ես պիտի (պէտք է) քեզից մկրտուիմ ... Հարկ է գալ (=պիտի գայ) գայթակղութեան: Հարկ է և նմա ունել ինչ—նա էլ պիտի մե բան ունենայ:

Ծան. 2. Պիսի մենակ՝ առանց տրական խնդրի՝ նշանակում է՝ պէտք է, պիտի, հարկաւոր է. օրինակ՝ Պիտի պատուել (=պիտի պատուել) զնոսա, որչափ ի քէն է հրամայեալ: Թէ պիտի և այլ ես ինչ՝ ասս—Թէ ուրիշ բան էլ է պէտք (հարկաւոր), կամ՝ թէ ուրիշ բան էլ պիտի՝ ասա:—Այս իմաստն արտայայտուում է և պիտք եմ ձևով, որ գրւում է մի սեռական խնդրի հետ. օրինակ՝ Հաւատոց պէտք են—Հաւատք է պէտք, հաւատք պիտի, հաւատք է հարկաւոր (բառացի՝ հաւատքի պէտք կայ): Բազում զգուշութեան են պէտք—Մեծ զգուշութիւն է պէտք կամ պիտի:

46. Մարբի բայը, նոյն իմաստով և մարբ է, անորոշ դերբայի հետ մի արական խնդրով՝ ցոյց է տալիս կարելիութիւն, հնարաւորութիւն. աշխարհաբար թարգմանում է կարելի է, կարող եմ, կարող ես կն. ձևերով: Օրինակ՝ Ձիւրդ մարթի այդմ լինել—Այդ ինչ պէս կարող է լինել: Ձէ մարթ այդմ լինել—Այդ չի կարող լինել: Մարդ չմարթի դքեղ կոչել—Մարդ չի կարելի քեզ կոչել: Եթէ նմա չմարթի դալ, յղեա զդա առ նա—Եթէ նա չի կարող գալ ... Վնասակարացն ընդ անվնասակարան չմարթի բնակել—Վնասակարներն անվնասների հետ չեն կարող բնակուել: Միթէ մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ ունել—Միթէ կարելի բան է, որ առագաստի մանուկները սուգ պահեն: Ոչ է մարթ մարդարէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ:

47. Լիքիմ (եղանիմ), եմ բայերի եզ. 3-րդ դէմքը անորոշ դերբայի հետ տրական խնդրով՝ ստանում է դիպ լիցի—պատահել, յաջողել բայի իմաստ. բայց յաճախ այս կիրառութիւնը լսի դարձուած է, որ զործ է անուում փոխանակ բայը խոնարհելու: Օրինակ՝ Եղև նմա հիւանդանալ (=հիւանդացաւ նա): Եղև մեռանել աղքատին և տանել հրեշտակաց զնա: Եղև նմա դառնալ՝ առեալ զթագաւորութիւնն: Այսպէս եղև ամենեցուն փրժանել յերկիր և ապրել (=այսպէս յաջողեց ամենքին պրժնել ...): Էր ինձ ... լինել այսօր յերկրի անձանօթում և սաստկութենէ ծփանաց խորհրդոցն լինէր նմա ի տեսիլան երազոցն երևութանալ:

Ապառնին՝ լիցի՝ տալիս է բային Հարկադրական եղանակի իմաստ. օրինակ՝ Ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ պաշտել զԱստուած արարիչ (=ես պիտի

պաշտեմ...): Ինձ լիցի պահել զուխտ աստուածապաշտութեան: Զկուռս ... ոչ կալայ երբէք առ աստուածս և մի լիցի այլ ունել—կուռքերն երբէք աստուածների տեղ չդրի և չպիտի էլ դնեմ: Իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն և մի այլ ձգել լիցի (—... և չպիտի էլ ձգեմ): Մի լիցի քեզ զայդ ասել:

Փառ. Արդեւական մի՛ լիցի ձեի տեղ գործ է անուում և քաւ լիցի, օրինակ՝ Քաւ լիցի ինձ ասել զայն: Քաւ լիցի քեզ աննել զայն բան—Աստուած չանէ, որ դու այդ բանն անես:

48. Եւ մ բայի կիրառութեան համար պիտի լմանալ.

1. Եղ. 3-րդ դէմքը՝ անորոշ դերբայի հետ՝ տրական խնդրով գործ է անուում՝ պարտիմ, պարտ ե, մարտ ե եղանակիչ բայերի նշանակութեամբ: Օրինակ՝ էր նմանցանել (—նա պիտի անցնէր) ընդ Սամարիա: Ոչ է ձեզ գիտել զժամն (—դուք չպիտի իմանաք...): Էին ի վայրսն՝ ընդ որ գալ էր դնդին (... գունդը պէտք է գար), լերինք ինչ: Ոչ ևս է լինել նմա հանգիստ: Ոչ այժմ թագաւորել է նմա: Այլ մեզ քան զայդ ոչ իմանալ ինչ է, ոչ աննել:

2. է, եր, իցե, բացասական՝ չիք, չկայ, չգոյ, անորոշ դերբայի հետ առանց տրական խնդրի՝ նոյն պարտ է, մարթ է, կարելի է նշանակութեան ևն ստանում միայն ընդհանուր իմաստով: Օրինակ՝ Զիւրդ իցէ մեկնել զայս—ի՞նչպէս պէտք է, կամ՝ ինչպէս կարելի է մեկնել այս, կամ՝ ինչպէս մեկնելու է այս: Անդ էր լսել զձայն լալոյ: Տեսանել է յամենեցուն ընթրիա: Եթէ

էր տանել առ բժիշկ (—եթէ կարելի լինէր տանել, եթէ բժիշկ մօտ տանելու լինէր), Ոչինչ է ընդ այն զարմանալ: Ի Յոբայ վորձանացն է տեսանել: Զոր իմանալ է (—իմանալի է—պէտք է իմանալ) առ փարաւոն և առ սատանայ: Զինչ ինչ աննել էր (—հարկաւոր էր աննել, անելու էր) այդոյ իմում, և ևս ոչ արարի նմա: է և այլ ազդ ևս իմանալ—Ուրիշ տեսակ էլ կարել է հասկանալ: Այլ ինչ չկայ տեսանել:

3. Երբեմն ե բայը տրական խնդրով՝ ստանում է անկ ե, գործ ե, իբք են, պարտեմ ե (այխարհ, բանն է) ձևերի իմաստ. Ենթական կարող է լինել մի անորոշ դերբայ կամ ուրիշ բառ: Օրինակ՝ Դիւաց է կերպարանս կերպարանս ցուցանել: Ըշմարիտ վարդապետի է երբեմն սաստել: Քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղւոջ կուռել, և կանանց գործ է արդիւուլ, փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռիւն: Մեծի զօրութեան է հաննել զգետ: Յետին ամբարշտութեան է... Վերջին յիմարութեան է զայդ ասել:

ԳՈՅԱԿԱՆ

(ԱՆՈՒՆ ԵՒ ԴԵՐԱՆՈՒՆ)

ԱՆՈՒՄՆԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՒՄ

49. Գրաբարում հորվում են ոչ միայն գոյականները, այլ և ածականները, երբ իբրև մականուն գրուելով անուան վրայ՝ թուով և հորվով համաձայնում են իրենց անուանը. ինչպէս՝ մեծ գորութիւն, մեծի գորութեան, մեծաւ գորութեամբ: Ածականները, լինին իբրև մականուն գործածուած թէ մեհակ իբրև գոյական, չունին առանձին հորվում և հորվում են մեծ մասամբ անունների պէս:

50. Հորվները հինգ են՝ ուղղական, հայցական, տրական, որ և սեռական է, բացառական և գործիական:

Հայցական հորվն առանձնապէս կրող առարկայի հորվն է իբրև խնդիր (հայցական = խնդրական) անցողական բայերի: Այս հայցական խնդիրը երբ որոշ է, — այսինքն յատուկ անուն է, դերանուն է, կամ աշխարհաբարում

ունի որևէ յօդ և կամ վրան ունի ամենայն, իրաքանչիւր, անցնիւր բառերից մէկը, — սկզբից առնում է զ նախդիրն իբրև որոշող յօդ և կոչում է որոշեալ հայցական: Այս հորվին աշխարհաբարում փոխանակել են ուղղական և տրական հորվները: Օրինակ՝ եւ բացեալ զքերան (= բերանը) իւր ուսուցանէր զնոսա (= նրանց) : Հերովդէս կալաւ զՅովնաննէս (= Յովհաննէսին) : Աղաչեցէք զտէր (= տիրոջը) հնձոցն, զի հանցէ մշակս (= մշակներ) ի հունձս իւր : Մի արկանէք զմարգարիտս (= մարգարիտները) ձեր առաջի խողաց :

51. Յոգնակի բիւր կազմում է ք, ս, ց բաղաձայններով. ք ունին յոգնակի ուղղականն և գործիականը (հացք, հացիւք). ս ունի յոգն. հայցականը (հացս). իսկ ց ունին յոգն. տրականն ու բացառականը (հացից, ի հացից) :

52. Անեզական ասում են այն անունները, որոնք ունին միշտ յոգնականի ք-ն և հորվում են միայն յոգնակի ձևով. ինչպէս՝ աչք, փառք, կեանք, կառք, դիք, տանջանք, զրկանք ևն : Այս բառերն իմաստով նայելով տեղին՝ լինում են և եզակի և յոգնակի, ուստի կարող են մի թուականն առնել, ինչպէս և եզակի

ձևով մականուն, օրինակ՝ Մեծաւ չարչարանօք և պէսպէս տանջանօք վատթարէր: Մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան: Յայժմ՝ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին: Բացաւ ոչօք տեսանէին: Բացաւ երեսօօք: Նովին կապանօք: Ընդ նովին օրինօք: Որ նստէր ի մեծ գահոյս յայսմ: Կուռք մի, կառք մի, մի երկանք, վասն միոյ յանցանաց, դից իրիք, ի կեանսն իւրում, ի փառս իւրում:

Ծան. Աննկալան անուններն երբ ենթակայ են, լինին եզակի թէ յոգնակի իմաստով առնուած, բայց սովորաբար դուռում է յոգնակի, երբեմն միայն եզակի. օրինակ՝ Եղիցին կամք քո: Տեսին աչք իմ: Հոգւոյ և մարմնոյ միտք են կառավար: Բարք մարդկան հակառակասէր է: Զի պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս:

53. Բացի յոգնականի սովորական կազմութիւնից՝ կան և հետեւեալ ածանցները, որոնցով երբեմն յոգնակի թիւ է կազմուում.

1. Այբ, ինչպէս՝ կին, կանայք, տիկին, տիկնայք, պարոն, պարոնայք:

2. Ան, եան, ինչպէս՝ ձիան, իշան կամ իշեան, խոզեան, խորդեան, նախարարեան, զօրագլխեան, արեղեան (=արեղայք), թղթեան, բերդեան: Երբեմն յոգնականի ք-ի յաւելմամբ, ինչպէս՝ նու, նուանք, գրեան, գրեանք:

3. Անի, ինչպէս՝ աղատանի, աւաղանի, կանանի, նամականի:

4. Եար, նեար, երբեմն և եարբ, ինչպէս՝ որեար (որեարք), վանեար, իշեար, խոզեար, բանեար, բերդեար (բերդեարք), բարձկեար, նաւկեար:

5. Որեայ (=արեայ), երբեմն որայ, որայք, արեք ձևերով, ինչպէս՝ արտորեայ, վանորեայ, վանորայ, գեղարէք:

6. Տի, ոտի, երբեմն կրկին յոգնական սիք, ոտիք ձևով, ինչպէս՝ մանկտի, ծակտի, ոսկրտի, փորտտի(ք):

Ծան. Այս ածանցը ոտ, առ, ք ձևով մտնում է բաղմապատկական բայերի մէջ, ինչպէս՝ մտրթոտել, պատառոտել, փշրտել, պտրտել ևն. նոյնպէս և հետեւեալ տեսակի կազմութեան բառերի մէջ՝ կտորտանք, ոսկրտանք, փշրտուկ, փտրտանք ևն:

54. Հօլովների կազմութեան համար պիտի իմանալ.

ա, Յոգնակի ուղղականը կազմուում է եզակի ուղղականի վրայ ք աւելանալով. ինչպէս՝ բան, բանք. ծառ, ծառք. այգի, այգիք. ակն, ակունք. կողմն, կողմանք. գառն, գառինք. եզր, եզերք:

բ, Եզակի հայցական հօլովը նման է եզ. ուղղականին. յոգնակի հայցականը կազմուում է յոգն. ուղղականի ք-ն ս-ի փոխելով, ինչպէս՝ բանք, բանս. ծառք, ծառս. այգիք, այգիս. ա-

կունք, ախունս. կողմանք, կողմանս. գառինք, գառինս. եղերք, եղերս.

Ծան. Երբ յոգն. հայցականի վրայ գրուում է ս յօղը, յոգնականի ս-ն գառնում է երբեմն Է. օրինակ՝ զհաւատացեալքս ի Քրիստոս (իփոխանակ՝ զհաւատացեալսս ի Քրիստոս): Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչեցին:

զ, Եզակի սրականը կազմուում է՝ ի, ու, ոյ, այ վերջաւորութիւններով, որոնք կազմում են չորս ձայնաւոր հոլովումներ, և ան, նը կամ եղ վերջերով, որոնք կազմում են երկու բաղաձայն հոլովում: Յոգնակի սրականը կազմուում է եզակի տրականի վրայ ց աւելանալով. եզակի տրականի յ-ն այս դէպքում դուրս է ընկնում: օրինակ՝ բան, բանի, բանից. հաւ, հաւու, հաւուց. ծառ, ծառոյ, ծառոց. տիտան, տիտանայ, տիտանաց. կողմն, կողման, կողմանց. համր, համեր, համերց:

Բացի այս՝ կան երեք շեղումներ, այն է այ հոլովումն ունի եզակի տրականի համար այ վերջաւորութեան տեղ ի կամ ոյ, բայց յօգնակին աց, ինչպէս աշխարհ, աշխարհի, աշխարհաց. այգի, այգւոյ, այգեաց, իսկ ան հոլովումն ունի եզակի տրականի համար ան վերջի տեղ

ին, բայց յօգնակին անց. ինչպէս՝ գառն, գառին, գառանց:

ը, Բացառական հօլովն ունի սկզբից մի նախդիր, սովորաբար ի (երբեմն զ, ընդ, ըստ, առ), որ եթէ բառը ձայնաւորով է սկսուում՝ գառնում է յ և անուան կից է գրուում: Եզակի բացառականը, եթէ տրականն ունի այ, ոյ վերջաւորութիւնը, կազմուում է տրականի վրայ ի (յ) նախդիրն աւելանալով. մնացած դէպքերում ունի է վերջաւորութիւնը: Յոգնակի բացառականը կազմուում է յօգն. տրականի վրայ միայն ի (յ) նախդիրն աւելանալով: Օրինակ՝ ծառ, ծառոյ. ի ծառոյ, ի ծառոց. տիտան, տիտանայ. ի տիտանայ. ի տիտանաց. — Բան, բանի, ի բանէ, ի բանից. խրատ, խրատու, ի խրատէ, ի խրատուց. ակն, ական, յականէ, յականց. աստղ, աստեղ, յաստեղէ, յաստեղց. — շեղումները՝ աշխարհ, աշխարհի, յաշխարհէ, յաշխարհաց. — այգի, այգւոյ, յայգւոյ, յայգեաց. գառն, գառին, ի գառանէ (ի գառնէ), ի գառանց:

Ծան. Բացառականի համար պատահում է երբեմն ուս վերջաւորութիւնը, ինչպէս՝ յԱստուածուս (յԱստուածուստ) կամ Աստուածուստ, յարքունուս կամ արքունուստ, յերկնուստ, յարտաքունուս կամ արտաքունուս. ի ներքունուս կամ ներքունուս (= ներքեց, տակից կամ ներսից, ներքեցից), ի բացուստ կամ

բացուտ, յառաջուտ (առջևից), ի վերուտ կամ վերուտ. ի հեռուտ կամ հեռուտ. յետուտ, յանկարծուտ:

Ե, Եզակի գործիականը կազմում է Բ, Վ, Լ տառերով, որոնք դրում են եզակի տրականի վրայ: Յոզնակի գործիականը կազմում է եզակի գործիականի վրայ ք աւելանալով:

Բ դրում է, երբ տրականը բաղաձայնով է վերջանում. ք-ից առաջ ն-ն փոխում է մ-ի, ինչպէս ակն, ական, ակամբ, ակամբք. աստղ, աստեղք, աստեղբք:

Ի դրում է, երբ տրականն ի, այ է վերջանում: Այ-ի վերջի յ-ն դուրս է ընկնում, ինչպէս՝ տիտան, տիտանայ, տիտանաւ, տիտանաւք. բան, բանի, բանիւ, բանիւք:

Վ դրում է, երբ տրականը ոյ է վերջանում, որի վերջի յ-ն դուրս է ընկնում. ինչպէս՝ ծառ, ծառոյ, ծառով, ծառովք:

Բացի այս՝ պիտի նկատի ունենալ.

1. Ի, ոյ, ին շեղումները վերացում են, այսինքն գործիականն այնպէս է կազմում, որպէս թէ տրականը ունենար այ, ան. ինչպէս՝ աշխարհ, աշխարհի, աշխարհաւ, աշխարհաւք. եկեղեցի, եկեղեցոյ, եկեղեցեաւ, եկեղեցեաւք. դառն, դառին, դառամբ, դառամբք:

2. Երբ տրականն ունի ու, գործիականն անփոփոխ միւսնոյն տրականն է, միայն յոգնականում ք է առնում, ինչպէս՝ զարդ, զարդու, գործիական՝ զարդու, զարդուք:

Ման. 1. Գործիականի աւ վերջաւորութիւնը յոգնականի մէջ իբրև երկբարբառ զարծել է օ, աշխարհաւք, աշխարհօք, ինչպէս գրում և տպում են այժմ սովորաբար: Իսկ իւ վերջաւորութիւնը եզակիում արտասանում է իբրև իվ, յոգնակիում իբրև իւ երկբարբառ:

Ման. 2. Գործիականի համար պատահում են երբեմն հնացած աւի, աւին (աւիմբ), ովին վերջաւորութիւնները, ինչպէս՝ զլիսովին, երամովին, ձիովին, ազգաւիմբ, մերովի, ձերովին, իւրովի, իւրովին եւն, որոնք իբրև մակբայակերպ են գործ ածուում:

55. Հոլովման ժամանակ՝ շեշտի տեղափոխութեամբ առաջացած ձայնափոխութիւնը, սակաւ բացառութեամբ, պահւում է, այսինքն՝ է=ի. ու, ի=ը (կամ սղում են). ոյ=ու. եա=ե. եայ=է: Օրինակ՝ սէր, սիրոյ. ջուր, ջրոյ. միտք, մտաց. լոյս, լուսոյ. սենեակ, սենեկի. քրիստոնեայ, քրիստոնէի. Բացի այս՝ երբեմն և ձայնաւորն ևս սղում է, ինչպէս՝ ասեղն, ասղան. պճեղն, պճղան. թիթեղն, թիթղան. ծիծեռն, ծիծռան. իսկ է ձայնաւորն երբեմն դառնում է ն, ինչպէս՝ եղէգն, եղեղան. աղուէս, աղուխու կամ աղուեսու:

ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

1. Ի ՀՈԼՈՎՈՒՄ

56. Այս հոլովման տրականը կազմուած է ի ձայնաւորով. բացառականը՝ է ձայնաւորով. որոնք, ինչպէս և յողնականի ք-ն, դուուած են եզակի ուղղականի վրայ: Օրինակ՝

| | | |
|----------|--------|---------|
| | Յզակի | Յողնակի |
| Ուղ. | բան | բանք |
| Հայց. | բան | բանս |
| Սեռ. տր. | բանի | բանից |
| Բաց. | ի բանէ | ի բանից |
| Գործ. | բանիւ | բանիւք |

57. Այսպէս հոլովուած են.

1. Այ, նայ, է վերջացած բառերը, ինչպէս՝ ծառայ, մարգարէ, պաշտօնեայ (պաշտօնէից). տասնամեայ (տասնամէի, տասնամէից):

2. Շատ հասարակ անուններ, ինչպէս՝ բանտ, դան, հաց, նետ, տօն, սիրտ, արուեստ, օգուտ, հանգէս, ողջոյն, ատեան, վայրկեան,—անեզական՝ կրօնք, աղօթք, անէծք, ինչք, խօսք ևլն:

3. Շատ յատուկ անուններ, աւելի ուս, էս

վերջաւորութեամբ, ինչպէս՝ Մովսէս, Ներսէս, Մարկոս, Եգիպտոս, Մարգիս ևլն.—էս վերջացած յատուկ անունների մէջ է ձայնաւորը դառնում է ի կամ ն, երբեմն և անփոփոխ է է մնում, օրինակ՝ Մովսէս, Մովսիսի, Մովսեսի, այլ և Մովսէսի: Յունական էս, ուս վերջաւորութիւնն երբեմն դուրս է ընկնում, ինչպէս՝ Մատթէոս, Մատթէի. Հերովդէս, Հերովդի:

4. Թուական անունների մեծ մասը, որ են՝ Երեք, Երիս, Երից, Երիւք:

Չորք (չորեք), չորս, չորից, չորիւք:
Հինգ, հնգի, հնգիւ, հինգք, հնգից, հնգիւք.

այլ և հնգօք:

Վեց, վեցի, վեցիւ, վեցից, վեցիւք:
Եօթն, եօթնի, եօթնիւ, եօթնից (տես § 74. 2.):

Ութ, ութի, ութիւ, ութից, ութիւք:
Ինն, ըննի, ըննիւ, ըննից, ըննիւք (տես § 91):

Տասն, տասնից (տես § 74. 2):

Մետասան, մետասանի, մետասանից: Այսպէս և՝ երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեչտասան:

Քսան, քսանի, քսանից:

Երեսուն, երեսնի, երեսնից: Այսպէս և՝ քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն:

2. ՈՒ ՀՈՂՈՎՈՒՄ

58. Այս հոլովման տրականը կազմում է ու ձայնաւորով, որ դրում է ուղղականի վրայ. բացառականը է ձայնաւորով, որ աւելանում է կամ ուղղականի կամ տրականի վրայ. երբեմն երկուսի վրայ ևս: Օրինակ՝

| | Եզակի | Յոգնակի |
|----------|--------------------|-----------|
| Ուղ. | խրատ | խրատք |
| Հայց. | խրատ | խրատս |
| Սեռ. տր. | խրատու | խրատուց |
| Բաց. | ի խրատէ, ի խրատուէ | ի խրատուց |
| Գործ. | խրատու | խրատուք |

59. Այսպէս հոլովուող բառերը մեծ մասամբ և միւս հոլովումների տակ են գնում. ինչպէս՝

1. Բառեր, որոց բացառականն ուղղակա- նից է կազմում՝ առուօտ, արև, կով, հաւ, սակաւ, համբաւ, աղուէս, դէն, ինձ (ընձու), ցուլ, ծով, ժամ և ին, — անեզական՝ սլարտք, վարք, բարք, — Յորդանան, Յովհաննէս, Յովհան- նու, Սոկրատէս, Սոկրատու:

2. Բառեր, որոնց բացառականը տրականից է կազմում՝ զարդ, սպաս, նախանձ, այդ և ին:

3. Ծաղր, ասր, մեղր ունին՝ ծաղու, ասու,

մեղու, ի ծաղուէ, յասուէ, ի մեղուէ: Յոգն. ասք, ասս, ասուց, ասուք (տես § 90):— Ծաղր ունի տրական նաև՝ ծաղեր կամ ծաղրու. ասր՝ ասրոյ կամ ասրու, ասրոց, գործ. ասրով կամ ասերք. իսկ մեղր՝ մեղեր, մեղերք (տես § 75):

4. Թուականներից՝ երկու կամ երկուք, եր- կուս, երկուց, յերկուց, գործ. երկուք: Գործիա- կանի համար սովորաբար բանում է երկուքումը, որ երկուքին բառի գործիականն է:

Բիւր, բիւրու, բիւրք, բիւրուց, բիւրուք: Այլ և՛ բիւրի, բիւրեաւ կամ՝ բիւրոյ, բիւրով, բիւրոց, բիւրովք:

3. ՈՅ ՀՈՂՈՎՈՒՄ

60. Այս հոլովման տրականը կազմում է ոյ վերջաւորութեամբ, որ աւելանում է ուղղա- կանի վրայ: Բացառականը նոյն տրականն է ի (յ) նախդրով: Օրինակ՝

| | Եզակի | Յոգնակի |
|----------|---------|---------|
| Ուղ. | ժառ | ժառք |
| Հայց. | ժառ | ժառս |
| Սեռ. տր. | ժառոյ | ժառոց |
| Բաց. | ի ժառոյ | ի ժառոց |
| Գործ. | ժառով | ժառովք |

61. Այսպէս հորովուով են.
1. Շատ հասարակ և մի քանի յատուկ անուններ, ինչպէս՝ գործ, փող, դեղ, ձի, էջ, սէր, ցօղ, ամօթ, ծեր, խունկ, ծուխ, սուրբ, իմաստուն, թռչուն, ծծումբ, յոյս, գոյն, թիւ (թուղ), անիւ, պատիւ, գին, միս, մարմին, բերան, երկաթ, տղայ, տերև, — ոսկի, հողի, որդի, ասորի (տես ներքևը 5 կէտ), — անեղական՝ տիք (տիոց), դժոխք, կուռք, Հայք, Հոսումք, — Աստուածատուր, Կարին և շն, — և բոլոր ած, ին, ային, ուն ածանցներով կազմուածները՝ վերին, երկնային, գիտուն, արարած և շն:
2. Աստուած բառը, որ ունի՝ Աստուծոյ, Աստուծով, բայց հեթանոսական աստուծու իմաստով լինում է՝ աստուածոյ, աստուածով, աստուածք, աստուածոց, աստուածովք:
3. Անորոշ դերբայները, որ յոգնակի չունին, ինչպէս՝ բառնալ, բառնալոյ, բառնալով, հեղուլ, հեղլոյ, հեղլով:
4. Անցեալ դերբայները՝ առաքեալ, առաքելոյ, առաքելով, առաքեալք, առաքելոց, առաքելովք:
5. Յի ածանցով կազմուածները, որոնք մի տեղացի լինելը, կամ մի ազգի վերաբերելն են ցոյց տալիս, ինչպէս՝ Փարպեցի, Խորենացի, հոռ.

- մայեցի, կարնեցի, քաղաքացի և շն: Այս բաների, ինչպէս և մի քանի ի վերջացած բազմա՝ վանկներին՝ հողի, որդի, ոսկի, ասորի՝ վերջի ի ձայնաւորը վերջաւորութեան ո ձայնաւորից առաջ դառնում է ւ, օրինակ՝ փարպեցի, փարպեցւոյ, փարպեցւով, փարպեցւոց, փարպեցւովք: Հողի՝ հողւոյ, հողւով, հողւոց, հողւովք:
6. Եար, նեար, երբեմն և եան ածանցներով կազմուած յոգնակիները, վանեար, վաներոյ, որեար, որերոյ, բարձկեար, բարձկեարոյ, գրեան, գրենոյ:
7. Իս վերջացած աշխարհագրական անունները, որոնց վերջի ա ձայնաւորը դուրս է ընկնում, ինչպէս՝ Գալիլիա, Գալիլիոյ, Արաբիա, Արաբիոյ, Նիկիա, Նիկիոյ, Եգեսիա, Եգեսիոյ, Սամարիա, Սամարիոյ, Չիլոնիա, Չիլոնիոյ (տես § 68. 3):
8. Թուականներից՝ հարիւր (հարեւր), հարիւրոյ, հարիւրով (երբեմն հարիւրիւ), հարիւրոց, հարիւրովք, Նոյնպէս՝ երկերիւր, երեքհարիւր, չորեքհարիւր, հինգհարիւր, վեցհարիւր, եօթնհարիւր, ութհարիւր, իննհարիւր:
62. Այս հոլովման տակ դնացող մի քանի բաների համար պիտի նկատի ունենալ, որ սեռականարական ունին երբեմն նաև ոչ վերջաւորութեամբ, որի

վրայ աւելանում է բացառականի և վերջաւորութիւնը, ինչպէս՝ մարդ, մարդոյ, ի մարդոյ,—բայց երբեմն և մարդոջ, ի մարդոջէ. նոյնպէս ձի, ձիոյ, այլ և ձիոջ, ի ձիոջէ. ջերմ, ջերմոյ, ջերմոջ. մի, միոյ կամ միոջ, ի միոջէ. Հնացած մի ձև է ոչ վերջաւորութեամբ սեռականը. մարդոյր, ձիոյր ելն:

63. Կան յորոշ թուով բառեր, որոնք սեռական-տրական ունին կրկին ձևով՝ ոյ և ում. իսկ բացառականը կաղմուտ է սովորաբար է աւելանալով ում՝ վերջացած տրականի վրայ, որի ուն սղուում է. յոգնակի ուղղականն և հայցականն երբեմն նման են եզ. ուղղականին և հայցականին. օրինակ՝

| | | |
|----------|------------------|---------|
| | Եզակի | Յոգնակի |
| Ուղ. | մեր | մերք |
| Հայց. | (դ)մեր | (դ)մերս |
| Սեռ. տր. | մերոյ, մերում | մերոց |
| Բաց. | ի մերոյ, ի մերմէ | ի մերոց |
| Գործ. | մերով | մերովք |

64. Այսպէս հոլովում են.

1. Մի թուականը՝ միոյ, միում, ի միոյ կամ ի միոջէ (տես § 62):

Փան. նոյն ձևով հոլովում է կրկնուած՝ մի մի, (դ)մի մի, միոյ միոյ, միում միում, ի միոջէ միոջէ, որ նշանակում է՝ մեզ մի, իւրաքանչիւր=ամեն մի, ամեն

մեկը. Օրինակ՝ Տանէին մի մի ի նոցանէ (նրանցից ամեն մէկը) մարս երկուս կամ երիս Չմի մի ի նոցանէ ի ծածուկ քաջալերէր: Աս մի մի վիդ հաղար սպառազէնք: Լստ միոյ միոյ առաքինութեան պատկըն փառաց յօրինեցան ի Տեառնէ: Միում միում ի նոցանէ Հորհէր: Միում միում կաշառ դադտ խրէր: Ի միոջէ միոջէ լուիցես:—Մի մի մակբայօրէն գործածուած նշանակում է և մի առ մի, մի բոս միօջէ=մեկ մեկ, մեկիկ մեկիկ, ջոկ ջոկ, ինչպէս՝ եւ զի մի մի ասիցեմ. միանգամայն ասացից: Մի մի եկին:

2. Միւս (մեւս), միւսոյ, միւսում, ի միւսմէ, միւսք, միւսոց:

Փան. երբեմն գործ է ածուում միւս եւս ձևով, ինչպէս՝ ի միւս եւ ի գլուխ տարւոյն (=Միւս տարեգլխին եւս, կամ միւս տարեգլխին էլ): Միւս եւս այլ կորին: Ասէ ցմիւս եւս (=միւսին էլ, մէկէլին էլ), Չառաջին պարիսպն և զմիւսն եւս:—Մի ... և միւս,-մի ... և միւս եւ,-մի ... միւս եւ,-մի ... մի,-մի ... և մի ձևերը գործ են ածուում նաև թուարկութեան համար իբրև մէկ (մին) ... մէկ էլ (մին էլ), կամ նախ ... ապա, նախ ... և երկրորդ, մի ... և երկրորդ. ինչպէս՝ Մի՝ (=մէկ՝) թողուն զԱստուած չար (է), և միւս՝ (=մէկ էլ՝) երգնու ի չաստուածան: Միւս եւս մակբայօրէն նշանակում է նաև՝ մեկ էլ, մի անգամ էլ, դարձեալ:

3. Այլ, այլոյ, այլում, յայլմէ կամ յայլմանէ, այլք, այլոց:

4. Իւրաքանչիւր,-րոյ,-րում,-րով. իւրաքան-

չիւրք կամ իւրաքանչիւր,-րոց կամ-րից, կամ իւրաքանչիւրց,-րովք:

Փան. Իւրաքանչիւր, ինչպէս և մեկ մի, անցնիւր կամ անձնիւր (անցնիւրոյ, անցնիւրք, անցնիւրոց կամ անցնիւրից, անցնիւրց=իւրաքանչիւր), երբեմն նաև երկաքանչիւր (երկաքանչիւրոյ, երկաքանչիւրոց կամ երկաքանչիւրից=երկուսն էլ, երկսից ամեն մէկը) յօդ չեն առնում և կարող են անփոփոխ ձևով բանել նաև թեք հօլովներ իմաստով: Աշխարհաբար թարգմանուում են՝ իւրաքանչիւրն իւր, ամենի իրենց, ամեն մեկս մեր, ամեն մեկդ ձեր ևն. ձեերով: Օրինակ՝ Մեկնեցան իւրաքանչիւր յեզբօրէ իւրմէ (=ամեն մեկն իւր եզբօրից): Ժողովեցէք իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում (=ամեն մեկդ ձեր կարողութեան կամ պիտոյքի չափ): Դնել զարծաթն իւրաքանչիւր (փոխ. իւրաքանչիւրոց=ամեն մէկին իւր) ի քրձի իւրում: Հատուցէ իւրաքանչիւր (փոխ. իւրաքանչիւրում=ամեն մէկին) ըստ գործս իւր:

5. Որ, որոյ, որում, յորմէ (կայ և յորմանէ), որով, որք, որոց, որովք:—Որ բառն իբրև յարաբերական և հարցական յօդ չի առնում: Որ յարաբերականի յոգնակի ուղղական և հայցական որք, (զ)որս ձևերի տեղ գործ է ածում և եզակի որ, (զ)որ:

6. Ստացական ածականները՝ իմ, քո, մեր, ձեր, իւր հօլովում են ինչպէս մնր: Կարող են և իբրև դոյական գործածուել անյօդ կամ ս,

ն, ն յօդերով՝ իմս, քոյդ, մերս, ձերդ, իւրն= իմը (իմս), քոնը (քոնդ), մերը, ձերը, իւրը նշանակութեամբ: Անուան հետ գործածուած ժամանակ յոգնակի ուղղականը և հայցականը տնփոփոխ են մնում: Ինչպէս՝ հարքն մեր, ըանք իւր, ըանք իմ, զըանս իմ: Բայց մենակ՝ իմքս (=իմնքս), յիմսս, մերքն, ի մերս (=մերոնք), իւրքն, յիւրսն. զքոյսն=(քոնոնք):

Փան. Քա բառն երկու ձևով է հօլովում՝ քո, քոյոյ, քոյում, ի քոյոյ, քոյով. քոյք, (չ)քոյս, քոյոց, քոյովք,—կամ քո, քոյ, քում, ի քումէ (ի քումմէ), քով. քոց, քովք:

7. Յուցական սեռականները՝ սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա. ինչպէս՝ նորա, նորայոյ, նորայում, նորայով. նորայք, զնորայս, նորայոց, նորայովք: Նոցա ունի և նոցայցն, նոցայիւր ձևերը:

Փան. Այս բառերը սովորաբար յօդ ստանալով՝ սորայս, դորայդ, նորայն, նոցայն—սրանը, դրանը, նրանը, նրանցը (նոցանը), իբրև դոյական են գործածուում, բայց երբեմն իբրև ածական էլ են բանում. օրինակ՝ Զի նոցայոցն օրեւոցէ իշխանութեանց: Ծանօթութիւն նոցայցն առաջի արկկւոց գործոց:

8. Մի քանի ուրիշ բառեր, ինչպէս՝ վերին, վերնոյ, վերնում. յետին, յետնոյ, յետնում. առաջին, առաջնոյ, առաջնում, յառաջնմէ, յա-

նաջմէ. վերջին, վերջնոյ, վերջնում: հին, հնոյ, հնում, ի հնմէ. նոր, նորոյ, նորում: ճախ, ճախոյ, ճախում, ի ճախմէ. աջ, աջոյ, յաջմէ ելն:

65. Այս բառերի ոյ վերջաւորութեամբ ձևը գործ է ածուով սովորաբար իբրև սեռական, այսինքն անուան խնդիր. իսկ ում վերջաւորութեամբ ձևը գործ է ածուով իբրև տրական խնդիր բայի կամ անականի, և յաճախ ի նախդրով ստանում է աշխարհաբարի ներքոյական հոլովի իմաստը իբրև պատասխան երբ, ուր հարցերի. ինչպէս՝ ի միւսում չաբաթուն. ի միւսում աւուրն. ի միւսում վայրի, ի նորումս, ի վերջնում, յառաջնումն, ի հնումն: Տրականի իմաստով ում վերջաւորութիւնն ունին նաև դասական անականները, անցեալ զերբայներն և ուրիշները. ինչպէս՝ յերկրորդում ամի, ի հանգերձելումն, յանցելումն ամի, զբեցելում, ի սբբումն, յերկրի անծանօշում. ի բարձրաւանդակումն կուս կալով ի տեղոջ. ի թղթում ելն:

4. Ա Յ Հ Ո Ղ Ո Վ Ո Ւ Մ

66. Այս հոլովման տրականը կազմուում է այ վերջաւորութեամբ. բացառականը նոյն տրականն է ի նախդրով. Ունի երկու շեղում: Առաջին շեղման տրականը կազմուում է ի վերջաւոր

թեամբ, բացառականը՝ է. իսկ երկրորդ շեղման տրականը կազմուում է ոյ վերջաւորութեամբ. բացառականը նոյն տրականն է: Գործիականն ու յոգնակին բոլորն էլ ա ձայնաւորով են հոլովուում: Օրինակ՝

Նգակի

| | | | |
|-------|-----------|----------|------------|
| | | Ի շեղում | Ո շեղում |
| Ուղ. | Տիտան | աշխարհ | եկեղեցի |
| Հայց. | Տիտան | աշխարհ | եկեղեցի |
| Ս. Տ. | Տիտանայ | աշխարհի | եկեղեցւոյ |
| Բաց. | ի Տիտանայ | յաշխարհէ | յեկեղեցւոյ |
| Գործ. | Տիտանաւ | աշխարհաւ | եկեղեցեաւ |

Յոգնակի

| | | | |
|-------|--------------|---------------|----------------|
| Ուղ. | Տիտանէ | աշխարհէ | եկեղեցիէ |
| Հայց. | Տիտանս | աշխարհս | եկեղեցիս |
| Ս. Տ. | Տիտանաց | աշխարհաց | եկեղեցեաց |
| Բաց. | ի Տիտանաց | յաշխարհաց | յեկեղեցեաց |
| Գործ. | Տիտանաւ(-օք) | աշխարհաւ(-օք) | եկեղեցեաւ(-օք) |

67. Այս հոլովման համար պիտի իմանալ՝

1. Անխառն ա ձայնաւորով հոլովուում են յատուկ անունների մեծ մասը, որոնք սովորաբար եզակի են հոլովում, բայց իբրև հասարակ անուն առնուած ժամանակ կարող են և յոգնակի ունենալ. ինչպէս՝ Հայկ, Արամ, Տիգրան, Տրդատ, Սահակ, Մեսրոպ ելն.— և մի քանի

ուհի (ուրհի) բառով բարդուածներ, ինչպէս՝ Տիգրանուհի (-ուհեայ), աստուածուհի, քրմուհի, վիայուհի, իսկուհի, և ընչ:

2. Ի շեղման ձևով հորովում են՝ շատ հասարակ անուններ և ածականներ, ինչպէս՝ աչակերտ, բարեկամ, ընկեր, զինուոր, հովիւ, աւազան, մեղու, մրրիկ, պարտէզ, բազուկ, ուղեակ, պատանեակ, սենեակ, նաւակ, ահեակ, հողեղէն, ոսկեղէն, հնդիկ, պարսիկ և ընչ. անեղական՝ աչք, միտք, կամք, կառք, փառք, կեանք, տանջանք, զրկանք և ընչ.— և թուականներից՝ հազար, հազարի, ի հազարէ, հազարաւ, հազարաց, և բոլոր դասականները՝ բացի առաջին բառից, ինչպէս՝ երկրորդ, երկրորդի, յերկրորդէ, երկրորդաւ, երկրորդաց. նոյնպէս՝ երրորդ, չորրորդ, հինգերորդ և ընչ:

3. Ու շեղման ձևով հորովում են ի վերջացած բազմաձայնի բառերը, օտակաւ բացառութեամբ (§ 61. 5). ինչպէս՝ այգի, կզզի, պատասխանի, մատանի, ծերունի, բարի, նմանի (= նման), սիրելի և ընչ. նոյնպէս տի, անի ածանցներով կազմուած յոգնականները՝ մանկտի, նամականի և ընչ. և անեղականները՝ կարծիք, ընթրիք, հարսանիք և ընչ:

Օրոն. Կան ի վերջացած բազմաձայնի բառեր, որոնք սովորաբար ս ձայնաւորով են հորովում (§ 61. 1, 5). բայց երբեմն դրանց համար ևս պատահում են և հորովման ձևեր. ինչպէս՝ քաղաքացի, քաղաքացոց և քաղաքացեաց. հողի, հողաց և հողեաց. դօտի, դօտուց և դօտեաց (գործխական նաև դօտեամբ). եղբորորդի, եղբորորդուց և եղբորորդեաց. գործի, գործով, գործուց, գործովք և գործուաւ, գործեաց, գործեօք:

68. Այս հորովման համար ընդհանրապէս պիտի նկատի ունենալ.

1. Բառավերջի և ի ձայնաւորները հորովական և ձայնաւորից առաջ գառնում են և, որ յաջորդ ա-ի հետ կազմում է եա, եաւ(է) = եօ(է) երկբարբառ. ինչպէս՝ Գայիանէ, Գայիանեայ, Գայիանեաւ. Հոփիսիմէ, Հոփիսիմեայ. Հեղինէ, Հեղինեայ. Կրեաէ, Կրեաեայ. Տիգրանուհի, Տիգրանուհեայ. քրմուհի, քրմուհեայ. աստուածուհի, աստուածուհեայ. Եսայի, Եսայեայ, — նոյնպէս անեղականները՝ կարծիք, կարծեաց, կարծեաւք = կարծեօք. հարսանիք, հարսանեաց, հարսանեօք. ջրօրհնէք, ջրօրհնեայ:

2. Յատուկ անունների յունական իոս, էոս, էս վերջերի ոս, ս մասերը թեք հորվելի մէջ զուրս են ընկնում, իսկ ի, և ձայնաւորները հորվական ա-ի հետ կազմում են երկբարբառ. օրինակ՝ Տիրեքիոս, Տիրեքեայ. Տրմոթէոս, Տրմոթեայ. Հերակլէս, Հերակլեայ. Հոգոփեոնէս, Հոգոփեոնեայ. Ռոտակէս, Ռոտակեայ. Երբեմն այս ձևով սեռ. տր. ունին և պարզ ոս վերջացածները, ինչպէս՝ Կազմոս, Կազմեայ. Դամասկոս, Դա-

մասկեայ. Փիլիպպոս. Փիլիպպեայ: Յաճախ այս անունները վերջաւորութիւնը զուրս է ընկնում. ինչպէս՝ Հեբազի, Տրբեր, աւելի թեք հոլովների մէջ, ինչպէս՝ Արիստակէս, Արիստակայ. Վրթանէս, Վրթանայ. Հիւպոզիտէս, Հիւպոզիտայ. Կեկրոսիս, Կեկրոպայ. Դուկաս, Դուկայ:

Ծան. Այս կարգի անունները մի քանիսի համար գործ է ածւում առանձին կոչական ձև՝ յունարէնի ազդեցութեամբ, ինչպէս՝ Ո՛վ Պևարէ (Պևարոս). Պաւղէ (Պոզրոս). Փիլիպպէ, Տրմոթէէ, Իգնատիէ երև.

3. Իա, ա(յ) վերջացած յատուկ անունները երբեմն սեռական-տրական ունին միայն յ բաղաձայնով. իա դառնում է եա. օրինակ՝ Գալիլիա, Գալիլեայ, Գալիլեաւ. Յովսիա(յ), Յովսեայ. Եղևսիա, Եղևսեայ. Յուզա, Յուզայ. Աննա, Աննայ:

Ծան. Այս անունները գնում են և ի հոլովման տակ. Իա վերջն իրրե եալ երկբարբառ դառնում է Ե. օրինակ՝ Յուզայ, Յուզայի. Աննայ, Աննայի. Գալիլիա, ի Գալիլէէ:

4. Ո շեղման բառերի (§ 67. 3) վերջի ի ձայնաւորը ուից առաջ դառնում է ւ, իսկ աւից առաջ Ե. ինչպէս՝ այգի, այգեոյ, այգեաւ, այգեաց, այգեաք, այգեօք (տես և § 61. 5): — Ծարաւի, ծաւի, կտաւի, արծուի, ասուի և նման բառերի մէջ վերջի Ի-ն զուրս է ընկնում՝ ծարաւոյ, արծուոյ երև:

5. Ո շեղման բառերը յաճախ սեռական-տրական ունին և ոջ կամ ում վերջաւորութեամբ, որ ի նախորդով սովորաբար գործ է ածւում իրրե ներքոյական. ինչպէս՝

ի տեղւոջ, ի տարւոջ, յայգւոջ, յեկեղեցւոջ. ի վայրի դալարւոջ. — այսպիսում, այնպիսում: Նոյնպիսում շնորհի արժանաւորեալ (տես և §§ 62. 65):

Ծան. Երբեմն սրանց բացառկանը կազմւում է ոջ վերջաւորութեան վրայ Ե աւելանալով, ինչպէս՝ ի տեղւոյ կամ ի տեղւոջէ, ի տարւոյ կամ ի տարւոջէ: Ոջ վերջաւորութեամբ կազմւում է երբեմն և ուրիշ բառերի ներքոյական՝ դիպահ, ի դիպահօջ. դիւր, ի դիւրի կամ ի դիւրոջ:

5. Ա.Ն. ՀՈՂՈՎՈՒՄ

69. Այս հոլովման տրականը, որ ունի անկամ նան վերջը, կազմւում է երկու կերպ. կամ ուղղականի վերջի ն հնչիւնից առաջ մտնում է ա, իսկ շեղման մէջ ի. կամ ուղղականի վրայ աւելանում է ան կամ նան վերջը: Բացառականի է և գործիական ը վերջաւորութիւնները գրւում են տրականի վրայ: Բից առաջ վերջի ն դառնում է մ: Յոցնականի ք-ն աւելանում է եղակի ուղղականի վրայ, միայն վերջի նից առաջ մտնում է ու, ա, շեղման մէջ և ի: Օրինակ.

Յզակի

ի ն շեղում

| | | |
|----------|---------|--------|
| Ուղ. | դուռն | անձն |
| Հայց. | դուռն | անձն |
| Սեռ. տր. | դրան | անձին |
| Բաց. | ի դրանէ | յանձնէ |
| Գործ. | դրամը | անձամը |

Յոգնակի

| | | |
|----------|---------|---------|
| Ուղ. | դրունը | անձինը |
| Հայց. | դրունս | անձինս |
| Սեռ. տր. | դրանց | անձանց |
| Բաց. | ի դրանց | յանձանց |
| Գործ. | դրամըք | անձամըք |

70. Ան ձևով հորովում են.

1. (Ը)ն վերջացած շատ բառեր, որոնց վերջի ն հնչիւնն աշխարհաբարում դուրս է ընկել, ինչպէս՝ ակն, արեգակն, փայլակն, կայծակն, հիմն (հիման), սրգն, շուրթն, պոյտն, հիւան, դլակն, երկն, քիրտն, սկիզբն, ձուկն, մուկն, արմուկն, կրուկն, թէկն (թիկան), այծեամն, եղեամն, եղէզն (եղեգան). ծիծառն (ծիծառան, ծիծռն, ծիծռան). ասեղն (ասղան, ասեղան). փայծաղն (փայծղան կամ փայծաղան). խլրւրդն (այլ և խլուրդ) ևլն: Գե-

ղարդն, գեղարդան, գեղարդանց ձևերի հետ ունի և գեղարդեան, գեղարդեանց: Այսպէս և բոլոր ումն ածանցով կազմուածները՝ շարժումն (շարժման), ուսումն ևլն:

Գուռն, ամառն, ձմեռն, լեռն բառերի մէջ ու բաղաձայնը ն-ից հետոնալով գառնում է ռ. ինչպէս՝ գրան, ամարան, ձմերան, լերին: Ամառն, ձմեռն երբեմն պահում էլ են իրենց ու հնչիւնը: Գուռն յոգնակին ունի և զուրբ, զրաց, զրօք ձևերը:

Ունկն բառի համար՝ մարդու ականջի իմաստով՝ յոգնակին գործ է ածուում ականջի բառը. իսկ ունկուցն նշանակում է կանթ, կոթ՝ կփի, կաթմայի ևլն:

Ակն իբրև ազրիւրի ակ և թանգաղին՝ քար՝ յոգնակին ունի ակուցն և ակսցն. իսկ իբրև աչք՝ միայն ակուցն, որի սեղ սակայն սովորաբար աչք բառն է գործածուում:

Սերմն, կողմն յոգնակի ունին սերմուցն, կողմուցն կամ սերմացն, կողմուցն: Կայ և սերմանիք (սերմանեաց) ևլն:

2. Ութիւնն ածանցով կազմուած բառերը՝ սրբութիւն ևլն. նաև՝ արիւն, անկիւն, կորիւն, հերիւն, արդիւն, քրթմնջիւն, ձիւն, սիւն, սրքին (սրքիւն), ստին, որ ունին սեռ.—տր. սրբութեան, արեան, անկեան, կորեան, արդեան, հերեան (այլ և հերիւնոյ կամ հերնոյ, հերիւնի). քրթմնջեան, ձեան, սեան, սրքեան, ստեան: Բացառականի մէջ լուս-ն դառնում է և, —ի սրբութենէ, յարեւնէ ևլն: Յոգն.

ուղղականը կազմուած է ք աւելանալով՝ սրբութիւնք, արիւնք, սիւնք, սաինք:—Բրթմնջիւն բացառական ի քրթմնջենէ ձևի հետ ունի և ի քրթմնջանէ: Չիւն, սիւն ունին ի ձեանէ (կամ ի ձիւնէ), ի սեանէ (կամ ի սիւնէ):

3. Տուն, շուն բառերը, որ ունին տան, տամբ, ի տանէ. տունք, տանց, տամբք: Ծուն, շան, ի շանէ և ին:

4. Անուն, ձեղուն հոլովուած են՝ անուան, յանուանէ, անուամբ, անուանք, անուանց. ձեղուն, ձեղուն և ին: Յոգն. ուղղ. ձեղունք:

5. Պաշտօն (պաշտան) հոլովուած է՝ պաշտաման, ի պաշտամանէ, պաշտամամբ, պաշտամունք, պաշտամանց, պաշտամամբք:

71. Ան վերջաւորութիւնն աւելանում է հետևեալ բառերին.

1. Գարուն, աշուն—գարնան, ի գարնանէ, գարնամբ, գարունք, գարնանց, գարնամբք, — աշնան, յաշնանէ, աշունք և ին:

Գարուն, աշուն, ամառն, ձմեռն բառերի տեղ գործ են ածուած և ածանցականները՝ աշնային, աշնայնի, աշնանի. գարնային, գարնայնի, գարնանի. ամառայնի, ամառանի. ձմերային, ձմերայնի, ձմերանի. որոնք հոլովուած են աշնայնոյ կամ աշնանոյ և ին: Ամառանի,

ձմերանի, գարնայնի կամ գարնանի, աշնանի ձևերը նաև ներքոյականի իմաստ ունին՝ իրրև ամառը, ձմեռը, աշնանը, գարնանը: Յամառայինսն—ամառները (ներքոյական իմաստով):

2. Խուրձ, աղջիկ, մանուկ, ծաղիկ, կորեակ և շատ՝ նուազական իկ ածանցով կազմուածներ՝ Յուսիկ, Աստղիկ, Սաթենիկ, Զուիկ (Զուկան=Զրկան), շնիկ, խցիկ, ընչիկ, վոքրիկ, կարճիկ և ին, որոնք ունին՝ խրձան, խրձունք. աղջկան, աղջկունք. մանկան, մանկունք և ին: Ծաղիկ՝ ծաղկան, ծաղկամբ, ծաղկունք, ծաղկանց ձևերի հետ ունի և ծաղկի, ծաղկաւ, ծաղիկք, ծաղկաց կամ ծաղկոյ, ծաղկոց ձևերը: Իսկ կորեակ ունի և կորեկոյ ձևը:

3. Մարդիկ, մարդկան, ի մարդկանէ, մարդկամբ կամ մարդկաւ, — եզակի ձևով յոգնական իմաստ ունի: Մարդ եզակին հոլովուած է՝ մարդոյ, մարդով. որ ունի և կանոնաւոր յոգնակի՝ մարդք, մարդոց, մարդովք:

72. Եան վերջաւորութիւնն աւելանում է հետևեալ բառերին.—Տեսիլ, տեսլեան, ի տեսլենէ, տեսլեամբ, տեսիլք, տեսլեանց, տեսլեամբք:—Հանգիստ, հանդստեան, — այլ և հանդստի, հանգստիւ. յոգն. հանգիստք. հանգստից:—Դովիստ, դովեստամբ, այլ և՛ դովեստի,

գովեստք, գովեստից:—Փախուստ, փախստեան, ի փախստենէ, փախստեամբ, —այլ և փախստի, փախստիւ, —յոզն. փախուստք:—Կորուստ, կորստեան, ի կորստենէ, կորստեամբ, կորուստք: Գալուստ, գալստեան, գալստեանց:—Թագուստ, թագստեան, թագստեամբ, այլ և թագստի:—Պահուստ, պահստեամբ:—Ծնունդ, ծննդեան, ի ծննդենէ, ծննդեամբ, ծնունդք, ծննդեանց, ծննդեամբք, սովորաբար՝ ծննդոց, ծննդովք:—Մնունդ, մննդեան, մննդեանց, այլ և մննդի, մննդոց:—Խորհուրդ, խորհրդեան, խորհրդեամբ, այլ և խորհրդոյ, խորհրդոց, խորհրդի, խորհրդիւ, յոզն. խորհուրդք:—Ժողովուրդ, ժողովրդեան, ի ժողովրդենէ, ժողովրդեամբ, ժողովուրդք, ժողովրդեանց, այլ և ժողովրդի, ի ժողովրդէ, ժողովրդոյ, ժողովրդովք:—Ամիս, ամսեան, յամսենէ այլ և ամսոյ, ամսով. յոզն. ամիսք, ամսոց, ամսովք:—Շարաթ, շարաթեան. սովորականն է շարաթու:—Ժամանակ, ժամանակեան, սովորաբար՝ ժամանակի, ժամանակաւ. ժամանակք, ժամանակաց:—Սերկ (այսօր), սերկեան:—Վաղիւ, վաղուեան, վաղուենէ, այլ և վաղուի, ի վաղուէ կամ ի վաղնջենէ: Այսպէս նշ յաւելմամբ նաև՝

Տիւ, տունջեան, ի տունջենէ, տունջեամբ

(արտասանում է տունջեան), այլ և ի տուէ, տուով. յոզն. տիւք, տիւս:

73. Մահ, հոլովում է ուան վերջաւորութեամբ՝ մահուան, ի մահուանէ, մահուամբ, մահուանք կամ մահուներ, մահուանց, այլ և ու հոլովման տակ՝ մահու, մահք, մահուց, մահուք: (Տես § 70. 4):

74. Ին շերման ձևով հոլովում են՝

1. Որոշ թուով երկավանկ (ը)ն վերջացած բառեր, որ են՝ Ողն, ողին, սզուներ:—Մասն, մասին, մասուներ:—Մատն, մատին, ի մատանէ, մատուներ:—Կամն, կամին, կամուներ: Ափն, ափին կամ ափան, ափուներ:—Բունն, բուն կամ բուան, բուուներ:—Թոռն, թոռին, ի թոռանէ, թոռուներ կամ թոռանք:—Անձն, անձին, անձինք կամ անձուներ: Բարդ բառերը՝ միանձն, դատարկանձն, վեհանձն, մեծանձն ունին յոզն. միանձուներ, դատարկանձուներ, վեհանձուներ, մեծանձուներ:—Ազն, ազին, ազինք կամ ազուներ (վերջինս ազնիւ մարդիկ իմաստով): Բարդ բառերը՝ ղիւցազն, դիւցազին կամ դիւցազան, դիւցազուներ, վեհազն, վեհազին, վեհազուներ կամ վեհազինք, հայկազն, հայկազին, հայկազուներ:—Հարմն, հարմին, ի հարմանէ կամ ի հարմնէ,

հարսինք կամ հարսունք: Յաւերժահարսն, յաւերժահարսունք, — Դառն, դառին, ի դառանէ կամ ի դառնէ, դառինք, — Բեռն, բեռին, ի բեռանէ կամ ի բեռնէ, բեռինք, — Եզն, եզին, յեզանէ, եզինք, — Եղն, եղին, յեղանէ, եղինք, — Դաշն, դաշին, դաշինք, — Ծաշն, խաշին, ի խաշանէ կամ ի խաշնէ, խաշինք, — Ենն, նեռին, ի նեռանէ, նեռինք, — Դառն, դառին, դառինք, այլ և դառնի, դառինք, — Սառն, սառին, սառանց, — Կաթն, կաթին, կաթամբ, կաթանց, — Դոխն, դոխին, դոխամբ, — Լեռն, լեռին, ի լեռնէ, լեռամբ, լեռինք, լեռանց, լեռամբք, —

2. Թուականներից՝ Եօթն, եօթին կամ եօթան, եօթամբ, եօթանք, եօթանց, եօթամբք, այլ և եօթեան, եօթեանք, եօթեանք, նոյնպէս՝ եօթնի, եօթնիւ, եօթնից, — Տասն, տասին, տասունք, տասանց, այլ և տասնից: Այսպէս և եօթնեւտասն, ութեւտասն, իննեւտասն ունին՝ եօթնեւտասին, եօթնեւտասմբ, եօթնեւտասանք, եօթնեւտասանց և ըն:

3. Չեռն, ձեռին, ի ձեռանէ: Յոգնակին հազուադէպ՝ ձեռինք, ձեռանց. սովորաբար՝ ձեռք, ձեռաց, ձեռօք: Առատաձեռն լինում է՝ առատաձեռնի, առատաձեռնից: Ոտն, սաին (երբեմն՝ ստան), յտանէ: Յոգն. ոտք, սաից, սաիք, երբեմն ստաց:

6. ԵՐ, ԵՂ, ՀՈՒՈՎՈՒՄ

75. Այս հոլովման տրականը կազմում է ուղղականի վերջի ը, ղ բաղաձայններից առաջ եմանելով: Բացառականի է, գործիականի ը վերջաւորութիւնները, ինչպէս և յոգնականի քն, աւերանում են տրականի վրայ: Օրինակ՝

| | Եզակի | | Յոգնակի | |
|---------|----------|---------|----------|---------|
| Ուղ. | տարր | աստղ | տարերք | աստեղք |
| Հայց. | տարր | աստղ | տարերս | աստեղս |
| Սև. տր. | տարեր | աստեղ | տարերց | աստեղց |
| Բաց. | ի տարերէ | յաստեղէ | ի տարերց | յաստեղց |
| Գործ. | տարերք | աստեղք | տարերքք | աստեղքք |

76. Այսպէս հոլովում են սակաւաթիւ ը, ղ վերջացած բառեր, որոնք մեծ մասամբ և ուրիշ հոլովումների տակն են գնում. ինչպէս՝

Տարր, որ ունինաւ տարրոյ, տարրի, տարրից. յոգն. տարերաց, տարերօք ձեռքը, — Աստղ ունի յոգն. նաև աստեղունք, աստեղաց, աստեղօք, — Կայսր, կայսեր, կայսերք, կայսերք, — կայսերաց, կայսերօք, — Ոսկր, ոսկեր, ոսկերք, ոսկերաց, ոսկերօք, — Դուստր, դստեր, ի դստերէ, դստերք, դստերք, դստերց, — այլ և դստերաւ, դստերաց,

դատերօք:—Ուստր, ուստեր, ուստերաց:—Համն, համեր, համերք, համերց:—Եզը, եզեր, եզերք, եզերքք, եզերքքք, —եզերաց, եզերօք, եզերօվք:—Ծովկզը, նակ ծովկզերի, ծովկզերաւ:—Ազըր, ազդեր, ազդերք, ազդերաց:—Լիտը, լտեր, լրտերք, լտերց:—Կողը, կողեր, կողերք, կողերց, կողերաց:—Կուզը, կպեր, կպերք կամ կպրոյ, կպրօվք:—Անզը, անգեղ, անգեղք, անգեղց, —անգեղաց:—Կոճը, կոճեղ, կոճեղք, —Արկը, արկեղ, արկեղաց:—Սկուտեղ կամ սկտեղ, տր, նոյնպէս՝ սկուտեղ կամ սկտեղ, գործ. սկտեղք, սկտեղքք, այլ և սկուտեղի (սկտեղի), սկուտեղաց, սկուտեղօք:—Աղջիւր (աղբեւր), աղբեր, յաղբերէ, աղբերք, աղբերքք, աղբերց, աղբերքքք, այլ և աղբերաւ, աղբիւրք (աղբեւրք), աղբիւրաց կամ աղբերաց, աղբերօք:—Եղջիւր (եղջեւր), եղջեր, եղջերք, եղջերքք, եղջերց, եղջերքքք, այլ և եղջիւրիւ կամ եղջերիւ, եղջիւրք, եղջերաց, եղջերօք կամ եղջերօվք:—Ալիւր (ալեւր), ալեր, այլ և ալիւրոյ, յօգն. ալիւրք:—Բլուր, բլեր, բլերք: Սփորական՝ բլրոյ կամ բլրի, բլրօվք, բլուրք, բլրոց:

ԱՆԿԱՆՈՆ ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐ

77. Այր, տէր:

Եզակի

Յոգնակի

| | | | | |
|------|-------|----------|--------|-------------------|
| Ո. | այր | տէր | արք | տեարք |
| Հ. | այր | տէր | արս | տեարս |
| Ս.Տ. | տոն | տեառն | արանց | տերանց, տեարց |
| Բ. | յառնէ | ի տեառնէ | յարանց | ի տերանց, ի տեարց |
| Գ. | արամբ | տերամբ | արամբք | տերամբք |

78. Այր բառի պէս հոլովում են և քերականայր, սկեսրայր (այլ և սկեսրայրի, ի սկեսրայրէ): Տէր բառի պէս՝ տանուտէր (նաև տանուտերաց, տանուտերօք), պարտատէր (նաև պարտատիրի, պարտատիրաց):

79. Հայր, մայր, եղբայր:

Եզակի

Յոգնակի

| | | |
|----------|--------|--------|
| Ուղ. | մայր | մարք |
| Հայց. | մայր | մարս |
| Սեռ. տր. | մօր | մարց |
| Բաց. | ի մօրէ | ի մարց |
| Գործ. | մարբ | մարբք |

80. Այսպէս հոլովում են՝ հայր, եղբայր, այլ և բարդ բառերը՝ նախամայր, նախահայր,

վանահայր ելին: Հայր յոգն. սեռական-տրական
և բացառ. ունի նաև՝ հարանց, ի հարանց ձեռ,
իսկ գործ. նաև հարամբ, հարամբք:

81. Բոյր (հօրաբոյր, մօրաբոյր ելին.):

| | | |
|-------|------------------|----------------------|
| | Եզակի | Յոզնակի |
| Ուղ. | բոյր | բորք (բոյրք, բուերք) |
| Հայց. | բոյր | բորս (քեռս) |
| Ս. Տ. | քեռ (քոր, քուեր) | քերց |
| Բաց. | ի քեռէ | ի քերց |
| Գործ. | քերք | քերքք |

82. Օր:

| | | |
|-------|--------------|---------|
| | Եզակի | Յոզնակի |
| Ուղ. | աւր (օր) | աւուրք |
| Հայց. | աւր (օր) | աւուրս |
| Ս. Տ. | աւուր | աւուրց |
| Բաց. | յաւրէ (յօրէ) | յաւուրց |
| Գործ. | աւուրք | աւուրքք |

83. Սյսպէս և հասարակօր: Օր ունի և ի
հոլովման պէս օրի ձեռ՝ առ օրին, նոյն օրին,
սոյն օրին:

84. Մի քանի ը վերջացած բառեր ևս կա-
նոնաւոր ձևերի հետ ունին և մայր, քոյր, օր

բառերի պէս կազմուած անկանոն ձևեր, այն է՝
գործիականի ը և յոգն. տրականի ց վերջաւօ-
րութիւններն աւելանում են անմիջապէս ուղ-
ղականի վրայ. ինչպէս՝ հուր ունի գործ. հրով
և հուրը, յոգն. հուրքք. նոյնպէս ջուր, հանուր,
ընդհանուր ունին ջուրը, ջուրքք, ջուրց. հանուրք,
հանուրքք, հանուրց, ընդհանուրք, ընդհանուրքք,
ընդհանուրց ձևերը, — սօվորական ջրով, ջրոց.
ընդհանրով, ընդհանրոց կամ ընդհանրից:
Նոյնպէս՝ իւրաքանչիւրց, անձնիւրց (§ 64.
4. ծան.)։ Չեն և բառի ձեռ բնից գործ. ձեռը
կամ ձեռը (= ձեռամբ), որից ձերբակալ, ձեր-
բազատ, ձեռքասուն ելին: Սյսպէս և ներքեւում
(§§ 85, 86) դրուածներն յոգն. տրականը կազ-
մուած է միայն ց տառով, ոչ աւելանում է
ան, նան, այ, նայ, ոյ տծանցների վրայ:

85. Կին, տիկին:

| | | |
|-------|--------------|-------------------|
| | Եզակի | Յոզնակի |
| Ուղ. | կին | կանայք |
| Հայց. | կին | կանայս |
| Ս. Տ. | կնոջ | կանանց, կանաց |
| Բաց. | ի կնոջէ | ի կանանց, ի կանաց |
| Գործ. | կանամբ, կնաւ | կանամբք |

| | Եզակի | Յոզնակի |
|------|-----------------|--------------------------------|
| Ռ. | տիկին | տիկնայք |
| Հ. | տիկին | տիկնայս |
| Ս.Տ. | տիկնոջ | տիկնանց, տիկնայց, տիկնաց |
| Բ. | ի տիկնոջէ | ի տիկնանց, ի տիկնայց, ի տիկնաց |
| Գ. | տիկնամբ, տիկնաւ | տիկնամբք, տիկնաւք (-օք) |

ՅԵ. Կին, տիկին՝ բառերի յօգնականի պէս հոլովւում են

1. Այք, եայք, անք յօգնական ածանցով կազմուածները՝ աղախին (եզ. տր. աղախնոյ), յօգն. ուզդ. աղախնայք, աղախնեայք. հայց. աղախնայս, աղախնեայս. տրակ. աղախնանց, աղախնայց, աղախնեայց, աղախնաց: Պարոն, միայն յօգն. ուզդ. պարոնայք: — Նու, նուոյ, նուով կամ նուաւ. նուք, նուոց, այլ և նուանք, նուանց:

2. Եայք, այք ածանցներով կազմուածները, որ ցոյց են տալիս մի անձի հետևողներ կամ մի երկրի աղքեր, բնակիչներ, տեղացիներ, համապատասխան ցի ածանցին, ինչպէս՝ հայաստանեայք (հայաստանցիք), ասորեստանեայք, արևելեայք, միջերկրեայք կամ միջերկրայք, ծովեզերայք, հայկազնեայք, բահաղիմայք, որ ունին՝ տր. հայաստանեայց կամ հայաստանեաց, դործ. հայաստանեօք: Ալազայ, ալամայ, դուզ-

նաքեայ բառերն ևս այս կարգի ածանցուածների նման յօգն. տրականն ունին՝ սովորական ապագայից, ակամայից, դուզնաքէից ևևի հետ և ապագայց, ակամայց, դուզնաքեայց, դուզնաքեօք (եզ. դուզնաքէի, դուզնաքէիւ):

Յ. Եանք, անք ածանցներով կազմուածները, որ յօգնակի հաւաքական իմաստով ցոյց են տալիս մի տոհմի կամ անձի վերաբերեալ մարդիկ կամ հետևողներ. օրինակ՝ Ղևոնդեանք, Ղևոնդեանց. Ստոմեանք, Ստոմեանց. Վարդանանք, Վարդանանց. Մարեմանք, Մարեմանյ. Եպիկուրեանք, Եպիկուրեանց: Ամենայն բառի յօգն. սեռ.-տրականը սովորական ամենայնից ևևի հետ ունի՝ ամենայնց:

4. Գարոյք, ըարոյք, պարտոյք (եզակի՝ պարտոյ), սարոյք (եզակի՝ սարոյ) սովորական գահոյից, բարոյից, պարտոյից, սարոյից ևևերի հետ ունին երբեմն և գահոյց, բարոյց, պարտոյց, սարոյց:

ՅԶ. Եան և եայ (այ) ածանցները յաճախ փոխանակում են իրար, իսկպէս նոյն ածանցն են տարբեր ևևերով. ինչպէս՝ արևելեայ, արևելեան. հայկազնեայ, հայկազնեան. դունեայ, դունեան. տասնամեայ, տասնամեան. քրիստոնեայ, քրիստոնեան ևլն: Եան = եայ նոյն հո-

լովական ածանցն է, որ տեսնում ենք կան հո-
 լովական ձևի մէջ (§ 72). ուստի և դրանցով
 կազմուած բառերը եղակիւում սովորաբար ան-
 փոփոխ են մնում: մի քանի բառեր միայն հո-
 լովում են ի կամ ոյ հոլովման ձևով (§ 57. 1).
 ինչպէս՝ մամիկոնեան, մամիկոնենի կամ մամի-
 կոնենոյ, մամիկոնենիւ. յոգն. մամիկոնեանք,
 մամիկոնեանց կամ մամիկոնենից. բայց և՛ մա-
 միկոնէի, մամիկոնէիւ, մամիկոնէից (մամիկոնեայ
 ուղղականից, ինչպէս՝ միջօրեայ, միջօրէի. պաշ-
 տօնեայ, պաշտօնէի. քրիստոնեայ, քրիստոնէի
 բառերը): Տասնամեան, տասնամենի, տասնա-
 մենից կամ տասնամեայ, տասնամէի, տասնա-
 մէից, — տասնամսեայ, տասնամսէի, տասնամ-
 սէից: Նոյնպէս՝ երկեմեան (երկամեայ), երե-
 մեան (եռամեայ), եօթնամեան (եօթնամեայ),
 քսանամեան, հարիւրամեան ևլն:

Այսպէս հոլովում են նաև որեայ, որայ
 յոգնական ածանցով կազմուածները (§ 53. 5).
 վանորայ կամ վանորեայ (=վանքեր, վանքցի-
 ներ), վանորայոյ, վանորայով. վանորայք կամ
 վանորեայք, վանորայց, վանորեայց, վանորեաց
 կամ վանորէից: Արտորայ, արտորայի կամ արտո-
 րայոյ, արտորայք, արտորայից, արտորայոց, — այլ
 և արտորեայ, արտորէի, արտորեայք, արտորէից:

§8. Դիք (անեզական = աստուածներ), հո-
 լովում է՝ դիք, զդիս, դից, դիօք:

§9. Գիւղ (գեաւղ, գեօղ, գեւղ, գեղ),
 սեռ. տրական ունի՝ գեղջ (գեաւղջ, գեւղջ),
 բացառ. ի գեղջէ: Գործիականն և յոգնակին ի
 հոլովման ձևով գիւղիւ, գիւղք (գեաւղք, գեւղք),
 գիւղից (գեաւղից), գիւղիք:

§10. Առանձին ձևով յոգնակի ունին և ներ-
 քեում դրած մի քանի (ը)ր, (ը)ն վերջացած
 բառեր, որոնց եղականի մէջ ը առող դուրս է
 ընկնում: ինչպէս՝ ծաղը, ասը, մեղը բառերի
 մէջ (§ 59. 3), իսկ յոգնականի մէջ առնում են
 ունը. օրինակ՝

| | Նզակի | Յոգնակի |
|----------|----------|-----------|
| Ուղ. | փոքր | փոքունք |
| Հայց. | փոքր | փոքունս |
| Սեռ. տր. | փոքու | փոքունց |
| Բաց. | ի փոքուէ | ի փոքունց |
| Գործ. | փոքու | փոքումք |

§11. Այսպէս հոլովում են նաև՝
 ծանը, ծանու, ծանունք, ծանունց, ծա-
 նումք: — Բաղըր, քաղցու (կայ և քաղցուի,
 քաղցրի), քաղցունք, քաղցունց, դործ, քաղ-

ցութք: — Մանր, մանու, մանունք, մանունց: —
Թանձր, թանձու (կայ և թանձրու, թանձրոյ),
թանձուք (կայ և թանձրուք, թանձրոյք): —
Նօսր, անօսր, անօսրի, անօսրից, բայց և նօ-
սուք, անօսուք (նաև անօսուք):

Յոզն, յոզնակի՛ր՝ յոզունք, յոզունց, յոզումք:
Ինն, ըննի, ըննիւ, ըննից, ըննիւք. բայց և
ինունք, ինունց, ինումք (§ 57. 4):

ՓՈՒԱՆՅՈՒՄ ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐԻ ՄԷՁ

92. Կան բառեր, որոնց եղակին մի հոլովման տակ
է գնում, իսկ յոգնակին մի ուրիշ. կամ մի հոլովը մի
ձևով է հոլովւում, միւսներն՝ ուրիշ: Կան բառեր ևս,
որոնք հոլովւում են երկու, երբեմն և երեք հոլով-
ման ձևով, կամ թէ այս ու այն հոլովները միայն
ունին մի քանի տեսակ ձևեր: Այդպիսի մի քանի բա-
ռեր գրուած են վերևում. կարևոր է ի նկատի ունենալ
և հետևեալները.

93. Չայնաւոր և բաղաձայն հոլովումների փո-
խանցում.— Ծուկգն կամ ծուկգ, ծնգան, ծնգամբ, —
ծունգք, ծնգաց, ծնգօք: Բարձ, բարձու, ի բարձուէ,
բարձունք, բարձանց, բարձամբք: Երեց, երիցու կամ
երիցոյ, յերիցուէ. գործ. երիցու կամ երիցամբ, — երի-
ցունք, երիցանց, երիցամբք: — Պառաւ, պառաւոյ, — պա-
ռաւունք, պառաւանց: Քար, քարի, քարիւ կամ քա-
րամբ, — քարինք, քարանց, քարամբք: — Արեւան, ար-

աւանի, արտանայ, — արտանունք, արտանանց (եղա-
կին նշանակում է և նարի գլուխ): — Սրուն, սրունք,
սրունից, այլ և սրանց, սրուանց, կամ սրունկ(ն), սրըն-
կունք, սրնկանց: Ճիրան, ճիրանի, ճիրանաց, — ճիրա-
նունք, ճիրանանց, ճիրանամբք: — Խոնջան, խոնջանի
կամ խոնջանոյ, — խոնջանունք, խոնջանանց: — Կանքեղ,
կանթեղի, կանթեղաց, — այլ և կանթեղամբ, կանթե-
ղամբք: — Ողջ, ողջոյ, ողջոց կամ ողջի, ողջաց, այլ և
ողջամբ: — Անդրանիկ, անդրանկան, յանդրանկանէ, —
այլ և անդրանիկ, յանդրանիէ, անդրանկաց: — Հողմ,
հողմն, հողմոյ, հողմով, — հողմունք, հողմոց: — Ուրմ, որմն,
որմոյ, որմք կամ որմունք, որմոց: — Գորս, գորտոյ,
գորտի, գորտու, — գորտունք, գորտոց, գորտից, գոր-
տուց: — Աղուես, աղուեսու (աղուեսու), կամ աղուեսոյ,
աղուէսք կամ աղուեսունք: — Առիւծ, առիւծու կամ
առիւծոյ, առիւծք կամ առիւծունք: Նոյնպէս, Խալսկո-
պոս, սաբկաւագ: Բուրմ, երագ, պարիսպ, ձագ, անոյս,
նուագ, նապաստակ, ունին եպիսկոպոսք, սարկաւագք,
քարմք, ճրագք, պարիսպք, ձագք, անոյշք, նուագք,
նապաստակք, այլ և եպիսկոպոսունք, սարկաւագունք,
քրմունք, ճրագունք, պարսպունք, ձագունք, անու-
շունք, նապաստակունք. իսկ պատերազմ, սան, երագ
ունին պատերազմունք, սանունք, երագունք:

94. Չայնաւոր հոլովումների փոխանցում.

1. Զգես, զգեստու, — զգեստի, զգեստիւ, — այլ և
գործ. զգեստով: — Զարդ, զարգու, զարգուք, — այլ և
գործ. զարդիւք: — Գրօ, գրօու, գրօուց, — գրօլի, գրօ-
չից: — Զօր, զօրու, ի զօրուէ, ի զօրէ. գործ. զօրու, զօ-
րաւ, զօրով, — զօրք, զօրաց, զօրօք: — Գանձ, զանձու, —

գանձի, գանձից, գանձիւք:—Դաս, դասու, ի դասուէ,
 —գասի, ի գասէ, գասիւ, այլ և գործ. գասով:—Չեմք,
 զինուց,—զինից:—Յուլ, ջրու, ջրուց,—ջրի:—Բարք, բար-
 րուց, բարուք, բարիւք:—Վարք, վարուց, վարուք,—
 վարիւք, վարովք:—Նաւ, նաւու, —նաւի, նաւաւ: —
 Հաւ, հաւու, հաւուց,—հաւաց:—Արեւ, արեւու, —յարևի:
 —ժամ, ժամու, —ժամաւ, ժամօք:—Ծակ, ծակու, ծա-
 կուց,—ծակի, ծակաց:—Համբաւ, համբաւու, համբաւուց,
 համբաւուք,—համբաւի, համբաւաւ, համբաւաց. համ-
 բաւօք, կամ համբաւոյ, համբաւով, համբաւոց, համբա-
 ւովք:—Խրատ, խրատու, —խրատոյ, խրատով, խրատոց,
 խրատովք,—գործ. նաև խրատիւք, խրատօք: — Պարտ,
 պարտոյ,—պարտք, պարտուց (կայ և պարտիք, պար-
 տեաց:

2. Կացիմ, կացնոյ, կացնով,—կացնի, կացնաւ,
 այլ և կացնեաւ:—Պատիւ, պատուոյ,—պատուի:—Լու-
 սին, լուսնոյ,—լուսնի:—Գոյն, գունոյ, գունոց,—գունի,
 գունից, այլ և գունաց:—Վիտք, շփոթոյ, շփոթոց,—շփո-
 թի, շփոթից:—Լեզու, լեզուոյ, լեզուով, լեզուոց, լե-
 զուովք,—լեզուի, լեզուաւ, լեզուաց, լեզուօք:—Ամուր,
 ամրոյ, ամրոց. ներքոյ. չամրօջ,—ամրից կամ ամրաց:
 —Գիտեք, գիշերոյ, —գիշերի:—Մարմին, մարմնոյ, —
 մարմնի:—Երագ, երացոյ,—երացի:—Քիս, քստոյ,—
 քստի:—Կսկիծ, կսկիծոյ,—կսկիծի, կսկիծից:—Քաղց,
 քաղցոյ,—քաղցի:—Սով, սովոյ,—սովի:—Պատիժ, պատժոյ,
 —պատժի:—Գիր, գրոյ,—գրի:—Թեւ, թևոյ, — թևի:—
 Թուղթ, թղթոյ,—թղթի:

3. Երկրորդ, երկրորդի, երկրորդաւ, երկրորդաց,
 երկրորդօք,—երկրորդիւ, երկրորդից, երկրորդիւք: Նոյն-

պէս երրորդ: Հայկ, Հայկայ,—Հայկի.—Դաւիթ, Դաւ-
 թայ,—Դաւթի.—Հում, ի Հումայ.—ի Հումէ:—Ղու-
 կաս. Ղուկայ, Ղուկասու: Յակոբ, Յակոբայ,—Յակոբու:
 —Յովսէփ, Յովսէփայ, Յովսէփու կէն:—Շնորհ, շնորհի,
 շնորհիւ,—Շնորհք, շնորհաց, շնորհօք:

95. Բազմազան բաների հոլովման ժամանակ
 երկրորդ բազմազանի սովորական ձևի փոխանակ յա-
 ճախ վերցնում է ուրիշ ձև: Օրինակ՝ գիր, սեր, Ասուած
 սովորաբար հոլովում են զրոյ, զրով. սիրոյ, սիրով.
 Աստուծոյ, Աստուծով. բայց մասեմագիր, մարդասեր,
 անասուած հոլովում են՝ մատենագրի, մատենագրաւ,
 մատենագրաց. մարդասիրի, մարդասիրաւ, մարդասի-
 րաց. անասուածի, անասուածից:

96. Համանուն բաները՝ մեծ մասամբ տարբեր ար-
 մաններից ծագած լինելով տարբեր ձևով էլ հոլովում են.
 Ընչպէ՞ս Այր, այրի, այրիւ (=քարայր), — այր, առն, արամբ
 (=աղամարդ:—Մայր, մայրի, մայրիւ (=մայր ծառ), —
 մայր, մօր, մարբ (ծնող մայր):—Հայր, հայրի (=մարդպետ),
 —հայր, հօր (=ծնող հայր):—Կոյս, կուսի, կուսից (=աղ-
 ջրիկ), —կոյս, կուսի, կուսաց (=կողմ): — Ուրբ, որթոյ
 (=խաղողի որթ), —ուրբ, որթու (=հորթ):—Փող, փողոյ
 (=խողովակ, զուռնա, դրամ), —փող, փողի, փողից (=փողոց,
 վիզ):—Խաղ, խաղոյ կամ խաղու (=խաղալ), —
 խաղ, խաղի, խաղիւ (=գետի խաղ):—Դի, գիւց, դիք (=աստուածներ):—
 Սան, սանի, սանից (=կաթօայ), —սան, սանու, սա-
 նուք, սանուց (=սանիկ):—Գեղ, գեղոյ (=գեղեցկու-
 թիւն), —գեղ, գեղջ (=գիւղ) կէն:

ածւում, իսկ տրականը իբրև բայի և ածականի խնդիրս Սեռականի համար իբրև հոլովակերտ երևում են ընդհանրապէս ը(ւ), իսկ տրականի համար մ'(ւ) բաղաձայնները կամ վանկերը:

3. Բացառականը կազմւում է սովորաբար տրականից՝ է(ն) վերջաւորութեամբ:

4. Գործիականի ը(ւ) հոլովակերտը երբեմն կրկնւում է:

100. ՀԱՐՅԱԿԱՆ ԵՒ ԱՆՈՐՈՇ ԱՆՈՒՆՆԵՐ

| Եզակի | | | Յոգնակի | | |
|-------|---------|---------|---------|---------|--|
| Ո. | ո, ով | — | ոյք | | |
| Հ. | զո, զով | յո, յով | զոյս | | |
| Ս. | ոյր | ուր | ոյց | | |
| Տ. | ում | — | ոյց | | |
| Բ. | յումէ | ուստի | յոյց | | |
| Գ. | — | — | — | | |
| Ո. | ոք | — | ոմն | ոմանք | |
| Հ. | զք | — | զոմն | զոմանս | |
| Ս. | ուրուք | ուրկք | ուրումն | ումանց | |
| Տ. | ումկք | — | ումնն | ումանց | |
| Բ. | յումկքէ | ուստկք | յումննէ | յոմանց | |
| Գ. | — | — | ումամք | ումամքք | |

Եզակի

| | | | |
|----|----------------|--------|--------|
| Ո. | դի, դինչ | ինչ | իմն |
| Հ. | զի, զինչ | ինչ | իմն |
| Ս. | էր | իրկք | իրնն |
| Տ. | իմ, հիմ, էրում | իմկք | իմնն |
| Բ. | առիմէ, դմէ | յիմկքէ | յիմննէ |
| Գ. | իւ | իւկք | — |

101. Ո°, ո՞վ=ով հարցականի համար պէտք է իմանալ.

1. Պակասած գործիականի, երբեմն և միւս հոլովների տեղ գործ են ածւում ո՞ր հարցականի հոլովները. որով, որովք, — որք, որոց (— ոյք, ոյց):

2. Գործ են ածւում և ո՞ք անորոշի հետ՝ ո՞վ ո՞ք կամ ո՞ ո՞ք=ինչ մարդ, որ մարդը, որ հոլովւում է՝ զո ոք, ոյր ուրուք, ում ումնք, յումէ (յումմէ) ումնքէ:

102. Զի°, զի՞նչ=ինչ հարցականի համար պէտք է իմանալ.

1. Ուղղականի սկզբի գ-ն նախդիր է, ուստի և հայցականը միւս նախդիրներով լինում է՝ յինչ, առ ինչ: Զի° ձևն ուրիշ նախդրով չի բանուում:

2. Տրականի իմ ձևը գործ է ածւում սովորաբար նախդրով՝ յիմ, առիմ:

3. Բացառականը յ(ի) նախդրով ձև չունի:

4. Զի°, զի՞նչ, կ՞ր, հի՞մ, երո՞ւմ, առի՞մե, զմե՞, առի՞նչ նշանակում են և բնդե՞ր, վասն կ՞ր, ե՞ր աղա-գաւ, զիա՞րդ=ինչ, ինչո՞ւ, ինչո՞ւ համար, ինչի՞ց, էր (գաւառական՝ հէր, իսի):

5. Ձի՞նչ գործ է անում և ի՞նչ անորոշի հետ՝
 զի՞նչ ինչ—ինչ բան, որ հոլովում է՝ էր իրիք, իմ
 իմիք, իւ իւիք: Գործ է անում և ուրիշ անունների
 հետ իրրև մականունն ու, որպիսի բառերի իմաստով.
 օրինակ՝ Ձինչ օգուտ է մարդոյ: Ձինչ շահ եղև: Ձինչ
 գործ գործեալ է քո: Առ իս զինչ պատգամ յղևն: Վասն
 զինչ պատճառի: Յինչ օրէնս, յինչ կամս, յինչ խոր-
 հուրդս: Ձինչ որ (—ինչ մարդ, ինչ որմին—որպիսի որ):

103. Յո՞, ո՞ւր, ուսի՞ հարցականների համար
 պէտք է իմանալ.

1. Յո՞, յո՞վ ձեկրք, որ ո, ով հարցականի հայ-
 ցական հոլովն են յ նախորդով, գործ են անում, երբ
 գործողութեան գէպի մի կողմ ուղղուած լինելն է հար-
 ցում. իրրև յո՞ր կողմ, յո՞ր տեղի, յո՞ր վայր, ընդ ո՞ր
 կամ ընդ ո՞ր կողմ—գէպի ուր. Օրինակ՝ Յո՞ երթաս:
 Յերեսաց քոց ես յո՞վ փախեայց: Ոչ գիտեմք յո՞վ եր-
 թաս: Յո՞ թավեցից զդառնութիւն թիւնից: Արդ յո՞
 գէմ եղեալ զախիցուք: Գնացնն յո՞վ և կամեցին:
 Յո՞ եհան զմեզ Քրիստոս և յո՞ իջուցաք մեք զանձինս:
 Ձմեր վատթարութիւնս յո՞ ատրայց:

2. Ո՞ւր (նոյն իմաստով և ուրանօր) ձեր, որ ո՞, ո՞վ
 բառի սեռական հոլովն է, գործ է անում, երբ մի տեղ
 լինելը կամ գործողութեան մի տեղում կատարուելն է
 հարցում՝ իրրև ներքոյական յոր՞ում տեղով, յոր՞ում
 վայրի—ուր, որ տեղ, որ տեղում: Օրինակ՝ Ո՞ւր է որ
 ծնաւ արքայն ճրէից: Ո՞ւր են օթեանք քո: Ո՞ւր կա-
 միս զի պատրաստեսցուք: Ո՞ւր եղիք զնա:

3. Ուսի՞—որտեղից, ումնից, ինչից, բացառա-
 կանի համար կայ և ո՞ւս ձեր:

104. Ոմն, ոմ, — իմն, ինչ, — ուրեմ, ուրեմն թէ
 անորոշ անուն են և թէ անորոշ մականունն: Անորոշ
 անուն են, երբ իրրև զոյական մենակ են բանում. անո-
 րոշ մականուն են, երբ իրրև անական մի անունն վը-
 րայ են գրում: Ոմն, ոմ սովորաբար գործ են անում
 անձի համար, իմն, ինչ իրրև համար. բայց պատա-
 ճում են և ոմն իրրև համար, իսկ իմն անձի համար:

105. Ոմն ոմ անորոշների համար պէտք է իմանալ.

1. Իրրև անորոշ անուն նշանակում են՝ մարդ, մի
 մարդ, մեկը (ոմիմն), որը ... երբ. յոգնակին՝ ումնմ, մի
 քանիսը, մի քանի հոգի: Օրինակ՝ Ասէ ոմն ցնա: Ոմն
 պահէ օր ըստ օրէ, և ոմն պահէ զօրհանապաղ: Ումնմն
 ես հինգ քանքար, և ումնմն երկուս, և ումնմն մի:
 Ոմանք ի դպրացն: Մեծ ոմն: Ոմն մեծատուն: Ո՞րպիսի
 որ: Այս որ, այն որ, իւրաքանչիւր որ, ամենայն որ:
 Պարզամիտ որ էին: Մի ոմն, մի ոմ հոլովում են՝ միոյ
 ուրումն, միում ումնմն ելն. միոյ ուրուք, միում ու-
 մեք ելն: Մի ոմն ի ձէնջ, ասէ, կըրարք, զիս մատնե-
 լոց է ի մահ: Ընթանալ ամենեքին ընթանան յասպա-
 բիզին, այլ մի ոմ առնու զյաղթութեանն: Ըստ ասոյի
 արձակէր նոցա դատաւորն զվի ոմ կապեալ՝ զոր ին-
 քեանք խնդրէին:

2. Իրրև անորոշ մականունն նշանակում են՝ մի
 (մը), յոգնակի անունն հետ՝ մի քանի և սովորաբար
 համաձայնում են իրրև անունն հետ: Օրինակ՝ Քահա-

նայ ոմն: Առն ուրումն մեծատանն Թագաւոր զոմն ա-
սեն զՅիսուս: Կանայք ոմանք: Մարգարէ որ յառաջ-
նոցն յարեաւ Ի կնոջէ ումննէ ծնաւ: Բանթուրակայ
ուրումն որդի:

3. Բացասական, հարցական, թէական, ենթա-
դրական խօսքերի մէջ գործ է ածուում ո՛ր բառը, ուստի
և ասուում է ոչ ոք, որ հօլովուում է՝ ոչ զոք, ոչ ուրուք,
ոչ ումնք, ոչ յումնքէ: արդեւական խօսքերի մէջ՝ մի՛ ոք,
մի՛ ուրուք, մի՛ ումնք ելն: Յաճախ ոչ և մի՛ բացասա-
կանները բաժանուում են ո՛ր բառից: Օրինակ՝ Եթէ ու-
րուք եղբայր մեռանիցի: Ոչ գուզնաքեայ որ էին նորա:
Ոչ որ ծառայ (== ոչ մի ծառայ) կարէ երկուց տերանց
ծառայել: Իցէ որ ասա: Եթէ որ ունիցի ականջս լսե-
լոյ՝ լուիցէ:

4. Ո՛ր եղակի ձևով երբեմն յոգնակի իմաստ ունի.
Ուր երկու որ (== երկու հոգի) ի միասին իցեն: Եթէ
այնպիսիք ոչ որ գտանիցին:

106. Ի մն, ինչ անորոշների համար պէտք է
իմանալ.

1. Իբրև անորոշ անուն նշանակում են՝ բան, մի
բան: Օրինակ՝ Միթէ կարօտացոյք իմիք, — և ոչ իմիք:
Էւալ յումնքէ և յիմնքէ: Ունիմ ինչ ասել քեզ: Ակն
ուշէր անուլ ինչ ի նոցանէ: Ի Նազարէթէ մարթ ինչ
իցէ բարւոյ իմիք լինել (== Նազարէթից կարելի բան է,
որ լաւ բան լինի): Բարւոյ իրիք լինին պատճառ: Չար
ինչ: Սակաւ ինչ: Այլք այլ իմն աղաղակէին: Այլ ինչ,
ամենայն ինչ, քանի ինչ, որ ինչ: Մի ինչ (մի իրիք
կամ միոյ իրիք, միով իւրք ելն.), ինչ մի: Այս ինչ,
այն ինչ: Միթէ ազանկաց ինչ զանք Տիտոս:

2. Իբրև անորոշ մականուն նշանակում են՝ մի,
որեւէ, մի որեւէ, (մը). յոգնակի անուան հետ՝ մի
բանի: Կարող են անունից առաջ և յետոյ դրուել և յա-
ճախ ուրիշ բառերով բաժանուել նրանից: Յոգնակի
անուան հետ անհամաձայն են մնում, իսկ եղակի անուան
հետ սովորաբար համաձայնում են: Օրինակ՝ Բան ինչ
է ինձ ընդ քեզ: Բանք ինչ գոյին նոցա ընդ ասորիս:
Ունիք ինչ կերակուր: Եկն ի ջուր ինչ, ի տեղի ինչ:
Անդին աւուրք ինչ: Յետ աւուրք ինչ: Շնորհս ինչ հո-
գեորս: Գործ ինչ ոչ գործեն: Վասն խոսվութեան իրիք
եղելոյ: Առանց իրիք յանցանաց (== Առանց մի որ և է
յանցանքի: Տես § 52): Ջուրն՝ ցող իմն է գովական:
Իբր ի պարարտութենէ իմնքէ: Իբր խթանաւ իմն ըն-
դոստուցեալ բանիւ Ընդ պատենիւք իմն: Ի նիւթոյ ինչ:
Ի սահմանելոյ ինչ հրամանէ: Օտարտի իմն գից թուի
պատմիչ լինել: Յանմահից իմն կարգի գնէր զինքն:

3. Բացասական, հարցական, թէական, ենթադրա-
կան խօսքերի մէջ սովորաբար գործ է ածուում ինչ անու-
րոշը: [ուստի] և ասուում է ոչինչ (== ոչինչ, ոչ մի), որ
հօլովուում է՝ ոչ իրիք, ոչ իմիք ելն: Արդեւական խօս-
քերի մէջ մի ինչ: Ոչ, մի՛ բառերը միշտ կարող են
ինչ բառից բաժանուել, լինի [վերջինս իբրև զոյական
թէ ածական գործածուած: Ոչ երբեմն կրկնուում է և
բայի վրայ: Աշխարհաբարում ոչ՝ ոք, ոչինչ, ոչ մի բա-
ռերի հետ բայը բացասական է դրուում: Օրինակ՝ Եթէ
իցէ ինչ ուրուք, Եկն թէ գտանիցէ ինչ և ոչինչ եզրա:
Ոչ բերաք ինչ յաշխարհ և ոչ տանել կարացուք: Է՞
ինչ այդր: Մի ինչ ասիցէք: Եզև նմա չար և ոչինչ:
Ոչինչ չլաս է: Ոչինչ է խտիր: Եթէ հնար ինչ էր (==

Եթէ մի հնար լինէր): Եւ ոչ միով իւր հանգիստ գրտաւ: Ի մորմուտոյ և ոչ յայլ իմեքէ: Եւ ոչ նշմարանս ինչ գոր լսէինն՝ ոչ կարէին ունել ի մախ: Եթէ իցէ ինչ յառնն վնաս (== վնաս ինչ): Եթէ սենիցին ինչ ընդ ումեք բանս՝ (== բանս ինչ) յատեան երթայցեն:

4. Իմն, ինչ յոգնակի չունին. եզակի ձեռով և յոգնակի իմաստով են բանում. Օրինակ՝ Երկու ինչ են, որ բազում առնեն զմեզս: Երկու ինչ (== երեք բան) ատեայ անձն իմ:

5. Այս անորոշներն երբեմն կրկնուած՝ իմն իմն, ինչ ինչ գործ են ածուում թէ զոյականաբար և թէ ածականաբար՝ ստանալով բաներ, մի բանի բանե,՝ զանազան բաներ, կամ թէ զանազան, մի բանի բաների իմաստը: Հոլովում են՝ իրիք իրիք, իմիք իմիք, յիմեքէ իմեքէ, իւր իւր: Օրինակ՝ Այլոց իմն իմն (== բաներ) խոտորանան տալ որ չիցէ ի ձեռս: Ոչ գարչի զայնպիսի անուանս առնու զիմեքեամբ վասն իրիք իրիք (== մի քանի, զանազան) տեսչութեանց: Ինչ ինչ և յատուոց ընկալան սեղեկութիւնս կարգաց:

6. Ինչ անորոշը յաճախ գործ է ածուում իրբի թարմատար, աւելի հարցական, թէ՛ական և բացասական խօսքերի մէջ և խօսքին տալիս է տարտամութիւն կամ թէ չէ սաստկացնում կամ մեղմում է խօսքի իմաստը՝ ստանալով իւրի գործիականի իմաստ: Այլաբար հարար երբեմն թարգմանում է բնաւ, ե: բեւ, սկի բաներով: Օրինակ՝ Չարիքն որ լինին՝ անձինք ինչ իցեն թէ արգասիք անձանց: Եւ ոչ ի կայսր ինչ վնասակար եմ: Տես դու, ոչ ի տանջանաց երկեայ ինչ (== իւրիք = բնաւ) ևս: Ոչ ինչ (== բնաւ չը ...) զանգիտեաց: Այրն

նորա չէ ինչ (== սկի) ծեր: Ոչ եթէ յանձնէ ինչ եկի: Ոչ եթէ զնորմս ինչ կոծկալ:

7. Իմն անորոշը յաճախ մակրայի կամ գործիական հոլովի հետ, երբեմն և մենակ բայի հետ գրուելով՝ անորոշ տարտամութիւն է յոյց տալիս՝ ստանալով մի սեւակ, մի կերպ, կարծես, արևմտեան աշխարհ. մը բաների իմաստը. ինչպէս՝ Բարկութեամբ իմն (== բարկութեամբ մը) հասեալ ի տեղի անդրս շոխութեամբ իմն հրաման տայր Նարուզոգոնոսոր: Մտաղիւր իմն անապիք անմտաց: Գեղեցիկ իմն պատմէ և Արիստոն Փեղղացի յազագս մահուանն Արտաշիսի Լոթի իմն ծածկեցաւ յամբոխին: Փոքու իմն, այսու իմն, այնու իմն: Ահեղ իմն է տեղիս այս Յայտ իմն այսպէս առնէր: Կամէին իմն թէ փոխեցուք զնա ի գործոց անախ Շփոթի իմն թագաւորութիւնն: Եւ մեծամեծս իմն խօսէին:

107. Իմն, ինչ անորոշների իմաստով գործ է ածուում և իր, սոխորաբար յոգն. իրք (իրի, իրաց, իրօք) = մի բան, բան. երբեմն և մի, ինչ մականունների հետ. իր մի, ինչ իրք, ինչ իրաց. շատ ինչ իրք. այլ և կրկնուած՝ իրք իրք, իրս իրս, յիրս իրս, իրաց իրաց (== բաներ, մի քանի կամ այլ և այլ բաներ):

Ծան. Չպիտի չփոթել ինչ և ոչ ինչ անորոշ անունները ինչ, ոչինչ հասարակ անունների հետ, որ հոլովում են՝ ընչի, ընչիւ, ինչք, ընչից, ընչիք (== ինչք, ստացուածք). ոչինչ, ոչնչի կն. (== ոչնչութիւն, չէ, անգոյ, ոչինչ բան): Օրինակ՝ Ընչի իմիք յոչնչի չէ հնար զնալ Եցոյց յոչնչէ յինչ զչէսն: Չարարածս յորժամ

կամեցաւ՝ սկիզբն արար լինել՝ ոչ յընչէ, այլ յոչնչէ. զի ինչ նա միայն է, Ոչինչ երբեմն իբրև մահանուն է գործածուում և նշանակում է ոչինչ, չնչին:

108. Ուրեք, — ուսեք անորոշների համար պիտի իմանալ.

1. Մենակ գործածուած ժամանակ նշանակում են մի սեղ, (ու եւ է) սեղ, — մի (ու եւ է) սեղից: Օրինակ՝ Վկայեաց ուր բերք: Ոչ ուրեք առաքեցայ: Ոչ ուրեք գտանեմք ասացեալ նորա ի նորումս: Է ուրեք (=կայ տեղ, երբեմն) զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նորս մեզ յաղթեցին: — Միթէ կասկած ինչ ուստեք էք նմա: Յորժամ հայր սիրելի ուստեք գայցէ, արժանի որդիքն կառօք ընդ առաջ կընեն:

2. Կրկնուած՝ ուրեք ուրեք, — ուսեք ուսեք նշանակում են ի կողմանս կողմանս, ի կողմանց կողմանց = տեղ տեղ, գանազան տեղեր, — դանազան տեղերից, կողմերից, դէսից-դէսից: Օրինակ՝ Զմեծամեծս և զգարմանալոյ արժանաւորս յարուեստից և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ՝ հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու: Ոմանք ուստեք ուստեք եկեալ ժողովեալ: Եւ որ ուստեք ուստեք եկեալ էին ի թիկունս օգնակամութեան:

3. Երբեմն մականուններով էլ են գործածուում. օրինակ՝ ամենայն ուրեք (=ամեն տեղ), ի մօտ ուրեք (=մօտ տեղ), հեռի ուրեք, հեռագոյն ևս ուրեք (=հեռու տեղ), յո ուրեք, ուր ուրեք (=ուր տեղ), դուն ուրեք (=քիչ տեղ, քիչ անգամ). այլ ուրեք կամ այլ ուր (=ուրիշ տեղ), այլ ուստեք կամ այլուստ, յայլուստ, կամ յայլուստ ուստեք (=ուրիշ տեղից), բա-

զում և այլ ուստեք (=ուրիշ շատ տեղից էլ), արտաքուստ ուստեք (=գրօից մի տեղից), ամենայն ուստեք կամ ամենուստ, յամենուստ (=ամեն կողմից). բազում ուստեք, յօրով ուստեք (=շատ տեղից), ոչ ուստեք (= ոչ մի տեղից). այլ և կրկնուած ուստ ուստեք (=ուր տեղից, որ տեղից):

4. Ուսեք ձեի իմաստով կայ և ուսեմն, որ շատ քիչ է գործածուում, իսկ ուրեք ձեի իմաստով՝ ուրեմն, որ յաճախ միանում է ուրիշ տեղի կամ ժամանակի անունների հետ՝ տարտամացնելով նրանց իմաստը, ինչպէս՝ Որպէս անդ ուրեմն (=երբեմն, ժամանակով) ի հինս: Զոր աստ ուրեմն (=վերջերս) յետոյ ոմանք բարձին: Իսկ աստ ուրեմն յարուցեալ գունդս: Յետոյ ուրեմն արժանաւորեցան առնուլ: Այսպէս և անոր ուրեմն, ուր ուրեմն (=վերջապէս), վաղ ուրեմն, անագան ուրեմն, երբեմն ուրեմն:

5. Իբրև անորոշ մականուն ուրեմն, ուրեք, ուսեք նշանակում են մի, մի ուրեք և զրուում են սովորաբար տեղի անունան վրայ: Օրինակ՝ Գատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն: Ընդ գաղանի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին: Ի կողմն մի ուրեք: Յանկեան ուրեք: Կարծէր ի տեղիսն ուրեք անյայտս գետառուին թագչել: Եւ եղև ի տեղուջ ուրեք կալ յազօթս:

կեցից:—Մեր մեզէն իսկ (—մենք ինքներս հենց) շինեսցուք դուռն Տեառն: Մեզէն իսկ լուար ի գամնէ: Մեզէն իսկ ընթիւնուլ արժանաւորեցաք: Մեզէն իսկ ականատես եղաք այն դիւանին: Մեր մեղոյն լինի՞ք քակիչ օրինացս մերոց: Արի և քեզէն թօ՛՞թափեալ զանկողինս քո: Արի և դու քեզէն պատահեալ մեղ: Քեզէն վարես զքեզ յանդարձ օտարութիւնս Դու քեզէն իսկ (—դու ինքդ հենց) վկայ ես ինձ: Դու քեզէն զպատիժսն յանձն առեր, և ես թողում զպատուհանս: Դուք ձեզէն երթայք ժողովեցէք ձեզ յարդ: Դուք ձեզէն իսկ գիտէք: Որպէս և դուք իսկ ձեզէն (—դուք ինքներդ հենց) վկայեցէք:

113. Իւր զերանուշը, որ եզ ուղղական և հայցական չունի, զորձ է ածուում սովորարար անդրադարձ իմաստով, այսինքն զբոււմ է ենթակայի անուան տեղ: Յաճախ սակայն իւր զերանուան տեղ զորձ են ածուում իճճն և նոյն իսկ ցուցական նա զերանուշների ձևերը:

114. Անձնական զերանուշների բոլոր գէժերի տեղ յաճախ զորձ են ածուում անձն բառի կզակի և յոչնակի հորմէրը մենակ կամ իմ, եո, իւր, մեր, ձեր, իւրեանց բառերի հետ: Օրինակ՝ Յանձն իմ (—յիս, յիս ինքն) երդուայ: Եւ ոչ զանձն (—զիս, զիս ինքն) արժանի համարեցայ առ քեզ զարդ: Յոյց զանձն քո (—զքեզ, զքեզ ինքն) քահանային: Փրկեալ զանձն քո և զմեզ: Դու վասն անձին քո վիրայեալ: Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ (—յինքն—ինքն իր

մէջ) կործանի: Լացէք ի վերայ անձանց ձերոց (—դուք ձեր վրայ ...):—Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ (—ես ինքս ինձնից ...): Անձամբ անձին (—ինքն իրեն) առնէ Քրատ: Անձամբ զանձն իւր (—ինքն իրեն, ինքն զինքն) խայտառակեաց:—Նօքա անձին (փոխանակ՝ անձանց—իրենց, երենք իրենց) ինչ օգնել ոչ կարեն: Անձամբ անձին (—իրենք իրենց) փակեցին զգրուս:

Ծան. Աճճն բառը բարդութիւնների մէջ նշանակում է իճճն, ինչպէս՝ անձնասպանութիւն = ինքնասպանութիւն, անձնասէր = ինքնասէր:

ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

115. Նա, սա, դա:

| | | |
|----|---------|----------|
| | Եզակի | Յոգնակի |
| Ո. | նա | նոքա |
| Ճ. | զնա | զնոսա |
| Ս. | նորա | նոյա |
| Տ. | նմա | նոցա |
| Բ. | ի նմանէ | ի նոցանէ |
| Գ. | նովաւ | նոքօք |

116. Նա զերանուան պէս հորմուում են՝ սա, դա, սորա, սմա, ի սմանէ, սովաւ. սոքա, զոսա, սոցա, ի սոցանէ, սոքօք.—դա, զզա, զորա, դմա ելն:—Այս ցուցականների բացառական հորմը երբեմն լիւնում է՝ ի նմանէն, ի սմանէն, ի դմանէն, ի սոցանէն ելն:

117. Այս, այդ, այն:

Եզակկ

Յոզնակկ

| | | | |
|----|-----------------|------|---------------------|
| Ո. | այս | — | այսոքիկ |
| Հ. | զայս | — | զայստսիկ |
| Ս. | այսը, այսորիկ | այսը | այսց, այսոցիկ |
| Տ. | այսմ, այսմիկ | աստ | այսց, այսոցիկ |
| Բ. | յայսմ, յայսմանէ | աստի | յայսց, յայսցանէ |
| Գ. | այսու, այսուիկ | — | այսոքիւք, այսոքիմէք |

118. Այս զերանուան սէս հոյովուում են՝ այդ, զայդ. այդը, այդորիկ. այդմ, այդմիկ. յայզմ, յայզմանէ. այդու, այդուիկ ելն. այն, զայն, այնը, այնորիկ ելն. Այն յոզն. ուղղականի և հայցականի համար ունի նաև այնմ, զայնս ձևերը: Յոզն. բացառականի և գործիականի համար կան նաև՝ յայսոցիկ, յայցոցիկ; յայնոցիկ, — այսուք, այդուք, այնուք ձևերը: Այսը, ասց, աստի ձևերին համապատասխան կան՝ այդը, այդի, անդը, անդ, անսի:

119. Այս, այդ, այն ցուցականների համար պիտի իմանալ.

1. Դերանուն են, երբ մենակ են բանում և նոյն իմաստն ունին, ինչ որ սա, դա, նա. միայն երբ ցուցականն իւր իմաստն ստանում է մի յարաբերական խօսքից, աւելի այս, այդ, այն են գործածուում քան սա, դա, նա: Օրինակ՝ երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք:

2. Ածական են, երբ իբրև մականունն դրուում են մի անուան վրայ, որի հետ թուով և հոլովով սովորաբար համաձայնում են: Երբ ցուցականը իւր անունից նախագաս է, սովորաբար կարճ ձևն է գործածուում և անունը ոչ մի յօդ չի անում. իսկ երբ յետագաս է, սովորաբար երկար ձևն է բանում, նախդիրը կրկնուում է ցուցականի վրայ և անունն աւելում է համապատասխան ս, դ, ն ցուցական յօդերից մէկը. ինչպէս՝ այս տուն, այդ տուն, այն տուն. զայս տուն, այսը տան, այսմ տան, յայսմ տանէ, այսու տամք. այս տունք, այսց տանց ելն. բայց տունս այս, տունդ այդ, տունն այն, դուունս զայս, տանս այսորիկ, տանս այսմիկ, տունքս այսոքիկ, տանցս այսոցիկ ելն. բայց և՛ Գործքս այս: Չինչ հատուցուք փոխաբէնս այս (փոխ. այսը) մնծի յայթթութեան: Չբանս (փոխ. զբանսս) զայստսիկ կատարեան:

3. Բացառական՝ յայսմ, յայդմ, յայնմ ձևերը միայն իբրև մականուն են բանում՝ յայսմ հետէ, յայզմ վայրէ, զայնմ ամենայնէ ելն. իսկ այնմ, զայնս միայն իբրև դերանուն միշտ մենակ են բանում:

4. Այս, այդ, այն, զայս, զայդ, զայն եղակի ձևերը երբեմն և յօգնակի իմաստ ունին. ինչպէս՝ Չկուես սակաւ ունէին, և զայն ես (=այն էլ) օրհնեաց:

120. Այսը, այդը, անդը նշանակուում են.

1. Այսեղ, այդեղ, անդեղ, երբ մենակ են գործածուում և գործողութեան դէպի 1-ին, 2-րդ կամ 3-րդ դէմքն ուղղուած լինելն է յոյց տրուում. օրինակ՝ Մի մերձենար այսը և՛կ այսը: Այսը անդը (դէս ու դէն,

այս ու այն կողմ) վառեալք ընթանային: Ի քէն և յայլոց սկսեալ անգր ի վեր հանիցեմ ի սկիզբնն: Յղէին անգր նախարար զոմն:

2. Այս, այդ, այն, երբ իրրև մականունն գրուում են ի նախդիր ունեցող հայցական հոլովով մի անուան վրայ. օրինակ՝ Եւ ոչ ի տար աշխարհ այսք գնեա նոցա գնացաք: Եթէ ոչ գայցէ ի տօն այսր: Ի դաշտ անդր:

121. Աս, այդ, անդ նշանակում են.

1. Այսեղ, այդեղ, այնեղ, երբ մենակ են գործածուում և գործողութեան մի անդում լինելն է ցոյց տրուում. օրինակ՝ Գոյ աստ այր մի: Զնոսա ևթող անդ: Է՞ որ այդք այր: Նստարուք դուք այդք: Եւ անդ էր մինչև ցվախձան Հերովդի: Այս իմաստով կան և ասանօր, այդանօր, անդանօր բառերը:

2. Այս, այդ, այն, երբ իրրև մականունն գրուում են ի նախդիր ունեցող տրական հոլովով մի անուան վրայ (ներքդականի իմաստով), օրինակ՝ Ի գրախտի աստ ի տօնի աստ: Ի ժամանակի աստ յայսմիկ: Գրեցի՝ ձեզ ի թղթի այդր: Ահաւասիկ ի խորանի անդ է: Ի պարտիզի անդ: Եւ հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ:

122. Ասի, այդի (այսի), անցի նշանակում են.

1. Այսեղից, այդեղից, այնեղից կամ սրանից, դրանից, նրանից, երբ մենակ են գործածուում. օրինակ՝ Գնացին նոքա անտի: Արիք երթիցուք աստի:—Եւ ոչ վրիպեցի այտի (=գրանից) բան, մինչև կատարեսցի ամենայն: Յորմէ պատուիրեցի քեզ անտի ևեթ չուտել: Անտի իսկ (այսինքն՝ յայնմ իւղոյ) օժանէին: Զչարեաց

սկիզբն անտի (=ի նիւթոյ) կարծեցին: Այս իմաստով կան և ասուս (ասուսից), անդուս (անդուսից) ձևերը:

2. Այս, այդ, այն, երբ իրրև մականունն գրուում են մի բացառական հոլովով անուան վրայ. օրինակ՝ Ել ի տապանէ այտի: Բաղումք ի մանկաւոյ այտի: Ի յունականաց այտի: Ի սեղեղէ անտի: Ի հեթանոսական ուսմանց անտի: Յիշխանութենէ աստի: Ի նեղութենէ անտի:

123. Կան և այսեհ, այդեհ, անդեհ, ասեհ, անդեհ, որ նշանակում են՝ վերստին այսր, վերստին այդր, վերստին անգր, յետս այսր, յետս այդր, յետս անգր=նորից, յետ, կրկին այստեղ կն. կամ հենց այստեղ, հենց այգտեղ կն: Օրինակ՝ Եւ ինքն ողջանգամ այսքէն դամնայր: Այդքէն ի քեզ խորտակեացին այլք քու Ել և անդքէն ոչ դարձաւ: Այսքէն (=այստեղ, այս աշխարհում) այլք վաստակին և այլք հանգչին. իսկ անդէն (=այնտեղ, այն աշխարհում) իւրաքանչիւր ոք վաստակոց իւրոց տիրեացէ: Այդքէն յաշխարհից ձերում քանին զիրք գորտ—Ես աստէն պահեցի: Աստէն (=այստեղ, այս աշխարհում) ընկալեալ զհատուցումն մեզաց իւրոց: Էին անդէն ի կարաւանին—Անդէն, անդէն իսկ, անդէն և անդ, անդէն վազվազակի նշանակում են նաև՝ իսկոյն, տեղն ու տեղը: Օրինակ՝ Անդէն և անդ ծանեան: Եւ ահա անդէն երկք արք ևկին:

124. Նոյն, սոյն, դոյն:—Ամենեքին:

Յզակի

Յոչնակի

| | | |
|----|---------------|--------------------------|
| Ո. | նոյն | նորին |
| Հ. | զնոյն | զնոսին |
| Ս. | նորին, նորուն | նոցին, նոցուն, նոցունց |
| Տ. | նմին | նոցին, նոցուն, նոցունց |
| Բ. | ի նմին | ի նոցունց |
| Փ. | նովին, նովիմբ | նորբիմբ, նովիմբ, նորումբ |

Այսպէս և

| | |
|----|------------------------|
| Ո. | ամենեքին, ամենեքեան |
| Հ. | զամենեոսին, զամենեսեան |
| Ս. | ամենեցուն, ամենեցունց |
| Տ. | ամենեցուն, ամենեցունց |
| Բ. | յամենեցունց |
| Փ. | ամենեքումբ |

125. Նոյն գերանուան պէս հորվում են՝ սոյն, զսոյն, սորին, սմին ելն. դոյն, դրոյն, գորին, գմին ելն. Սոյն, գոյն չունին նորումբք ձևի համապատասխան յոգն. գործիական:—Նոյն նշանակում է և մի եւ նոյն. այս իմաստով սովորաբար անփոփոխ է մնում և յոգնակին լինում է՝ նոյնք, զնոյնս, օրինակ՝ ի նոյն (= մի և նոյն, և ոչ թէ՛ այն) ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունան անանին: Եւ նորա զնոյնս (=մի և նոյն բաները) բարբանջին:

126. Սոյն, դոյն, նոյն ցուցակաների համար պիտի իմանալ.

1. Գերանուն են, երբ մենակ են բանում, և յա-

ձախ նոյն իմաստն ունին, ինչ որ սա, դա, նա կամ այս, այդ, այն, որոնց հետ և փոխէ փոխ բանում են՝ կրկնութիւն չանկու համար, կամ իբրև աւելադրութիւն կրկնում են՝ իմաստի զօրեզ արտայայտութեան համար: Օրինակ՝ Ես յայդ իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ եմ: Նորա իշխանութեամբ և նորին հրամանաւ: Նորին (= նորա) մեծութիւն: Սոյն այս, սորին այսորիկ, սմին այսմիկ, սքին այսքիկ, — դոյն այդ (այսպէս և՛ սա այս, դա այդ ելն):

2. Ածական են, երբ իբրև մականուն գրւում են մի անուան վրայ, որի հետ թուով և հորվով սովորաբար համաձայնում են. ինչպէս՝ նոյն բան, նորին բանի, նմին բանի, ի նմին բանէ, նովին բանիւ ելն:— Բացառակաները՝ ի սմին, ի դմին, ի նմին միայն իբրև մականուն են գործածւում, ինչպէս՝ ի նմին քաղաքէ =նոյն քաղաքից:

127. Ամենեքին կամ ամենեքեան բառի պէս միայն յոգնակի հորվում են նաև բոլորեքին կամ բոլորեքեան, երկօրին կամ երկրեան, երեքին կամ երեքեան, չորեքին կամ չորեքեան, հնդեքին, վեցեքին կամ վեցեքեան, և թմանեքին (-քեան), տասնեքին (-քեան), երկստասանեքին (-քեան), որ նշանակում են ամենքը, ամենքն էլ, երկուսն էլ, երեքն էլ, չորսն էլ ելն:

Այս բառերն ևս թէ մենակ իբրև գոյական են գործածւում և թէ ածականաբար իբրև մականուն գրւում են մի յոգնակի անուան վրայ, որի հետ հորվով միշտ համաձայնում են: Օրինակ՝ Լցան ամենեքեան հողով սրբով: Չամենեոսեան օրհնեալ Սմենեցուն (=

ամեն, բար) արարածոց ցուցանէր: Բացան աչք երկոցունց (=երկալի աչքերն ել բացուեցան): Յերկոցունց կողմանցն (=երկու կողմից էլ): Ի վերայ ձեր երկոցուն (=ձեր երկու վրայ): Աշակերտքն ամենեքին:

Պատ. Ամեն լատի եզ. գործիականն եւ երբեմն լինում է այս ձևով՝ ամենեին (ամենեիմբ) = ամենայնիւ, բոտ ամենայնի, բարբալին. իսկ բոլոր ունի բոլորով. բոլորիւ ձևերի հետ և բոլորովին (բոլորովիմբ), որոնք յաճախ իբրև մակբայ են բանում:

128. ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

| | | |
|-------|-----------|---------|
| Ո. | — | — |
| Հ. | զմիմեանս | զիրեարս |
| Ս. Տ. | միմեանց | իրերաց |
| Բ. | ի միմեանց | յիրերաց |
| Գ. | միմեամբք | իրերօք |

129. Փոխադարձ զերանունների իմաստով գործ են անում նաև՝ Մի զմի (մի առ մի, մի ցմի, մի միոյ, մի միոջ ելն. = մէկմէկու, մէկմէկուց): Այլ զընկեր իւր (այր ցընկեր իւր, այր ընդ ընկերի ելն): — Գանդի շխտ իմն ամբողից լեալ՝ այր զարամբ (=զմիմեամբք) ելանէին տիրել աշխարհին:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

130. Յարաբերական որ դերանունն (հոլովումը տես § 64. 5) և նրանով կազմուած խօսքերի համար պէտք է իմանալ.

1. Որ յարաբերականի հոլովների տեղ գործ են անում ուր, ուտի, զի, յորժամ, որպէս, իբրեւ. օրինակ՝ եկն ի նաղարէթ, ուր սնեալն էր: Դարձայց ի սուն իմ, ուտի ելի: Մի լինիցիս որպէս կեղծաւորքն, զի (=որ, որք) սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրատարակաց կալ յաղօթս: Եգիտ անդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն: Ի ժամանակի, որպէս (=յորում, յորժամ) ապտամբեցին հրեայք յԱզրիանոսէ: Ի ժամանակի, որպէս բորբոքացի բարկութիւն նորս:

2. Երկրորդական յարաբերական խօսքը կարող է և զլիաւոր խօսքից առաջ ընկնել. յարաբերեալն այս դէպքում գրում է երկրորդական խօսքի վերջում, երբեմն և զլիաւոր խօսքի մէջ, և յաճախ մնում է ուղղական հոլովով: Օրինակ՝ Որ բասիլիսկոսն կոչի ազգ օձից՝ հայելով միայն սատակէ: Որ միսիթարէն զխնարնս՝ միսիթարեաց զմեզ Աստուած: Եւ որ ի վերայ բազնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ (=եւ զպատկերսն որ ի վերայ բազնին և սեանն կային, ծածկեալ պատեցին):

3. Որ յարաբերականն առանց յարաբերելի, եթէ որոշ իմաստ ունի՝ թարգմանում է նա որ, այն որ. իսկ եթէ ընդհանուր անորոշ իմաստ ունի, ստանում է յարաբերական անորոշ անունն նշանակութիւն իբրև՝

ո, ո ու, որ ու, — զինչ, որ զինչ, որ ինչ, ինչ որ — ու որ, ինչ որ, որը որ, որ մէկը որ, այն որ, այն ինչ որ, նա որ: Օրինակ՝ Չոգաւ վաղվազակի որ (—նա որ) առ զհինգն (զհինգ քանքարն), գործեաց նորքը և շահեցաւ այլ ևս հինգ: Երջնպէս և որ (—նա որ) զերկուսն, շահեցաւ այլ ևս երկուս: Եւ որ (—նա որ) զմին առ, զնաց փորեաց զերկիր և թագոյց զարծաթ տեառն իւրոյ:—Եւ մատուցեալ որ (—նա որ) զհինգ քանքարն առ ... Մատուցեալ և որոյ (—նա որ) զերկուս քանքարն առեալ էր ... Հնձես զոր (—այն որ) ոչ սերմանեցեր: Ամննայնի, որ (—ու որ) ունիցի՝ տացի և յաւելցի. և որ (—ու որ) ոչն ունիցի, և զոր (—ինչ որ) ունիցին՝ բարձցի ի նմանէ: Բառնամ զոր (—այն ինչ որ) ոչ եգի: Երանի որում (—երան որին, ում որ) թողութիւն եղև Արկ զիւրև յորոյ վերայ (—ինչի վրայ որ, այն որի վրայ) անկեալ զնէր: Որոց (—ուքեր որ) պէտք էին բժշկութեան՝ բժշկէր: Անիրաւ թագաւոր ոչ տացէ զվարձս վաստակոցն՝ որ (—երանց որ) մտադիւրն պատրաստին մեռանել ի վերայ նորա: Դուք ոչ մտանէք և որ (—ուքեր որ) մտանելոց են՝ արգելուք: Որ (—ու որ) կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս: Երանի որ (—երանց որ) քաղցեալ և ծարաւի իցին արդարութեան: Զիւրդ դժուարին է որ զինչսոց ունին՝ մտանել յարքայութիւն (տես § 7. ձ. 3. 3):

Որ ու (—որ մէկը որ, որը որ) ի նոցանէ վաղ առ իս եկեացէ, զնա արարից թագաւոր: Եւ որ կամիցի ու (—ու որ) դասել և առնուլ զչապիկս քո, թող ի նա և զրաճկոն քո: Առաքեալ յոյ՝ ձեռն (—ում ձեռքով որ) առաքելոց ես: Ծագեա զօգորմութիւն քո՝ ոյք (—նը-

բանց որ) ճանաչեն զքեզ: Ո ու և (—ու որ էլ) երթայր առ նոսա՝ ուսուցանէին կամակար: Արարին ընդ նա գոր ինչ (—ինչ որ) կամեցան: Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ (—ամեն ինչ որ) պատուիրեցի ձեզ: Զոր ինչ (—ինչ որ) ծախիցես ի դա, հատուցից քեզ: Որ զինչ և (—ինչ էլ որ) ասիցէ ձեզ, արասջիք: Զինչ (—ինչ որ) և անուանեաց Ադամ, այն է անուն նոցա: Դարձուցից ուստի (—այնակ, որակցից որ) ելին:

4. Երբեմն որ յարարերականը զբոււմ է ոչ այն հոլովով, որ պահանջում է երկրորդական խօսքի իմաստը, այլ այն հոլովով, որ պահանջում է գլխաւոր խօսքի իմաստը և որ պիտի ունենար իբրև յարարերեալ զբոււմ զուղականը, և թէ լինէր: Օրինակ՝ Որում խնդրէ ի քէն՝ սուր—Այնմ որ խնդրէ ի քէն՝ սուր, Որոց (—այնոցիկ, որք) մասնեն՝ չապք թոյլ մտանել: Գտին ժողովեալ զմտասանսն և զորս (—զայնոսիկ, որք) ընդ նոսայն էին: Կարգային առ որ (—առ այն որ) յամենայն ժամանակի պաշտպան լինէր ազգին իւրեանց: Որ բամբոսէն՝ կորուսանէ զանձն իւր և զորոց (—զայնոցիկ, որք—զանձինս այնոցիկ, որք) յսենն: Հնձեմ ուսի (—անտի, սւր) ոչ սերմանեցի, և ժողովեմ՝ ուսի (—անտի, սւր) ոչ սիրեցի:

Ծան. Որ յարարերականը յաճախ աշխարհարար թարգմանուում է զուղական դերանունով. մանաւանդ վասն որոյ, ոյք վասն, յոյք սակա—վասն այտորիկ, վասն այլորիկ, վասն այնորիկ. կամ յայս սակա, յայն սակա, կամ ամին իրի, դմին իրի, նմին իրի—սրա համար, դրա համար, նրա համար. կամ այս պատճառով, այդ պատճառով, այն պատճառով:

ՀՈՒՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

131. Գրաբարի հոլովները, սակաւ բացառութեամբ, նոյն գործածութիւնն ունին, ինչ որ նոյն հոլովներն աշխարհաբարում: Կարևոր են հետեւեալ կիրառութիւնները.

132. Ուղղական հոլովով գրուում են.

1. Ենթական, ինչպէս՝ Գնաց Յիսուս: Ասացին աշակերտքն:

2. Կոչական անունը, ինչպէս՝ Տէր, բարևք է մեզ աստ լինել:

3. Ասորոգեալը, որ կարող է թուով համաձայնել ենթակային. օրինակ՝ Դուք ամենեքեան եղբարք էք: Վարդապետք էիք ասաքելական քարոզութեանն. արդ աշակերտք լինիցիք մտար խաբէութեանն:

Ծան. Եթէ ստորոգեալն անեղական բառ է կամ յոգնակի է և բայի մօտ է գրուած, բայը յողնակի է գրուում, թէպէտ և ենթական եզակի է: Օրինակ՝ Միս ուտել, ասան, մեղք են (=Միս ուտելն, ասում են, մեղք է): Եկեղեցի չորհք են մեծին Աստուծոյ: Եւ այս անուանք են քաջ նահատակացն: Այս քանի ամբ են, զի ծառայում քեզ:

133. Հայցական հոլովով գրուում են.

1. Կրող առարկան, կամ ներգործական բայերի սեռի խնդիրը, որ ազգւում կամ առաջ է գալիս ենթակայի գործողութիւնից, որ և կրաւորական սեռով

ասուած բայերի համար գառնում է ենթակայ: Այս հայցական հոլովը, երբ անունն որոշ է, սկզբից անունւմ է գ նախդիրը (տես § 50): Օրինակ՝ Բացին զգուռնն = բացաւ գուռնն: Հերովդէս կալաւ զՅովնաննէս, կապեաց զնա և եղ ի բանտի = ի Հերովդէայ կալաւ Յովնաննէս, կապեցաւ նա և եղաւ ի բանտի: Աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ = Յաստուածոցն տուաւ քեզ տէրութիւնդ:

2. Այն բոլոր պարագայական խնդիրները, որոնք աշխարհաբարում ուղղական հոլովով են գրուում, այս են՝ ա. ժամանակի սեւողութեան հայցական՝ իբրև պատասխան ո՞րքան ժամանակ(ում) հարցի, — Եղև անձրև զքառասուն ժիւ և զքառասուն զիտեր: Եւ ցնա զթագաւորութիւնն հազար ամ: Ձիւ և զգիտեր փութային հասանել յաշխարհս Հայոց: Վառեցան կաղմեցան զգիշերն ամենայն: Ձերկեամ մի կռուեալ՝ ոչինչ կարաց ազգիլ նոցա:

բ. Քանակի հայցակ:սն, իբրև պատասխան ո՞րքան հարցի. ինչպէս՝ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մկոն մի, երթ ընդ նմա և երկուս: Բարձին զնշխարս կոտորոցն կօթն զամբիւղ լի: Որ արբուցէ միում ի փոքրկանցս յայցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն ... ոչ կորուցէ զվարձս իւր:

գ. Որակի հայցական, իբրև պատասխան ի՞նչպէս հարցի: Այս խնդիրն անանցողական բայերի հետ կարող է գրուել և ուղղական հոլովով: Օրինակ՝ Եւ ամս ամս տասն ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ աւերէին զամենայն երկիր սահմանայն: Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ի վերայ դալար

խոսոյ, և բազմեցան դասք դասք: Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հօրագոյնս կուտին: Ետևս այլս զի կային դասաբեկք:

134. Հայցական հոլովով է գրուում փոխանակ քործիականի և այն որակական խնդիրը, որ կազմուած է խնդրառու բայի հիմքից, կամ նրա համանիշն է, կամ թէ նրա հետ որիէ մեքձաւոր՝ աննչութիւն ունի: Այս խնդրի անդ գրուող գերանունն ևս կարող է հայցական հոլովով գրուել: Օրինակ՝ Շինէին վկայարանս իմն անուանեալս և գնոյն զարդ տկեղեցեացն զարդարէին: Առ հասարակ գմի զիճուորութիւն զինուորեցան: Զնոյն նահապետիւն նահատակեցան: Զմահ աղուխու սպանեց զքեզ: Երկեան երկիւղ մեծ: Կոծեցին ի վերայ նորա կոծ: Զմահ մեռանել: Ախտանալ զախս հպարտութեան: Զմահս մարտնչել: Որոջ ոչ էին օրէնք երթալ գնոյն նսնապարհ: Առաջնորդէր նոցա զերկայնութիւն ճանապարհին յերկիրն Հայոց: Եսաւ սխալէր ռխ Յակորայ վասն օրհնութեանցն զոր օրհնեաց զնա Իսահակ հայր իւր:

135. Կրկին հայցական խնդիր առնում են մի շարք անցողական բայեր՝ անուանել, կռչել, ասել, առնել, դնել, կարծել, յարգարել, խոստովանել, կարգալ պահել, կացուցանել, կարգել, ընտրել ևն: Այս բայերի երկրորդ խնդիրը իբրև մի ստորոգեալ թուով կարող է համաձայնել կրող առարկային կամ հայցական սեռի խնդրին: Անանցողական (կրաւորական և չեղողք) բայերի համար այս խնդիրը գրուում է ուղղական հոլովով

և համաձայնում է ենթակային, քանի որ կրող առարկան ևս կրաւորական սեռի բայի համար ենթակայ է դառնում: Օրինակ՝ Արդ զտարերս ասուա՞ծս խոստովանիք, — որ կրաւորական ձևով կը դառնայ՝ Արդ տարերք աստուածք խոստովանին ի ձէնջ: Այսպէս և չեղողք բայով՝ Երեկեցան ամենեքեան զիճեալք և սաղաւարեալք: Թեճամի և հակառակորդ երեկեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Բրիտոսոս: Սիրելիս և բարեկամս կարգայր զնստս: Արարից զձեզ սրտորս մարդկան: Զմեծ ոմն իշխան մոզպետ կացուցանէր: Մեծ ոմն զինքն կարծէր: Թագաւոր և թէ ոչ ունի զմաստութիւն իւր արոտակից ... Բանդի հայր մեր զտուրբ աւետարանն զիտեմք: Իսասակեք մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէր: Դոքա յեախնքդ մի ժամ գործեցին և հասարակորդս մեզ արարեր զգոսա: Պահէ զշունչս մարդկան կենդանիս:

Այս կրկին հայցական խնդիրն առանց զ նախորդի է գրուում. զերանուններն և հարցական ու անորոշ անունները միայն գ-ով են գործածուում. ինչպէս՝ Թագաւոր զոմն ասեն զՅիսուս: Դու զո՞ առնես զքեզ:

136. Առանձնապէս պէտք է նկատել և հետեւեալ կրկին հայցական խնդիրները.

1. Հարցանել, ուսուցանել, աղուցանել բայերն առնում են երբևիմ երկու հայցական խնդիր, որոնցից մէկը (անձի անուն)՝ հայցական է գրուում փոխանակ սովորական ձևով տրական գրուելու. իսկ միւսը (իբի անուն) կրող առարկան է. օրինակ՝ Ուսուցանէր զնոսա (փոխանակ՝ նոցա) առակօք բազում ինչ: Հարցից զձեզ

(փոխ. ձեզ, ի ձէնջ) բան միս Ազուցի զքեզ (փոխ. քեզ) հիր և կարմիր:

2. Լսեմ, տեսնեմ, կամիմ, նշանակեմ, ասեմ, գագցես, համարիմ անում են երկու հայցական խնդիր. մէկը մի անորոշ կամ անշեալ դերբայ, իսկ միւսը մի անձի կամ իրի անուն: Կրաւորական սեւի չուռ տուած ժամանակ անձի կամ իրի անունը դառնում է ենթակայ: Օրինակ՝ Եւ ի սոցանէ ասեմ լեալ զնահապետսրիւնս Մանաւազեանս և զիզնունեաց և Որդունին անուանեալ, որք ասա ուրեմն յետ սրբոյն Տրգատայ բարձեալ աւսին ի միմեանց: Ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոսրոսունեաց: Ի նմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս: Յորոյ անուն և զգաւառն ասեն անուանեալ Շիրակ: Առ սովաւ ասեն կեցեալ զՆարեզողոսնոսոր—Ասում են թէ սրա օրով է ապրել Նարեզողոսնոսորը: Ասէին որտուումն լինել: Ասացեր մի ևս լինել բնակիչ ի անդուջս յայսմիկ: Զթշնամիսն իմ զայնոսիկ, որք ոչն կամեիցն զիս քազաւորել, ամէք այսր և սպանէք: Տեսի իջանել անօթ ինչ: Ասէին զօգցես յերկրին Հայկազանց զայս լինել—Ասում էին կարծես Հայկազանց երկրում լինէր այս:

Այս իրի կամ անձի հայցական խնդիրներն անորոշ դերբայի հետ [սովորաբար դբում են սեռական կամ արական հոլովով. ինչպէս՝ Զկնի այսորիկ դառնալ ստէ Հայկիցն: Ոչ կամիմք թագաւորել դմա, —կամ թէ երկրորդական խօսք է կազմում, ինչպէս լինում է սովորաբար աշխարհաբարում, այսպէս՝ Ասի ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհին Հայոց—Ասի եթէ ի ժամանակս Արտաշիսի ոչ

գտանէր երկիր անգործ յաշխարհին Հայոց կամիմ զձեզ իմաստունս լինել—կամիմ զի գուք իմաստունք լիջիք:

137. Սեռական, սրական հոլովները սովորաբար նոյն գործածութիւնն ունին, ինչ որ աշխարհաբարում: Պէտք է նկատել հետեւեալ առանձնութիւնները.

1. Ոչ կամիմք թագաւորել դմա—Ոչ կամիմք զի թագաւորեսցէ դա: Այլաչեցաք չկանել նմա յբուսաղէմ: Եկեսցին աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրք Որդոյ Մարգոյ տեսանել (=... աւուրք զի ցանկասջիք դուք ...): Չկայր յոյս այլում դաւակի ելանելոյ (=... յոյս զի այլ դաւակ ելցէ): Ակն ունէին նմա այսմնոյ կամ մեռանելոյ: Գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ: Վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի:—Ի կալ նմա յազօթս (=Ի կալ նորա ...): Յանցանել քեզ ընդ անպատն (=յանցանել քում ...): Անասաւել ումեք Աստուծոյ՝ չար է—Չար է եթէ անասատիցէ որ Աստուծոյ:

2. Շիջուցանել կամին զկայծակն որ մնայ իմ (փոխ. ինձ): Արծաթն որ կորեաւ քո: Մանուկ ծնաւ մեր: Դուքա զինչ են քո (փոխ. քեզ—քո ինչն են. քեզ ինչ են): Խաղակից եղև նորա: Պաշտպան է իմ:

3. Յաւիմ բայի եղակի Յ-րդ դէմքի հետ՝ ցաւի կամ ցաւէ, ցաւէր.—ցաւիցէ կամ ցաւիցի, ցաւեաց, ցաւեսցէ կամ ցաւեսցի ինձ, քեզ, նմա, մեզ, ձեզ, նոցա ելն—Յաւում եմ, ցաւում ես, ցաւում է ելն. կամ սիրտըս (դ, ք). մի տեղս (դ, ք) ցաւում է: Օրինակ՝ Հարկանէին զիս և ինձ ոչ ցաւէր (=և ոչ մի տեղս չէր ցաւում): Տանջեցեր զնոսա, և նոցա ոչ ցաւեաց: Օրհ-

նեալ էք դուք ի Տեառնէ, զի ցաւեաց ձեզ վասն իմ
(= ցաւեցիք, ձեր սիրտը ցաւեց ...): Զիք ոք ի ձէնջ,
որում ցաւք վասն իմ (= որ ցաւէր, որի սիրտը
ցաւէր ...):

4. Բացառականի կամ գործիականի փոխանակ
տրական: Օրինակ՝ Վառուճն նորա յայտնի իմացաւ
Երկիւղածացն Աստուծոյ: Նա խուլ է և կոյր և դիւաց
Հարամանոյ խաբեալ (= աշխարհարար՝ դեւերի խաբած
է): Աստուած ոչ միայն ձեռնի չզննի: Աստուած իւրոց
արժանաւորաց մտացն իմանի, և ոչ աչաց տեսանի:

5. Բանակի կամ մասնական սեռական: Օրինակ՝
Բեռն մի փայտի = Բեռն մի փայտ (տես § 133. 2. բ.
Բաժակ մի ջրեր): Հինգ նկանակ հացի: Հարիւր մար
ձիթոյ: Գրիւք կրեք ալեր: Լիար մի իւզոյ: Տիկ մի
գինւոյ: Ափ մի գարւոյ: Հինգ հաղար սիկզ պղնձոյ և
երկաթոյ: Կաթ մի ջրոյ: — Այս կազակցութիւնները
հոլովում են՝ ափոյ միոյ գարւոյ (= աշխ. մի ափ գա-
րու): տկաւ միով գինւոյ (= աշխ. մի ափ գինւով): Ըայց
երբեմն սեռականն եւ՝ անուկով իբրև անական՝ հո-
լովում է անուան հետ միասին, ինչպէս՝ Պատառով
միով հացիւ. բեռամբ միով փայտիւ: Այսպէս նաև՝ յօրէ-
ծննդենէ. ի ծագաց երկրէ. յորգւոց ի մտրղիանէ. յամ-
բոխէն բազմութենէ. միամտութեամբ սրտիւ. ընկալ-
ցութ ինչութեամբ սրտիւ. հեղմամբ արեամբ արդարա-
ցաւ: Փոխանակ՝ պատառով միով հացի. բեռամբ միով
փայտի. յօրէ ծննդեան. ի ծագաց երկրի. յորգւոց մարդ-
կան. յամբոխին բազմութենէ կամ յամբոխէն բազմու-
թեան. միամտութեամբ սրտի կամ սրտիւ միամտու-
թեան. ինչութեամբ սրտի. հեղմամբ արեանն:

Այս կարգին պատկանում են նաև՝ բլուրս ամաց,
հազար մի հեծելոց, բազումս ամաց կն. փոխանակ՝
բլուր ամս, հազար մի հեծեալք, բազում ամս: Նոյնպէս՝
զմեասակարս խոտոց, զմեծամեծս հրամանացն, զընտիրս
չիրմաց, յետինքն ոչխարացն, նոյ մեծդ զիւցադանց կն.
փոխանակ՝ զմեասակար խոտս, զմեծամեծ հրամանս.
զընտիր չիրմս, յետին ոչխարքն, կամ թէ՛ զմեասակարս
ի խոտոց, զմեծամեծս ի հրամանաց, զընտիրս ի չիր-
մաց, յետինքն յոչխարացն, մեծդ ի զիւցադանց (= աշխ.
խոտերի մէջ մեասակարները, խոտերից մեասակարները, խո-
տերի մէջ մեասակարները): Նոյնպէս՝ ի վերայ միոյ լե-
բանց (= լեռներից մէկի վրայ): Երկուս մանկուհս ոմն
ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն (= ուրումն
ի դայեկաց = դայեակներին կամ դայեակներից մէկի
ձեռքով): Անդամ իւրեանց սեմք ոչ ինայէին (= աշխ.
իրենց մէկին, իրենցից մէկին անդամ չէին ինայում):
Ի միում աւուրց (= աշխ. օրին մէկը):

138. Բացառական և գործիական հօլովները սո-
վորարար նոյն կիրառութիւնն ունին, ինչ որ աշխար-
հարարումն նկատելի է հետեւելը՝ Բանակի իմաստով
(§ 133. 2. բ.), օրինակ՝ Արար նոյ յերեքհարիւր կանդ-
նոյ զերկայնութիւնս ապականին և ի յիսուն կանգնոյ
զլայնութիւնս Բարձրութիւն Գողթաթու. (էր) վեց
կանգուն և թզաւ: Եմմաւոն հետի էր յերուսաղնմէ
հարիւր և վաթսուն ասպարիտաւ: Նստաւ արտաքոյ բա-
նակին հետի երկուսասան հրասախաւ: — Այսպէս և Հոռ-
մայեցի յաղղէ կամ ազգաւ (= աշխ. ազգի կողմից կամ
ազգով հոռմայեցի):

Ա. Ծ Ա. Կ Ա. Ն

139. Գրաբարում, ինչպէս և աշխարհաբարում, ածականները խօսքի մէջ վարած պաշտօնով միայն տարբերում են իբրև ածական անուն կամ մականուն, մակբայ և մակածական: Օրինակ՝ քաջ այր. քաջ գիտեմ, քաջ յայտնի: Մակբայների և մակածականների կիրառութեան համար առանձին գիտելիք չկայ:

140. Ածական անունների համար պէտք է նկատել նրանց շարադասութիւնը և համաձայնութիւնը, որ մեծ մասամբ արդէն առաջ բացատրուած է:

1. Ածական անունները, ինչպէս և սեռական ինքերնները (յատկացուցիչ), որոնք իսկապէս մականունի պաշտօն ունին, իրենց անունից թէ առաջ են դրում և թէ յետոյ: Հարցական և յարաբերական ածական անունները միայն միշտ առաջ են դրում: Օրինակ՝ քաջ այր, այր քաջ, յաշխարհս Հայոց, ի Հայոց աշխարհս, Ի ժամ դահու պատրաստութեան: Ի նոցա տեղիս: Առաւել ընդ Հայոց աշխարհին մարանչէր: Աւելի քան զաւուրց սովորութիւն:

2. Նախադաս ածական անունները թուով և հօլովով սովորաբար չեն համաձայնում իրենց գոյական անունին, իսկ յետադասները սովորաբար համաձայնում են: Օրինակներ՝

ա. Նախադաս անհամաձայն, — Ճառագրեմք զբազում հարուածան: Առաքեաց առ նա բազում գանձիք: Էր զոր չարաչար մահուամբ վախճանէր: Ոչինչ կարօտին նորա մարմնաւոր մեծութեան: Յետ երկոտասան աւուր: Երկու աւուրքք: Այս ամենայն չարիք: Չայս նախարարքս: Յարքունի տանէ:

բ. Նախադաս համաձայն, — Վասն մեծի յուսոյն: Սրբոց հարց: Սրբոյ հօրն: Ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուր: Մերոյ ազգիս: Այսու բարեմատութեամբ: Ընդ նովին օրինօք: Չչորս զինուորան, չորից զինուորացն: Հինգ այր: Հնգի առն, հնգից արանց: Չերկուս աւուրս, երկուց աւուրց:

գ. Յետադաս համաձայն, — Արք պարսիկք: Արջք օրհասակոնք: Տերանց ձերոց մարմնաւորաց: Բանիք սպառնալեօք: Յլուք սպիտակօք: Ընդ օրինօք քովք: Հայր իմ, հօր իմոյ, հօր իմում, ի հօրէ իմմէ: Արք երկու, արանց երկուց: Եւ ասէր ցժողովուրդսն ելեալս մկրտիլ ի նմանէ:

դ. *Յետադաս անհամաձայն*, — Հրամանաւ արքունի: Արք հինգ, զարս հինգ. արք վեց, արս վեց ելն:

Ծան. 1. Որեար, մանկտի, մարդիկ ելն. ձեով եզակի են, իսկ իմաստով յողնակի, ուստի ածական անունները համաձայնում են ըստ իմաստի՝ Յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցուելոցն դադարեալ բնակէին: Մարդկանն մոլորելոց. բայց ե՛ մարդկանդ այգմիկ. մանկաւոյ իմում:

Ծան. 2. Մեր հին մատենագիրների սիրած ճարտասանական ձևերն են՝ ածական անունան փոխանակ գործածել նրանից կազմուած վերացական անունը 1, իբրև սեռական ինդիք. 2, կօքի իմաստի պահանջած հորովով, իսկ բուն անունն իբրև վերացական անուն սեռականը: Օրինակ՝ Ծառայք ամբարշտութեան (փոխանակ ծառայք ամբարշտք): Պաշտօն պղծութեան: Յերգս ե ի կաքաւս լկաութեան: Խնդութեամբ սրտիւ (այս համաձայնութեան մասին տես § 137. 5): Յն թափեցից գրաւնութիւն թիւնից, կամ ուր բացատրեցից գրաղմութիւն նետիցն: Յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոցն (տես ե § 137. 5 զվնասակարս խոսոց):

141. Բացայայտիչն իբրև մականնունական ինդիք, լինի բացայայտեալից առաջ թէ յետոյ դրուած, սովորաբար թուով և հոլովով համաձայնում է իւր բացայայտեալին: Տեղերի յատուկ անունները միայն, եթէ նախադաս են (երբեմն և յետադաս ժամանակ) սովորաբար

անփոփոխ են մնում: Օր. Արշակ արքայ, Արշակայ արքայի, յԱրշակայ արքայէ, Արշակաւ արքայիւ: Սպարապետն Վարդան, սպարապետին Վարդանայ ելն: Ապար աշխարհ, Ապար աշխարհի, յԱպար աշխարհէ ելն:

Յ Օ Դ Ե Բ

142. Գրաբարի յօդերն են՝ ս, ղ, ն, որոնք գործ են ածուում՝

1. Յուցական իմաստով՝ իբրև այս, այդ, այն. ինչպէս՝ տեղիս = այս տեղի, տեղիս այս, տեղիդ = այդ տեղի, տեղիդ այդ. տեղին = այն տեղի, տեղին այն:

2. Դիմորոշ իմաստով, ինչպէս աշխարհաբարում, ես, դու, մենք, դուք բառերի նշանակութեամբ. օրինակ՝ Մի հեղգասցուք մեղաւորքս դառնալ առ Աստուած: Օգնեան ինձ միայնումս, որ ոչ ունիմ օգնական, և տաց փառս քեզ՝ ճշմարտիդ: — Այլ և կոչականների հետ՝ Լուսրոբ ինձ, զօքք ամենեքեան: Սիրեցեալդ իմ:

3. Ստացական իմաստով՝ ինչպէս աշխարհաբարում՝ իմ, քո, իւր, մեր, ձեր, իւրեանց, նորս, նոցա բառերի իմաստով, որոնց հետ և սովորաբար գործ են ածուում: Օրինակ՝ Եթէ ակն

քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի: Յայսմ գիշերի զողիդ ի քէն ի բաց պահանջիցեն: Կենդանի ես և շունչդ ի քեզ է: Ի քում ականդ գերան կայ: Զմեր վատթարութիւնս յոտարայց: Մերոյ ազգիս: Աշխարհս Հայոց: Զձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի ճամարտութիւն երևելի մերոց դիւցազնական օրինացս: Հաւասար իմոց սիրելի նախարարացս:

143. Գոյականաբար գործածուած ածական անունները և սեռականները, որոնց անունը գեղջուով է, ստանում են, ինչպէս աշխարհաբարում, սովորաբար ն, երբեմն ս, դ յօդը և անուան նախդիրը. այսպիսի ածական անունները գրւում են իրենց գոյական անուան հոլովով, իսկ սեռականները միայն ուղղական և հայցական հոլովով են գործածւում, երբեմն միայն յօդնակի թուով: Օրինակ՝ եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն (= ընդ փայտ չոր) զինչ լինիցի: Երթայք տուք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Հօգայ զաշխարհիս (= աշխարհիս բաները) կամ զՏեառն: Զքոյսն ի քոյոց քեզ մատուցանեմք: Զնոցայն լաւ վարկուցեալ քան զիւրն փրկութիւն:

Առանձնապէս դիտելու է, որ գերանուն-

ների սեռականները (որոնցից իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական ածական են. § 64. 6. 7) լինում են՝

Իմ, իմն, իմս, իմքս, իմոյք, յիմսս = իմոյական, իմոյին, իմոյին = իմը, իմս, իմինը:

Քո, քոյն, քոյդ, քոյքն, զքոյսն = քոյական, քոյին = քոնը, քոնդ, քուկդ:

Իւր, իւրն, իւրքն, յիւրսն = իւրական, իւրային (իւրայոցն, յիւրայոց, իւրայովք) = իւրը, իրենը, իրականը:

Մեր, մերս = մերային (մերայնոց), մերոյին, մերոյն = մերը, մերոնք:

Ձեր, ձերդ = ձերային (ձերայնոց), ձերոյին = ձերը, ձերոնք:

Իւրեանց, իւրեանցն, զիւրեանցն, իւրեանցքն, յիւրեանցն = իւրեանցոյին = իրենցը:

Սորայս, գորայդ, նորայն, սոցայն, դոցայն, նոցայն (հոլովումը տես § 64. 7) = սրանը, գըրանը, նրանը և ին:

Չառ. Ա և Ո վերջացած բառերի վրայ երբ յօդ է գրւում, յօդից առաջ մտնում է յ. քոյդ, նորայն: Եղիցի ձեր բան՝ այոյն այո և ոչն ոչ:

144. Որ, որ ինչ, որ ոք, որպէս, որպիսի, որչափ, յորժամ, յորմէ հետէ, ուր, մինչ, զի (նախագաս) բառերով սկսուած երկրորդական յա-

րաբերական խօսքերի մէջ որ և է բառի (բացի նախգիրներէց, կապական բառերից, շողկապներէց ու միջարկութիւններից, ինչպէս և սին, որ, իմն, երբեմն անորոշներից), գլխաւորապէս բայի վրայ դրուում է ս, ղ, ն յօդերից մէկը: Ս յօդը նշանակում է այս դէպքում՝ ես, մենք: սա, սորա, այս, այսօրըիկ. ասա, այսր. այժմ, այսօր,— ղ յօդը նշանակում է՝ դու, դուք. դա, դորա, այդ, այդօրըիկ. այդր, յայդմ՝ ժամու. ն յօդը՝ նա, նորա, այն, այնօրըիկ. անդ, անդր. յայնժամ: Երբեմն էլ ստանում են աւասիկ, աւադիկ, աւանիկ ցուցականների իմաստը:

Յօդերն այսպէս գործ են ածուում աւելի այն ժամանակ, երբ յարաբերեալը յարաբերականից յետոյ է գալիս (§ 130. 2), կամ երբ յարաբերեալն անձնական ցուցական դերանուն է և զեզուած է: Բայց երբեմն յարաբերեալի զեզուած ժամանակն ևս աւելադրութեամբ բանում են այս յօդերը՝ խօսքին ոյժ տալու համար: Աշխարհաբարում այս դէպքում սովորաբար կրկնում է յարաբերեալը: Օրինակ՝ Ես որ կոչեցայս անմահ, ահաւասիկ ի մեռանել երթամ (— Ես, ես որ անմահ կոչուեցայ ...): Ես եմ որ խօսիմն ընդ քեզ: Զի ասէքդ՝ բարիօք ասէք (— Այդ որ ասում էք, լաւ էք ասում):

Ոչ զիտեմ զինչ խօսիսդ: Գիտէք զինչ արարիլք ձեզ: Սրարին որպէս ուսանն: Ապախտ արարեր զվատտակսն զոր ինձն վատտակեցեր: Եւ որ ըսպառնասդ ինձ մահու, ահա խառնես զիս ի գունդն Գրիտոսի: Այլ զոր դուդ կոչես մեծ Անահիտ տիկին ... Որ ասացերդ թէ ... Զոր ասացերն թէ ... Եւ մինչդեռ կայրն կախեալ այսպէս, խօսեցաւ զայս ամենայն: Ա՞յդ են աներեւոյթ արարածք Աստուծոյն քոյ՝ զոր դուն տեսանես: Դու աստէն իսկ աշխատեաց ի մշակութիւն տանջանայդ յորում կասդ: Երանի երկրին, ընդ որ նայն անցանիցէ, և տեղոյն, ուր նայն վախճանեսցի (տես § 7. ծան. 3. 3):

145. Հարցական խօսքերի մէջ ևս երբեմն բայի կամ ուրիշ բառի վրայ դրուում է ս, ղ, ն յօդերից մէկը, որ և աշխարհաբար թարգմանուում է այս, այդ, այն ցուցականներով. օրինակ՝ Զինչ խօսիսդ—Այդ ի՞նչ ես խօսում: Զի՞նքդ երկնչիսդ ի սատանայէ—Այդ ի՞նչպէս վախեում ես սատանայից:

146. Որոշող ն յօդի գործածութիւնն աշխարհաբարում և գրաբարում մեծ մասամբ նոյն է: Ուշադրութիւն պիտի դարձնել հետեւեալ տարբերութիւնների վրայ.

1. Սովորաբար որոշող յօդ չեն առնում ընդհանուր իմաստով, իբրև սեռի անուն, դորժածուած անունները, մանաւանդ երբ յոգնակի են. բայց երբ հայցական են, զ նախդիրն առնում են: Անյօդ են մնում նոյնպէս և բնութեան մէջ մի հատ առարկաների անունները՝ լուսին, արեգակն, երկիր, երկին, աշխարհ, հիւսիս, հարաւ և ըն. նոյնպէս և դժոխք, սատանայ, դիր (=Սուրբ Գիրք). ազգերի անունները, երբ յոգնակի են. յատուկ անունները, այլ և՛ ծով, յամաք. Տէր, Աստուած (քրիստոնէական իմաստով), յաճախ և արքայ բառը և ըն: Օրինակ՝ Հաւատք (=հաւատքը) առանց գործոց մեռեալ են: Գինի (=գինին) ուրախ առնէ զմարդ և հաց հաստատէ զսիրտ մարդոյ: Որ սիրէ զխրատ, սիրէ զիմաստութիւն: Զայնր զփորձ ոչ միայն քրիստոնեայք, այլ և հեթանոսք և մոգք գիտեն: Հրեայք ի զուր ակնկալութիւն կապեալ են: Մի գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն և ուր գողք ական հատանեն: Ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք և յորժամ կամիք կարող էք առնել նոցա բարիս:

2. Եթէ յատուկ անունն իբրև խնդիր ունի

առաջից մի մականուն կամ հասարակ անուն (բացայայտիչ), այդ մականունն ու հասարակ անունն առնում են ն, կոչականում ղ յօդը: Իսկ եթէ մականունը կամ հասարակ անունը յատուկ անունից յետագաս են, երկուսն ևս, խնդիրն և խնդրառուն, սովորաբար անյօդ են մնում: Ինչպէս՝ Մեծն Ներսէս, սէգն Տըրգատ, թագաւորն Տրգատ, գետն Տիգրիս, քաղաքն Տիգրոն, քնչդ Թէօփիլէ,—Ներսէս Մեծ, Տրգատ թագաւոր, Երասխ գետ: Նոյն ձևով արեգ ամիս, շուշան ծաղիկ, եղևին ծառ. բայց՝ ամիսն արեգ, ծաղիկն շուշան, ծառն եղևին:

3. Եթէ անունն ունի որոշող սեռական խնդիր, սովորաբար միայն սեռականն է յօդ առնում: Երբեմն սակայն երկուսն ևս՝ սեռականն ու իւր անունը՝ յօդ են առնում: Բայց երբ սեռականը յատուկ անուն է, յօդը սովորաբար՝ գրւում է միայն խնդրառու անուան վրայ: Երբ սեռական խնդիրն է իմ, քո, մեր, ձեր, իւր, իւրեանց, նորա, նոցա բառերից մէկը, կամ մի ազգի անուն, դրանց խնդրառու անունը կարող է ն յօդ առնել կամ բնաւ անյօդ մնալ (տես § 142. 3): Օրինակ՝ Կինն Գնելայ հասեալ առ սուրբն Ներսէս՝ գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն: Մի

գիտասցէ ձախ քս զինչ գործէ աջ քս. որպէս զի եզիցի սղորմութիւնն քս ի ծածուկ, և հայրն քս, որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս: Զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, ի նախարարոն Հայոց անկանէր թագաւորութիւնն: Այրուձին Հայոց, Թագաւորն Հոնաց: Զինուորն Քրիստոսի. ի բառնալ ազգին Ասշակունեաց: Ազգն Սասանայ պարսկի: Ի սուրբ ուխտէն քրիստոնէից:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

147. Իրաբարի կապերը գրւում են իրենց գոյականից առաջ, ուստի կոչուում են նախդիր կամ նախադրութիւն. նախդիրներն են՝ զ, ի(,), ց, առ, ընդ, ըստ, իբրև զ, քան զ, մինչև, բաց կամ բայց, հանդերձ, վասն:

148. Նախդիրների կիրառութեան համար ընդհանրապէս պէտք է խմանալ.

1. Կողմնակի խնդիրներն իրենց խնդրառուի հետ առնւում են իբրև մի միութիւն. ուստի նախդիրը գրւում է նախադաս կողմնակի խնդիրներից ամենից առաջ. նոյն իսկ եթէ կողմնակի խնդիրը մի նախդրով է սկսուում, նրանից

առաջ ընկնում է խնդրառուի նախդիրը: Օրինակ՝ Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս: Եւ զընդ լծով կացեալսս (==զկացեալսս ընդ լծով) լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց:

2. Նախդիրը կարող է կրկնուել նախադասու յետագաս կողմնակի խնդիրների և իրենց խնդրառուի վրայ, մանաւանդ երբ կողմնակի խնդիրը որ և է բառով բաժանուած է իւր խնդրառուից: Օրինակ՝ Զամենեցունց զկարգեալ թռչակնն նուազեցուցանէին. Զգէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց: Յափշտակել ըզքրիստոնէից զինչս և զստացուածս: Այլ զԱստու՝ ոյ զպատիւն և զպաշտոն ոչ ումք վայել է տալ: Զյունաց աշխարհն և զՀոռոմոց քաջ գիտեմ: Յամենեսին ի ձեզ: Ընդ ձեզ ընդ ամենեսեան: Զսղջոյն բերեալ զմեծ թագաւորին: Զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազմականին: Աբէլ ի հարազատէն սպանանի յեզբօրէն:

3. Նախդիրները մեծ մասամբ ունին մի քանի նշանակութիւն և գործ են ամուսւմ մի քանի հօլովների հետ՝ ձևափոխելով նրանց հօլովական իմաստը: Երբեմն սակայն նախդիրները միայն աւելի որոշում են հօլովների իմաստը, որ հօլովներն առանց նախդրի էլ ունին:

2.

149. Զ նախդիրը բառին կպած է գրւում: Բաղաձայնից տուալ արտասանւում է ըզ. ձեռագիրները մէջ գրւում է նաև զը, ինչպէս արտասանւում էին հին վարդապետները, — զմարդ — ըզմարդ, զրմարդ:

150. Զ հայցականի հետ իբրև որոշող յօդ, երբ հայցականը որոշեալ է կամ սեռի անուն է, յաճախ և երբ Գտեոզութեան հայցական է (տես §§ 50, 99, 1. 133—135, 146, 1):

151. Զ տրականի հետ խնդրում են մի քանի բայեր՝ հարկանել, զարկանել, զարկուցանել, անկանել: Աշխարհաբար՝ տրական, գործիական, երբեմն և ուղղական հոլովներով. ինչպէս՝ Հարկանեմ զքարի, զվիմի, զգետնի (=քարի զարնել, քարովը տալ): Յետոս յետոս չոգան և զարկան զգետնի (=գետին զարնուեցան, գետնովը դիպան): Ծափ զծափի հարկանեմ (=ծափ ծափի տալ): Նկատել հետևեալ դարձուածները՝ զահի, զերկիւղի, զամօթի, զդողման հարկանիմ: Զագահութեան, զախտի հարկանիմ (ինչպէս աշխ. մէկի սիրուն զարնուել): Զդիմի հարկանիմ ումեք:

152. Զ բացառականի հետ, որ կոչոււմ է պատմական հոլով, նշանակոււմ է՝ մասին, վրայ, համար (=վասն, յաղագս, ի մասին), կամ թարգմանոււմ է լոկ բացառական հոլովով: Խնդրում են՝

1. Այն բայերը, որոնք ցոյց են տալիս՝ ասել, պատմել, մտածել. ինչպէս՝ խորհիմ, զըրպարտեմ, վկայեմ, ճառեմ, գրեմ, հարցանեմ, հոգամ, փոյթ ունիմ, անփոյթ աւնեմ, տրտընջեմ, քրթմնջեմ, խէթ ունիմ, — այլ և գոհանամ, կարօտիմ: Օրինակ՝ Հարցանելով եհարց զմէնջ (=մեզնից, մեր մասին): Ոչ է փոյթ քեզ զումեքէ: Խորհուրդ արարին զնմանէ: Եղբայր քո ունի խէթ ինչ զքէն: Դու ուստի գիտես զայդպիսի բանս խօսել զՏեառնէ: Աստուած իմ, գոհանամ զքէն:

2. Ունիմ, կալնում, ձգեմ, աւնում, բուռն հարկանեմ, — կապեմ, կախեմ, կախեալ կամ բայերը: Աշխ. բացառական հոլով. օրինակ՝ կալաւ զձեռանէ նորա (=ձեռիցը բռնեց): Բուռն եհար զնոցանէ: Գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն (=աւետարանից կապեց):

3. Առաքեմ, յղեմ, արձակեմ (=մարդ ուղարկել), գնամ, երթամ, դեսպան առնեմ ևն. զումեքէ, զիմեքէ=մէկի ետեւից գնալ, ու-

դարկել (կանչելու, բերելու համար), կամ դնալ, ուղարկել մի քանի (բերելու համար): Օրինակ՝ Առաքեաց հապուհ ի հայս արս զհողոյ եւ զճրոյ (=հողի ու ջրի) և ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ զորմէ յլեացն (=ինչի որ ուղարկել էր):

153. *Ձ* զործիականի հետ, որ կոչուում է պարառական հարով, նշանակում է.

1. *Տեղի իմաստով՝ շուրջը, չորս կողմնը, չորս ընդորը, կամ՝ կողմը, վրայ, մօտերը:* Օրինակ՝ Մի ոմն ի նոցանէ որ զնովաւն կային: Խոնեցան զնովաւ ժողովուրդք բազումք: Ամենայն ժողովուրդն զժողկերբն զցամաքն ունէին: Եղեն դիակունք նոցա իբրև աղբ զճանապարհաւ: Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն:—Երբեմն աւելանում է շուրջ մակբայը. ինչպէս՝ Ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր: Հայեցաւ շուրջ զիւրև յաշակերտան:

2. *Ժամանակի իմաստով՝ մօտերը (շուրջ), ժամանակները:* Օրինակ՝ Ձինն ժամու գոչեաց Յիսուս (=ժամը իննի մօտերը, — շուրջ ինը ժամին): Եւ ելեալ զերրօրք ժամու՝ ետես այլս, զի կային դատարկք ի հրապարակս: Ձմէլ դիշերաւ: Ձայնու ժամանակաւ:

3. *Հետեւեալ բայերն առնում են զուլ գործիական խնդիրներ, որ աշխարհաբար թարգմանուում են կամ գործիական, երբեմն և ուրիշ հորովով, կամ վրայ, վրայով բառերով, — եմ, լինիմ, գամ, առնեմ զիւրք—մի բանով լինել (անել), մի բանի հետ լինել, զբազուած լինել. ինչպէս՝ Մինչ նոքա զազմկաւն էին կամ զայնու լինէին, գային: Ձբանիւք առնել զոք (=մէկին խօսքի բռնել, խօսքով անել): Ամենայն պակասութիւնքք զինև (=իմ վրայ, իմ վրիս): Ձբաղիմ զիւրք, Ձմիմեամբք (=իրար վրայ) ելանել, դիզանել, արկանել: Այլ զարամբ ելանէին ախրել աշխարհիս: Ձամամբ ծիծաղել, կատակել, արհամարհել, այպանել:—Ձմտու ածել (=միտը բերել, մտքով անցնել, մտածել): Ածել զիւրև (=յանկուցանել, իրեն քաշել): Ածել զձեռամբ, զձեռօք, զբաամբ (=բմբռնել, ունել): Ածել զնովիմբ (=աւելացնել, վրայ բերել): Ածել զբոցով (=բոցով անցկացնել, վրան դնել): Ածին զնոքօք ձորձա (=վրաները ձորձ քաշեցին): Առնել, առնուլ զզէն իւր զինքեամբ (=վրան ունենալ, առնել): Արկանել ինչ զիւրեաւ, զգլխով (=վրան գցել): Ձամենայն վնասուն պատճառան արկանէր զկապելովքն: Եւ զաջ թին բեկեալ զձախոյ կողմամբն արկեալ: Անկանել*

զպարանոցաւ (—վզովն ընկնել): Երթալ, վազել, անցանել զիւրք, զգետով, զցամաքաւն (—մի բանի վրայով): Երթալ զսրով (—սրի վրայ ընկնել): Յանել ինչ զերեսօք: Հեղուլ արտասուս զերեսօք (—երեսովը, երեսի վրայով): Անցանել, զանցանել, զանց առնել, ելանել՝ զպատուիրանաւ, զուխտիւ, զխրատով, զնովաւ (—զանց առնել, անտես անել, չկատարել, չպահել): Անցանել, անցուցանել, զանցանել զոմամբ, զիւրք (—գերազանցել, առաւելուլ): Եկեղեցի շինեցին, որ անցուցանէր պայծառութեամբ զթագաւորաբնակ արքունեօքն(—գերազանցում էր): Անցանել, զանցանել զոմամբ (—առաջ անցնել, առաջ ընկնել մէկից):

Ի, Յ.

154. Ի նախդիրը ձայնաւորով սկսուող բառերի վրայ դառնում է յ, երբեմն ի յ, որ բառին կպած է գրւում:

155. Ի հայցականի հետ, որ կոչւում է նախդրիւ տրական, գործ է ածւում:

1. Երբ խնդիրը ցոյց է տալիս այն տեղը, երբեմն և իրը կամ անձը, դէպի որը ուղղւում է

գործողութիւնը իբրև պատասխան յո՞ հարցի (§ 103. 1): Աշխարհաբար թարգմանւում է ուղղական, տրական հօլովներով և դէպի, մէջ, վրայ, մօտ բառերով: Օրինակ՝ Եւ թագաւորն հայոց դառնայր ի կողմանսն հայոց, յԱյրարատ դաւառ, ի Վաղարշապատ քաղաք: Ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս: Երթայք ի վաճառականս և գնեսձիք: Առաքեցից ի նոսա մարգարէս և առաքեալս: Դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս: Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկարան: Ընդունել ինչ ի գանձ արքունի: Իբրև եկն ի նա (ի թգեհին): Զբողոր բարկութիւնն եհեղ յայրն երանելի: Որ յարեւելս առ մեզ գայցէ՝ թողցեն. իսկ յարեւելից յարեմուտս անանց լիցի ճանապարհ: Ամբարձ գաչս իւր յաշակերտս: Ընդէր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս: Դուք երթայք ի տօնըն, ես ոչ երթամ յայն:

2. Երբ խնդիրը, սովորաբար բայական անուն կամ անորոշ դերբայ, ցոյց է տալիս նպատակը, որին հասնելու համար կատարւում է գործողութիւնը: Աշխարհաբար թարգմանւում է տրական, երբեմն և ուղղական հօլովներով և համար (—վասն) բառով: Բայական անունը սովորաբար անորոշ դերբայ է դառնում: Երբեմն

պահուում է գրաբարի ի նախագիրը: Օրինակ՝ երթալ յորս հասանել յօգնութիւնս, գումարել ի մարտ պատերազմիս Ի խորհուրդ կոչել Ի գործ առարել: Որ լեզու որում դասու հասցէ յաշակերտութիւնս: Յովհաննէս քարոզէր զմկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց: Յառաջագոյն ինկեաց զմարմին իմ ի նշան պատանաց: Այն հիւանդութիւն չէ ի մահ: Ձիարդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել: Սակայ ի գլխումն և ի կանգնումն բազմաց: Սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունիս Աշխարհադիր առնել զամենայն երկիրն Հայոց ի թուղութիւն հարկաց և ի թեթևութիւն այրուծիոյն: Նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւնս: Դուք պարտէք զմարմինս ձեր նմա ի կերակուր:

Սոյն իմաստով գործ են ածում և առ, առ ի, առ յ, առ ի յ. օրինակ՝ Պատրաստք եմք առ ամենայն մեքենայս, ... ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել: Վառեալք և ջուռեալք առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ: Աշակերտք հեղգք առ ի յուսումն և փոյթ առ ի վարդապետել: Առաքեցին դաւաճանս ... զի ըմբռնեացեն զնա բանիւք առ ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորին:

3. Երբ բայը ցոյց է տալիս մի բանից մի ուրիշ բանի, մի վիճակից մի ուրիշի, մի պաշտօնից մի ուրիշի ևլն. փոխուել, դառնալ: Աշխարհաբար թարգմանում է սեղանական կամ տրական հոլովներով: Օրինակ՝ Եղիցին դժուարինքն ի դիւրինս և առապարքն ի հարկի ճանապարհս Հոգ էիր և ի հոգ դարձցիս: Զուլեացեն զսուսերս իւրեանց ի խօփա և զսուինս իւրեանց ի մանգաղս: Առ առնելոյ զնա յողջակէզ:

4. Գործիական հոլովի իմաստով, որի տեղ և դրում է յաճախ: Աշխ. գործիական հոլով: Օրինակ՝ Ի ճանապարհ հեթանոսաց մի երթայք: Գոչեաց Յիսուս ի ձայն մեծ: Մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Աղաղակել ի մի բերանս: Կոտորել ի սուր սուտերիս: Վառել ի զէն և ի զարգ: Եհար զնոսա ի հարուածս անհնարինս: Ննչել ի քուն թանձրութեանս: Յայլ և այլ լեզուս խօսել: Ծինել զպարխապն կանգունս հինգհարիւր յերկայնութիւնս:

156. Մեր քերականները ի նախորդով հայցական հոլովը դնում են իբրև առանձին հոլով՝ նախորիւ քսական, որովհետև շատ բայեր և ածականներ այդ ձևով են առնում իրենց առարկայական ինդիքը, սր աշխարհաբարում սովորաբար (երբեմն և գրաբարում) տրա-

կան հորովով է դրուում, ինչպէս են բացի վերևում յիշուածներէջ նաև՝ ածել, հասանել, հասուցանել (ի փառքս, ի պատիւ). ձգել, արկանել (զձեռն յինչ—ձեռքը մեկնել մի բանի). մերձենալ յոք, յինչ (—կոչել, դիպչել մէկին, մի բանի). ձայն առնել (—ձայնել մէկին). արկանել (յինքն). գալ (ի միտս—ուշքի գալ). յաւելուլ. փչել. ածել (ապտակ ի ծնօտ ուրուք). գարձուցանել ինչ յոք. սաստել յոք. յարել, հուստալ, հայել, յեղուլ, յուսալ, ձեռն միտել. խնայել, դիմել. մատնել, տալ. մատուցանել. խոստովանել. պահել (յօրն —... օրուան պահել): Նախանձաւոր լինել, պարտաւոր լինել, վնասակար լինել, մէտ և յօժար, պխտանի, պխտանացու, վտահ, շապաստան լինել (յօք, յինչ—մէկին, մի բանի) ևլն:

157. Ի հայցականի եւ եզակի տրականի հետ, որ կոչուում է ներքոյական հորով: Այս իմաստով յօգնակիւում է ի նախդիրը դրուում է միշտ հայցականի վրայ. իսկ եզակիում տրականի վրայ: Բայց եթէ եզակի տրականն այ, ոյ վերջաւորութիւնն ունի, վերցուում են ում, ոջ վերջաւորութիւնները, եթէ կան (§§ 65, 68, 5). կամ եթէ ի հորովման (ձև ունին (§ 94, 2), այս ձևն է վերցուում (ինչպէս՝ գիշեր, գիշերոյ,—ի գիշերի. մարմին, մարմնոյ,—ի մարմնի), թէ չէ հայցական հորովի վրայ է դրուում ի նախդիրը: Յատուկ անունների, երբեմն և հասարակ ա-

նունների և դերանունների համար ևս վերցուում է եզակի հայցականը. այսպէս՝ Ես բառն ունի միշտ յիս: Ներքոյական դրուում են.

1. Այն խնդիրները, որոնք եղելութեան մի տեղում, մի բանի մէջ լինելն են ցոյց տալիս, իբրև պատասխան ղեր հարցի (§ 103, 2): Աշխարհաբար թարգմանուում է ներքոյական, տրական և ուղղական հորովներով, կամ մէջ (միջին), վրայ, երեսին ևլն. բաւերով: Օրինակ՝ Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի գերեզմանի, յորս ամենևին չծագէ նշոյլ սուրբ լուսոյն Քրիստոսի: Երևեցան նոքա սուր ընդ մէջ և վահան ի ձեռին: Հարքն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին: Գրէր մատամբ յերկրի: Որ կայցէ ի տանիս՝ և կարասին իւր ի տան, մի իջցէ աւնուլ: Ընկալար զբարիս քս ի կեանսն քում: Եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում (§ 52) զգեցաւ իբրև զմի ի նոցանէ: Օրհնեալ ես դու ի կանայս: Որ ի փոքուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է: — Հեծեալ ի ձի, յէջ և յաւանակի իշոյ: Հեծեալ էր ի ջուրսջ իւրում: Երիվար, յորում արքայ հեծանէր: Նստել յաթոռ իւրում: Դնել ի բանտի, ի գիպահոջ, ի գբի

ներքնում, ի նոր գերեզմանիս Սերմանել յազարակի: Կայր Յիսուս յեզր ծովուն: Ես ի Հայր և Հայր յիս է: Այր մի էր յերուսաղէմ: Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն:

2. Ժամանակի պարագայական խնդիրները, իբրև նրբ հարցի պատասխանս Աշխարհաբար՝ տրական, ուղղական և ներքոյական հոլովներով, այլ և ժամանակ բառով: Օրինակ՝ Յամոնեանն չորրորդի հասին յաշխարհն Հայոց: Հասին ի Դունն ի մեծի շաբաթու Զաակինս: Յեօթներորդում ժամու եթող զնա շերմն: Ի հնդետաօսաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ ... Ի քահանայապետութեան Աննայի և Կայիափայ եղև ... Ի ծերութեան, ի մանկութեան, ի խաղաղութեան: Ի ժամու, յամենայն ժամու: Պարտ է յամենայն ժամ յաղօթս կալ: Ի նմին ժամու, ի նմին ժամանակի, յայնմ ժամանակի: Յաւուրն ութերորդի եկին, յաւուրս Շապհոյ: Ի սկզբան, ի միաշաբաթուն, ի միաշաբաթուօջն: Պահեմ երկիցս ի շաբաթու: Ի տարւոջ մի անդամ: Ի տարւոջ և կիսում (—տարի ու կէսում), յերեսուն ամի, ի վեց աւուրս (—երեսուն տարում, վեց օրում): Ի գիշերի և ի

տուրնջեան. ի առէ և ի գիշերի (—գիշեր ցերեկ): Յայսմ գիշերի (—այս գիշեր), Յայն բան եկին աշակերտքն (—այն խօսքի վրայ, ժամանակ):

3. Անորոշ գերբայը ժամանակի պարագայի իմաստով: Աշխարհաբար թարգմանում է իս վերջաւորութեամբ անկատար գերբայով (գնալիս, խօսելիս), ժամանակ, յետոյ բառերով (գընալու ժամանակ, գնալուց յետոյ), կամ թէ յաճախ երկրորդական խօսքով (երբ որ այս ինչ բանը լինում է, լինում էր, եղաւ): Իմ, քո, մեր, ձեր, իւր ստացականները անորոշ գերբայի հետ դրւում են ում՝ վերջաւորութեամբ տրական: Օրինակ՝ Ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի: Ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոզք յարեւելից եկին յերուսաղէմ: Բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին: Ահա ել սերմանահան սերմանել, և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ: Ի ծագել արևու տապացաւ: Ի գնալ քում:

158. Յ նախդիրը, որ միշտ անուան հետ կպած է գրուում, դրուում է հայցականի հետ և գործ է ածուում՝

1. Մինչև բառի իմաստով, որի հետ երբեմն և բանում է: Օրինակ՝ Ընդէր, արքայ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուր: Յայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին: Եկայք երթիցուք մինչև ցիւթղեհէմ:

2. Իբրև խնդիր մի քանի բայերի և ածականների՝ փոխանակ տրականի: Օրինակ՝ Ասէ ցնա, ցիս, ցմեզ, ցոք, ցեղբայր իւր: Ինքն ցինքն ասել: Ասել ցմիտս իւր: Ո՞ իցէ ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա: Եհարց ցնա, ցնոսա, ցաշակերտան: Եա զնա ցմշակս իւր, ցաղջիկն: Յմեզ ապաստան:

Ա. Ռ.

159. Առ հայցականի հետ նշանակուում է.

1. Դէպի, մօտ, երբ խնդիրը ցոյց է տալիս այն անձը կամ իրը, դէպի որը ուղղուում է գործողութիւնը: Աշխարհաբար թարգմանուում է

նաև տրական, սակաւ անգամ և ուղղական հոլովով: Օրինակ՝ Երթ ի տուն առ ընտանիս քո: Դու առ իս դաս: Զգոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր: Աղօթիւք առ Աստուած կարգային: Գրել իբր առ ատելիս և առ անպիտանս: Ասաց առակ մի առ նոսա: Անկաւ առ ծունկս նորա: Մատուցեալ քահանայն առ սեղանն:

2. Համեմատութեամբ, վերաբերութեամբ, նկատմամբ, համար, դէպի: Օրինակ՝ Եթէ առ երկրաւորս այսպէս, որչափ ևս առաւել առ հոգեորն: Արպէս առ մի մարդ, այսպէս և առ բոլոր աշխարհս: Զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին: Եթէ առ անբան արարածս այսպէս հոգ տանի Աստուած, որչափ ևս առաւել առ բանաւոր աշխարհ՝ մարդն: Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ: Այլ զինչ է այն առ այդչափ մարդիկ: Փոքր է մարմնոյ մեծութիւն առ հոգևոր փարթամութիւն: Սէզ, պճնող առ հանդերձս: Գլթած, ոչորմած առ աղբատս ևլն:

160. Առ հայցականի եւ եզակի տրականի հետ նշանակուում է՝

1. Մօտ, մօտին, կշտին. թարգմանում է երբեմն և տրական հոլովով: Օրինակ՝ Աւասիկ տապար առ արմին ծառոց զնի: Քորք սորա առ մեզ են: Գտին զյաւանակն կապեալ առ դուրս: Ճարակեացէ գայլ ընդ գառին և ինձ առ ուլու մակաղեսցի: Կային առ խաչին: Գուք էիք մեր պարծանք առ թշնամիսն ճշմարտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնամիս: Զհեռաւորս ևս առ միմեանս համարէին: Կէօքն առ նմա իսկ էին ի կարաւանին:

2. Համար, պատճառով, երբեմն նպատակով: Աշխարհաբար աւուժ է նաև բացառական հոլովով: Անորոշ դերբայը հայցական է դրուժմ, բայց հետի ստացական իմ, քո, մեր, ձեր, իւր ածականները՝ տրական: Օրինակ՝ Ո՞ր ի ձէնջ առ հողալ իւրում յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի: Առ ահին (=ահից, ահու) աղաղակեցին: Առ նախանձու մատնեցին զնա: Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ: Եւ առ յոյժ խնդութեան ոչ երբէք յագէին երկայնութեամբ ճանապարհին: Առ յոյժ աղքատութեանն ակամայ դիմեսցեն յօրէնս մոգաց: Առ սէրն Քրիստոսի խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանս: Առ հեռ և առ նախանձ ծնկեալ՝ նենգաւ զնայր ընդ Դաւթի:

Առ հողս, առ ցաւս իւր ճշալ: Զայն արասլիք առ իմոյ յիշատակի:

3. Դարձուածներ՝ Ունել, դնել, համարել, գրել զոմն առ իմաստունս, առ յիմարս, առ մարդիկ (այլ և համարել ի մարդիկ), առ սուտս, առ լաւս ևլն. = մէկին իմաստունի, յիմարի, մարդու տեղ դնել, մէկին մի քան համարել: Տալ երկուս գառինս առ օր (=օրէնք, օրը): Առ այր (=մարդը, իւրաքանչիւր մարդ, մարդագլուխ) հարիւր դրամ տուգանեսցին: Եւ ոչ առ սակաւ մի համբեր: Առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուցեն: Ոչ սակաւ գանձս առ ժամայն ծախէին: Առ այն օր պահել հրամայեաց: Առ աչս, առ երևոյթս, առ երեսս (=երեսանց, դրսից):

161. Առ քացառականի հետ՝ առ ի ձևով կամ միայն առ՝ նշանակում է.

1. Մէկի մօտից, կողմից, ընթանից. այլ և պատճառով, համար, կամ լոկ բացառականի իմաստ ունի: Օրինակ՝ Առ ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր: Փառաւորեն զիս առ ի քէն փառօքն: Առ ի քէն ելի: Զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք: Զառ ի Քրիստոսէ աւանդեալ խոր-

հուրդս: Իսյր քս առ ի հօրէ, եթէ առ ի մօրէ: Խօսեսցի առ ի քէն ընդ ժողովրդեանդ: Առ յինքենէ խօսել, Ձի մի մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ: Ոչինչ զանդիտէին առ ի յոյժ բազմութենէն: Առ ի մեղաց (—մեղքիցը), առ ի չգոյէ: Առ երկիւղէ, առ հարկէ, առ պատճառէ, առ իւրեանց ընտթենէ (—յերկիւղէ, ի հարկէ և լն.):

2. Նպատակով, համար: Անորոշ դերբայն աշխարհաբար թարգմանում է երկրորդական խօսքով որպէս զի բառով սկսուած: Օրինակ՝ Յարիցեն սուտ մարդարէք և տացեն նշանս առ ի մոլորեցուցանելոյ ... և զընտրեալսն: Նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա: Արկանել դորա զիւղդ ի մարմին իմ՝ առ ի թաղելոյ զիս նշանակեաց: Եթէ յիրաւանց իմոց տաղականայցեն անձինք ձեր առ ի չառնելոյ ձեզ (§ 137. 1.) զամենայն պատուիրանս իմ, և ցրելոյ զուխան իմ, արարից նոյնպէս և ես ձեզ: Մանրացուցանէ զականջս առ ի չլսելոյ զդատաստան արեան. խնու զականջս զի մի տեսցէ զանիրաւութիւն. — Հանցէ ի զոհէն զառ ի յիշատակէն խորա: Անդ եզին առ ի յիշատակէ զսուրսն քարեղէնս: Նդովեաց զթղենին առ օրինակէ: Առ առակէ շրջեցուցանէին:

162. Առ զործիսկանի հետ նշանակում է՝

1. Տեղի իմաստով՝ մի բանի մօտը, մօտերը, մօտովը, — կշտին, մօտին (համեմատութեամբ): Օրինակ՝ ժողովուրդն կայր առ ծովեզերքն: Էր որ անկառ առ ճանապարհաւ: Սամարացի ոմն ճանապարհորդեալ ընդ նոյն առ նովաւ: Անդ էր առ լերամբ երամակ մի խողոց: Անցանէին առ Գալիլիացուովք: Հեղցէ քահանայն զարիւնն առ սեղանովը յանդիման Տեառն առ դրան խորանին վկայութեան: Ոչ առ այլովք վատթարովքն վեհ երևի: Ձի նչ է յարդ առ ցորենաւ: Փոքր է այս առ այնու:

2. Ժամանակի իմաստով՝ օրերը, ժամանակները, օրով: Օրինակ՝ Եւ որ այլ ևս հարկ աշխարհին՝ բազմադոյն քան առ հարքն նորա երթայր յարքունիս: Կարգեալ իսկ էին նոքա առ նախնեօքն մերովք: Առ այնու ժամանակաւ: Առ ջրհեղեղաւ: Առ կենդանութեամբ առն իւրոյ: Առ մեօք (—մեր օրով):

Ը Ն Դ.

163. Ընդ հայցականի հետ դործ է ամուսնի՝

1. ի նախդրի փոխանակ, յաճախ երբ խընդիրն ընդարձակ տարածութիւն է ցոյց տալիս:

Աշխարհաբար վրայ, երեսին, — մէջ, — դէպի բա-
ռերով, երբեմն և ուղղական, տրական ու ներ-
քոյական հոլովներով է աւուում: Օրինակ՝ ել
համբաւ նորա ընդ ամենայն երկիրն ընդ այն:
Քարոզեցի աւետարանս ընդ ամենայն աշխարհ:
Բժշկէին ընդ ամենայն տեղիս: Ընդ ամենայն
տեղիս է տէրութիւն նորա: Քարոզէր Յիսուս ընդ
ամենայն Գալիլիացիս: Աշխարհագիր առնել ընդ
ամենայն տիեզերս: Աւետաւորս առաքեաց ընդ
ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ (բայց՝
Աւետիս խնդալիս առաքէր յատրուշանս բա-
զումս): Յորդեալ տարածանէր (քրիստոնէու-
թիւն) ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանա-
պարհին: Ոչ յանկեան ուրեք աշխարհի քարոզի
(օրէնքն մեր), այլ համատարած ընդ ամենայն
երկիր, ընդ ծով և ընդ ցամաք, և ընդ կղզիս,
ոչ միայն ընդ արևմուտս, այլ և ընդ արևելս, այլ
և ընդ հիւսիս և ընդ հարաւ: Հող հանէր ընդ
չորս կողմանս երկրի: Կնքեաց զդրունս եկեղե-
ցեաց ընդ ամենայն աշխարհն Պարսից: — Յածիք
ընդ ծով և ընդ ցամաք: Մտեալ շրջէր ընդ երկ-
քով: Շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և
ընդ գետոս: — Հայել ընդ երկինս, ընդ ագռաւս,
ընդ շուշանն վայրի, ընդ նոսա, ընդ նա: Գնաց
ընդ արևմուտս: Գնել ընդ սնարս իւր: Թ՛քին ընդ

երեսս նորա: Յովհաննէս ունէր ... դօտի մաշկե-
ղէն ընդ մէջ իւր: Ասել ընդ միտս, զարմանալ
ընդ միտս (մտքում): Արկ զմատունս իւր ընդ
ականջս նորա:

2. Երբ դործողութիւնը մի բանի միջից,
միջով, վրայից, վրայով կամ ուղղութեամբ ան-
ցնել է ցոյց տալիս: Աշխարհաբար նաև գոր-
ծիական կամ բացառական հոլովներով, Օրինակ՝
Ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:
Մտէք ընդ նեղ դուռն: Բազումք են, որ մտա-
նեն ընդ նա: Անցեալ ընդ այն Յիսուսի: Գնաց
Յիսուս ընդ արտօրայս նոցա: Որ ինչ մտանէ
ընդ բերան՝ ոչ պղծէ զմարդ: Եւ ընդ քո անձն
իսկ անցցէ սուր: Զգնայր Յիսուս ընդ եզր ծո-
վուն: Հերձաւ վարագոյրն ընդ մէջ: Եւ ընդ
քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի
ջերմախառն ելանէր: Անցանել ընդ գետն:

3. Երբ խնդիրը ցոյց է տալիս մերձաւոր
ժամանակները: Աշխարհաբար ժամանակները,
դէպի, դէմ: վրայ, մէջ, յետոյ բառերով, կամ
ուղղական, բացառական, ներքոյակոն հոլովնե-
րով: Օրինակ՝ Թ՛երես գիտիցես և ընդ այն ժա-
մանակս ծնեալ իցես: Ընդ այգն, ընդ առաւօտն
(— առաւօտեան դէմ): Ընդ երեկս: Ընդ առաւօտն
ընդ այնուիկ (— այն օրերում, այն օրերը): Ընդ

տակաւ աւուրս եկին բերին: Ընդ աւուրս տասն եկեսցէ (—տասն օրից, տասն օրում, վրայ տասն օրը կը դայ):

4. Երբ խնդիրն անորոշ դերբայ, երբեմն և բայական անուն է և նշանակում է մի բան լինելուն պէս, լինելուց յետոյ, երբեմն և ի նախ դրի իմաստով (§ 157. 3) լինելիս, լինելու ժամանակ: Օրինակ՝ Եւ նոյն ժամայն ընդ վերանալ ի ջրոց՝ ետես ցելեալ զերկինս: Եւ եղև ի մկրտել ամենայն ժողովրդոցն և ընդ Յիսուսի մկրտիլ և կալ յաղօթս՝ բանալ երկնից: Ընդ բուսանելն չորացաւ: Ընդ երանելն նորա ի նաւէ անտի Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս կռուին: Եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երևումն սքանչելոյն (տրեգական) ընդ իս զիւրաբանչիւր ծունր նմա ոչ կըրկնեոյիք

5. Իբրև խնդիր՝ զգացմունք ցոյց տուող և մի քանի ուրիշ բայերի, վրայ, զլինն բռտերի իմաստով: Երբեմն հայցականի հետ և տրական հօլովով է դրւում այս խնդիրը: Օրինակ՝ Դա է սրդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: Չարմանալ յին ընդ վարդապետութիւն նորա: Խոժոռել, խռովել ընդ բանն (այլ և խռովիլ ընդ բանին): Խնդալ ընդ բարիս: Չարմանալ, նախան-

ձել ընդ սք, ընդ ինչ (այլ և նախանձել զարմանալ, գալթ ունել, ուրախանալ ընդ ումբ, ընդ իմիք): Էր ցամամբ մեծաւ ընդ Տիւրացիս: Անցք անցին ընդ նա: Արարին ընդ նա զօր կամեցան: Որ ինչ արարին ընդ նմա: Չասեն ինչ ընդ դմա: Առնել ողորմութիւն ընդ տանն նորա: Հայեցեալ ընդ նա, ընդ Յիսուսի:

6. Ընդ ... ընդ կրկնուած ձևով նշանակում է երկու բանի մէջ, միջև, մէջտեղում, արանքում: Օրինակ՝ Վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ: Յարենէն Աբէլի մինչև յարիւնն Չաբարեայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն: Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո: Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր:

Այս գործածութիւնը նշանակում է և ընդ ամենայն, ընդ ընաւ—միանգամայն, բոլորը միասին: Օրինակ՝ Եւ լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետեակ:

164. Ընդ հայցականի և եզակի, երբեմն և յոգնակի տրականի հետ նշանակում է հետ, հետը միասին: Օրինակ՝ Խռովեցաւ Հերովդէս և ամենայն Երուսաղէմ ընդ նմա: Հաշտեաց ընդ

եղբոր քում: Ընդ որում ես համբուրեցից: Եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից վասն սրբութեան: Ձայս խօսէր ընդ նոսա: Ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: Այլ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց ... այլ ընդ Աստուծոյ: Աւտել և ըմպել ընդ արբեցողս: Այլ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան: Կարել ընդ մորթ: Տուն ընդ տուն կցել:

165. Ընդ սեռականի հետ նշանակում է փոխանակ, փոխանակ ընդ, — տեղը, փոխանակը, երբեմն և համար: Օրինակ՝ Ձայն առեալ տացեա ընդ իմ և ընդ քո: Ակն ընդ ական և աւտան ընդ աւտանս: Ձի՛նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ: Առ զմի ի կողից նորա և ելից ընդ այնր մարմին: Թագաւորեաց եղբայր նորա ընդ նորա: Ընդ ամենայն դատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ, տացեն համարս յաւուր դատաստանի: Բերէր ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր: ՁԱստուած ընդ մարդկան փոխանակեցին:

166. Ընդ բացառականի հետ, առանց ի նտխորի, նշանակում է՝ կողմից, կողմը, կամ լոկ բացառականի իմաստ ունի: Օրինակ՝ Ասն

ղի նստցին սորա մի ընդ աջմէ քումմէ և մի յահեկէ: Ելին ընդ կողմանէ դրանցն: Բանալն էր նոցա ընդ հիւսիսոյ. ընդ հարաւոյ. ընդ արեւելից կողմանէ: Անկցին ընդ կողմանէ քումմէ հաղարք: Ընդ ցուտցն կախեալ ի լուցին: Ար ինչ կայ ընդ երեսոց լուսոյն, նա է պատճառ խաւարին:

167. Ընդ գործիականի հետ նշանակում է տակը, տակին, ներքոյ: Օրինակ՝ Այլ լուցանեն ճրագ և դնեն ընդ գլուանաւ: Եթէ ընդ յարկաւ իմով մտցես: Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ: Մտէք ընդ վիմօք և թագերուք: Ընդ գրով, ընդ ծառայութեամբ, ընդ աշխարհագրով արկանել: Ընդ հարկաւ դնել:

Ը Ս Տ.

168. Ըստ հայցականի եւ տրականի հետ նշանակում է՝

1. Համեմատ, — պէս, նայելով, թուով, չափով: Օրինակ՝ Մի ըստ աչս դատիր: Ըստ նոցա կարծիս (կարծեաց): Ըստ կամս, ըստ միտս, ըստ օրէնս — ըստ կամաց ելն: Կատարել դատաստան ըստ դրեալսն: Հատուցանել իւրաքանչիւր ըստ

գործս: Ըստ տունս, ըստ վրանս, ըստ երգ, ըստ գլուխ (=տների ելն. թուով): Ըստ աճել մանկանն: Իւրաքանչիւր ըստ կարի իւրում: Մի ըստ գործոց նոցա առնէք:

2. Դուրս, դէնը բառերի իմաստով իբրև խնդիր անցանել, ելանել, անկանել, լինել ելն. բայերի: Աշխ. նաև բացառ. և ուղղ. հորոջներով: Օրինակ՝ Անցանել ըստ չափ, ըստ սահման, ըստ օրէնս, ըստ երգումն, ըստ բանս, ըստ ջուր: Ելանել ըստ հրաման, ըստ չափ, ըստ ձեռն (ուրուք). անկանել ըստ կողմն, ըստ ակն: Ըստ ակն էաք ի Տեառնէ: Ըստ այն մի գիշերն (այն մի գիշերից զատ): Ի ձէնջ ըստ կողմն ելեալ: Չամենայն ազգս ժողովեան և անցն ըստ Պահ դուռն ի ներքս: Որ և ըստ հեթանոսական օրէնս անցանէր արիւնհեղութեամբ: Կայսր չեղանէ ըստ քո հրաման: Որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ: Ամենայն արարածք ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց:

169. Ըստ բացառականի հետ, առանց ի նախդրի, ցոյց է տալիս յաջորդութիւն, ետեւից. կամ լոկ բացառականի իմաստ ունի: Օրինակ՝ Օր ըստ օրէ: Ասել, ելանել մի ըստ միջէ: Ամ

ըստ ամէ (=օրէցօր, տարէցտարէ): Այր ըստ առնէ (իրար ետեւից): Եւ որ ըստ այսմանէ: Ըստ նմանէ. ըստ նոցանէ: Ըստ հիւսիսոյ կուռէ:

170. Իբրև գ, որպէս գ, հայցականի հետ, նշանակում է՝ պէս, նման, ինչպէս: Գործ է ածուով հաւասարութեան, նմանութեան բաղդատութիւն ցոյց տալու համար: Օրինակ՝ Ետես զհօգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զազանիս: Յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօս լինիք իբրև զհեթանոսս: Եղերուք խորագէտք իբրև զօճս և միամիտք իբրև զազանիս: Լերինք ցընծաոցեն որպէս զխոյս և բլուրք՝ որպէս զգառինս մաքեաց:

Իբրև թուականի հետ նշանակում է մօս. ինչպէս՝ էին արք իբրև հինգ հազարք: Յիսուս մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի:

171. Քան գ, հայցականի հետ, նշանակում է.

1. Զան, քան թէ: Գործ է ածուով առաւելութեան կամ նուազութեան բաղդատական աստիճան ցոյց տալու համար: Ածականը յաճախ դրուում է եւս (=էլ, էլ աւելի), առաւել, աւելի, եւս առաւել, առաւել եւս բառերով, կամ գոյն բառով բաղադրուած ձևով: Օրինակ՝ Ոգի առաւել է քան զկերակուր և մարմին քան ըզ-

հանդերձ: Լաւ էք քան զբազում ճնճդուկս: Մեծ է հոգի քան զմարմին: Էջ սա արդարացեալ քան զնա: Մեծ ևս քան զայս սէր ոչ որ ունի: Լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնսն հաշուէին: Չմահ քան զկեանս ընտրէին: Քան զսուտն ստազոյնը լինիցիք: Եւս քան զևս (=աւելի ու աւելի) աճեցին: Աւարն օր քան զօր (=օր օրի վրայ) աճեցեալ բազմացաւ:

2. Մի բանի չափ, պէս: Ժողովրդական ձևով քանց: Օրինակ՝ Եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ (=... հատի չափ): Խոստանայ ի վեր քան զմարդ և քան զմիզ (= միջի չափ) ազդել ոչ կարէ:

Ծան. 1. Գերագրական աստիճանի իմաստն ըստացում է, ինչպէս աշխարհաբարում, նոյն բազդատական ձևով, միայն քան զ նախորդ խնդիրը գրուում է ամենայն, ամենեեւան բազերով. ինչպէս՝ որ մեծն է քան զամենայն: Առաւել քան զամենեւեան զոտոս դատէր: Որ յետին չար է քան զամենայն չարիս: Նոյն իմաստն ստացում է, երբ բազդատութեան խնդիրը գրուում է, ինչպէս աշխարհաբարում, սեռական, բացառական և ի նախորդով հայցական (ներքոյական). ինչպէս՝ Սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ: Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն: Ամենեցուն քան զքեզ նախա-

գունիցն ճանաչիս վեհագոյն: Մնաւ կինն յանկարծ երիս կատարեալս ի դիւցազանց:

Ծան. 2. Քան զ նախորդ գործ են ասում և՛ արսախոյ քան զ, արսախ քան զ—մի բանից գուրս: Յաւաջ քան զ, կախ քան զ—մի բանից առաջ: Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զգատիկն կին ի Բեթանիա (=զատկից վեց օր առաջ): Ի ներս քան զ—մի բանից ներս: Ի վեր քան զ, ի վերոյ քան զ, գեր քան զ—մի բանից վեր. ինչպէս՝ ի վեր քան զմարդկային բնութիւն—մարդկային բնութիւնից վեր: Սոյն իմաստն արտայայտուում է և գեր զ ձևով՝ Գեր զմարդիկ, գեր զընաւն: Յետու երթայր առաջի քան զնոսա—... նըբանցից առաջ: Չիչխեն այլ ինչ քան զայն գործել—... նրանից ջոկ (ուրիշ) բան: Այլազգ քան զայս: Անգր քան զ—մի բանից զէնը:

172. Մինչև ի (յ), մինչև զ հայցական հոլովի հետ—մինչև: Օրինակ՝ Ուտէին և ըմպէին ... մինչև յօրն, յորում եմուտ նոյ ի տապան: Տրտում է ողի իմ մինչև ի մահ (=մահու չափ), ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի: Եւ դու, կափառնաւմ, մի մինչև յերկինս բարձրասցիս, այլ մինչև ի դժոխս իջցես: Մինչև ցէրբ իցեմ ընդ ձեզ, մինչև յէրբ անսայցեմ ձեզ: Տաց քեզ մինչև ցիէս թագաւորութեան իմոյ: Քանիցս անգամ եթէ մեզիցէ ինձ եղբայր իմ, և թո-

դից նմա. մինչև ցեօթն անգամ: Մինչև ցեօթն անասնեկին և օթն անգամ: Ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ: Մինչև ցայժմ, մինչև ցայսօր:

173. Բաց կամ քայց բացառականի հետ = քացի, գատ: Օրինակ՝ Բայց յինէն այլ ատուած քեզ մի լիցի:

174. Հանդերձ (նախադաս և յետադաս) գործիականի հետ = հետը միասին (հանդերձ): Օրինակ՝ Տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով:

175. Առանց սեռականի հետ = առանց: Օրինակ՝ Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք զնացաք յերկիրն Յունաց և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն:

176. Վասն (նախադաս, երբեմն և յետադաս) սեռականի հետ = համար: Օրինակ՝ Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:

ՆԱԽԱԴՐԱԿԱՆ ԵՒ ՄԱԿՐԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ

177. Կան բազմաթիւ ածականներ, որոնք քերականութիւնների մէջ սովորաբար դրուում են իբրև նախադրութիւն: Այսպէս են՝ սրական խնդրով՝ նման, հանդոյն, հանդէտ (= նման, պէտ), համեմատ, հաւասար, զոյգ կամ զոյգ ընդ (= հետ մի տեղ, միասին), հակառակ, հակառակ ընդ. հայցական խնդրով՝ կից ի, մերձ ի, մօտ ի. հայցական և գործիական խնդրով՝ մերձ առ, մօտ առ. բացառական խնդրով՝ ուրոյն (= ջոկ, հեռու, զատ, բացի), մեկուսի, հեռի: Այս կարգի բառերից է իսկապէս և նախդիրների մէջ զբաժը՝ բաց, բայց (= հեռու, ջոկ, զատ):

178. Աւելի կարևոր են այն անունները, որոնց հոլովական ձևերից մի քանիսը, յաճախ նախդիրներով, գործ են ածուում նախադրութեան իմաստով, կամ մենակ բանում են իբրև մակբայ: Ստացական ածական անունները՝ իմ, քո, մեր, ձեր, իւր հոլովով համաձայնում են այս անուններին. նախդիրները՝ զ, ընդ, առ դրուում են նախադաս սեռականի վրայ:

1. Ես = ետ, ետք, ետև բառից՝ ետ ընդ ետ = իսկոյն, ետևից, նոյն հետայն: Թող անդէն ետ ընդ ետ լինէր նմա որդի: Ետ ընդ ետ իսկ ընդէր ոչ յղեսց: Յետ = ետ, դէպի ետ. ետքը, յետ, յետոյ: Զամօթն ի յետ ընկեցեալ: Յետ այս ամենայնի այլ բանիւք զմեզ մի հարցաներ: Յետ վեց աւուր: Յետս = յետ, ետ, դէպի ետ: Ի հայրենի օրինացն յետս կալ: Գնացին յետս

յետա (=եա եա): Յետոյ, յետուս—ետերց, ետուլ, ետուում: Ետեր, յետոյ: Յետոյ ձերմէ (—ձեր ետերց): Ունկն դնէր առ գրան խորանին, քանդի յետոյ նորա կայր: Թագեալ յետոյ գրանն: Յետոյ կողմն (=ետեր կողմն): Յետուստ խորանի կամ որմոյն մերոյ: Յետուստ կողմանէ: Ծակել զորմն յետուստ: Լի էին աչօք առաջոյ և յետոյ (=առջերց և ետերց): Յետոյ զղջացաւ: ԵՏ գետե—ետե ետե, հետդհետէ:

2. Հետ—հետ, հետք բառից՝ զհետ—ետերց, հետը: Երթալին զհետ նորա ժողովուրդք բազումք: Աղաղակէ զհետ մեր: Այր զեղբօր զհետ երթիցէ: Մի զմիոյ հետ—հետդհետէ, միմեանց ետերց: Ի ... հետե—ի վեր, սկսած: Յայնմ հետէ, յայտ հետէ, յորմէ հետէ, Ի սկզբանէ հետէ, Ի հնոց ժամանակաց հետէ, յայգուէ իսկ հետէ, յայնմ ժամանակէ հետէ, ի վաղուց հետէ: Երբեմն զործ է ամուում և հետ, Ի հետ—հետը, ետեր, ետերց:

3. Ձկնի, գ... կնի (երբեմն զկնի)—զհետ, ետերց, յետոյ: Եկայք զկնի իմ: Գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք: Չմեր կնի ոչ շքէր: Չերիս ամս՝ ամ զամի զկնի: Մի զմիոյ կնի կցեաց: Չմիմեանց կնի կարգեալ տողեացին: Չկնի Աբգարու մինչև ցերուանդ: Չկնի ոչ բազում աւուրց: Որ առաջին և զկնի (=առաջից և ետերց) երթալին:

Ծան. Կինգ նշանակում է՝ ոտքի տակը, հետք: Այս բառով բարդուած են՝ կրկին—երկկին (որից երկկինակի), երեքկին, չորեքկին են.—բառացի՝ երկու հետ (անգամ), երեք հետ, չորս հետ, կամ երկու ոտք, երեք ոտք, չորս ոտք:

4. Առաջ բառից՝ յառաջ—զէպի առաջ, ° առաջ: Ղնդ առաջ—առաջը: Ելին ընդ առաջ նորա: Առաջի կամ առաջոյ—առաջի, առջերի, առաջից, առջերց, առաջ(ը), առաջին: Առաջի նորա—նրա առաջ(ին): Առաջի ձերց՝ գառաջեալ, գառաջեօք—առջեր: Զառաջեալ իմով: Առաջք, զառաջս (ունկլ — առաջն առնել, առաջը բռնել):

5. Մեջ բառից՝ Ի մեջ, ընդ մեջ—մէջ, միջով, միջից, Ի միջի—մէջը, միջին: Ի միջի ձերու: Ի միջոյ—միջից, Ի միջոյ ձերմէ:

6. Վեր բառից՝ Ի վեր—վեր, դէպի վեր. վերոյ—վերի, վերերի, վերեր: Ի վերոյ—վերը, վերերը, վերեում: վերից, Ի վերոյ նորա: Ի վերուս—վերից, վերերից:

7. Ետե, Ետեք բառից՝ Ի Ետե—հերս, ներսը. Ետեոյ—ներքերի, տակի. Ի Ետեոյ, Ետեոյ—ներքերից, տակից. ներքերը, տակը. Ի Ետեուս—ներքից, ներքերից, տակից, ներքերից:

8. Ստո—ցած բառից՝ Ի ստոր, Ի ստորե, զստորե. Ի ստորէ, Ի ստորից, Ի ստորուստ—ստորե, ցածում, ցածից:

9. Հանդեպ բառից՝ Ի հանդէպ, հանդիպի կամ հանդիպոյ, Ի հանդիպէ կամ Ի հանդիպոյ, Ի հանդիպօջ —հանդէպ, հանդէպի, հանդէպից, հանդէպը:

10. Աղագ—միջոց, կղանակ, պատճառ բառից՝ յաղագս, աղագալ—համար, պատճառով:

11. Սակ—թիւ, համար, չափ բառից՝ սակս, Ի սակս—վասն, համար: Սակս էր, յոր սակս—ինչու համար: Յայս սակս, յայն սակս:

Այսպէս և համար բառից՝ Ի համար—համար: Շի-

նեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի գրու-
չուածովք բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ խոս-
րովիղիտոյ: Վերայ բառից՝ ի վերայ—վրայ: Ի վերայ
նորա: Քար ի քարի վերայ: Դէմ բառից ընդ դեմ—դէմը,
ընդդէմ, հակառակ. ի դեմս, ի դիմաց—դիմացը, կող-
մից: Արտախ—գուրս, գէպի գուրս. արտախ—գուրսը,
գրսում, գրսից. արտախս—գրսից: Նոյնպէս՝ ի ձեռն,
ընդ ձեռն—ձեռամբ—ձեռքով. ի պատճառս—պատճա-
տով: Ի... կողմն. ի... կոյս—գէպի...կողմը: Ի...կողմանէ,
ի...կուսէ—կողմից: Դարձաւ ի կինն կողմն, ի թիկունս
կոյս, յարևելս կոյս: Ի տանէ կողմանէ, յինէն կողմանէ,
ի քէն կուսէ (տես § 137. 5): Ընթե, առընթե, առ ...
ընթե—մտին, կշտին: Պես, գունակ, օրինակ, գօրէն—
պէս, տեսակ, նման: Փոխանակ, փոխառէն, փոխան,
չափ, յանդիման ելն:

Շ Ա Ղ Կ Ա Պ

179. Համադասական շեղկապներ.

Շւ—և, ու:

Շւ, նաեւ—և, նաև, էլ, նոյնպէս. օրինակ՝
Նկից և ես (=ես էլ) զկնի քո: Շւ գու ի նոս-
ցանէ ես:

Շւ ... եւս, եւս—ևս, էլ: Զոր ունէրն և զայն
ևս (=այն էլ) կորոյս: (Արդ եւս—դեռ նոր, նոր,
հենց նոր):

Շւ ... եւ, եթէ ... եթէ, թէ ... թէ—և'...և',
թէ ... թէ: Համարս պահանջէ ի մէջ և վասն
արտաքնոց, և վասն ներքնոց: Եթէ մեք, և եթէ
նորա այսպէս քարոզեցաք:

Եթէ, թէ—թէ (հարցական խօսքերի մէջ,
որոնք իմաստով ժխտում են իրար). օրինակ՝
Դո՞ւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլում ակնկալ-
ցուք: Տայո՞ք, եթէ ոչ տացուք:—Հարցական
խօսքերի մէջ եթէ—արդեօք, թերևս, գուցէ.
Իսկ մի՛ եթէ կամ լոկ մի—միթէ, մի գուցէ,
չլինի թէ. օրինակ՝ եթէ դիտիցես, դի այսօր
առնու Տէր զտէրդ:

Եթէ ... եւ եթէ, թէ ... թէ, եւ թէպէտ, թէ-
պէտ—թէկուզ ... թէկուզ, կամ լոկ՝ թէ (միայն
երկրորդ խօսքի սկզբում, այսպէս լինի թէ այն-
պէս իմաստով). օրինակ՝ Թէպէտ ի չար վարէր, և
թէպէտ ի բարի, ոչ պարտաւանք ինչ էին նմա և
ոչ գովութիւնք (=թէկուզ ի չարը վարէր, թէ-
կուզ ի բարին, կամ ի չարը վարէր, թէ ի բա-
րին): Թատեմք զձեզ ի դորձակալոցն յունաց,
թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ
խաղաղութեամբ (=պատերազմով լինի թէ խա-
ղաղութեամբ):

Թէեւ, թէպէտ, թէպէտ եւ—թէև, թէպէտ,
թէպէտ և, թէկուզ:

Թէ բիւր = թէպէտ և շատ, շատ էլ, ինչքան էլ. օրինակ՝ Զի թէ բիւր չար իցէ (— շատ էլ չար է), սակայն աստուածապաշտ է:

Կամ, և և կամ = կամ, և կամ, կամ թէ:

Կամ... կամ, կամ թէ... կամ թէ = կամ ... կամ:

Այլ, այլ և = այլ, այլ և:

Ոչ եթէ, ոչ թէ ... այլ = ոչ թէ ... այլ:

Այլ = բայց, իսկ. օրինակ՝ Լուարուք, զի ասացաւ՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեզ՝ մի կալ հակառակ չարին. այլ եթէ որ ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձն նմա և զմիւսն: Թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդս մեր նորոգի օր ըստ օրէ: Այլ եթէ = բայց եթէ:

Բայց, սակայն, — բայց սակայն, այլ սակայն = բայց, սակայն:

Համայն, եւ համայն, համայն և այնպէս = դարձեալ, բայց և այնպէս, այնու ամենայնիւ:

Իսկ = իսկ:

Իսկ = իսկ, հատա, բն (հարցական խօսքի սկզբում). օրինակ՝ Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին. իսկ արդ (— հապա այժմ) զինչ գործեսցուք: Այլ արդ = բայց արդ:

Ապա եթէ, ապա թէ = իսկ եթէ:

Նա, նամանաւանդ, նա թէ = մանաւանդ թէ: Արխարհաբարի հետ նոյն են՝ Ապա, ապա ուրեմն, ուստի, — այսինքն, այս է, այսինքն է, — քան թէ, թող թէ ևլն:

180. Ասորադասական շաղկապներ.

Զի = օր (ամեն տեսակ երկրորդական խօսքերի սկզբում: Զի = օր յարաբերական դերան. տես § 130. 1):

Զի, որպէս, որպէս զի = օր, որպէս զի (միայն ապառնի ժամանակների հետ՝ իբրև նպատակի խօսք). օրինակ՝ Բարի է ինձ, զի խօնարհ արարեր զիս, որպէս (= օր, որպէս զի) սուսայց զարդարուիլինս քո:

Զի, քանզի, վասն զի, փոխանակ զի, — որով, որովհետեւ = օր, քանի օր, որովհետև (սովորաբար ներկայ և անցեալ ժամանակների հետ իբրև պատճառական խօսք):

Իբր զի, իբրու զի, որպէս զի = օր, այնպէս օր, այնքան օր. օրինակ՝ Տէրն ինքնին օգնեաց մեզ, որպէս զի (= այնպէս օր) զանուն քաջութեան ժառանգեցաք:

Մանաւանդ զի, այն զի = մանաւանդ օր:

Քան, քան զի = քանց, քանց օր (առաջադաս բաղդատական խօսքի սկզբում). օրինակ՝

Քան զնոսա արկանէր ի գեհեն՝ զնա որ պատ-
րեացն զնոսա՝ ընդէր ոչ արկանէր = Քանց նրանց
էր գեհենն ձգում... , կամ՝ նրանց զեհենն ձը-
գելու տեղ:

Եթէ, թէ = եթէ, թէ, թէ որ (պայմանա-
կան խօսքերի սկզբում):

Եթէ, թէ = թէ, որ. օրինակ՝ Հաւատոմբ
եթէ կարող եմ առնել = Հաւատում եք թէ
կարող եմ առնել: Լուաւ եթէ Արքեղայոս թա-
գաւորեաց = Լսեց թէ Արքեղայոսը թագաւո-
րեց: Ոչ եմք անձանց տեարք, եթէ ըստ կա-
մըս գնացուք = Մենք մեր գլխի տէրը չենք,
թէ մեր կամքով շարժուենք:

Մինչ, մինչեւ, մինչդեռ — մինչ, մինչդեռ,
քանի, քանի դեռ, երբ, երբ դեռ. օրինակ՝ Յով-
սէփ եօթնուտասնամեայ էր, մինչ (= երբ) արա-
ծէր եղբարքն հանդերձ խաչինս: Մինչև (=
մինչդեռ) մեք զայլս կամէաք հնազանդել, մեր՝
որ վարդապետք օրինացդ էին, զկնի նոցա մն-
լորութեանն խոտորեցան:

Մինչեւ, յորմէ հետէ = այն օրից երբ. օրի-
նակ՝ Մինչև գնաց Մեսրոպ յարքունական դրա-
նէն, ոչ զոր ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց:

Մինչ, մինչեւ = մինչև, մինչև որ. օրինակ՝
Ոչ անցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի:

Մինչ, մինչեւ, մինչ զի — այնպէս որ, այն-
քան որ, մինչև որ: Օրինակ՝ Շարժումն մեծ եղև
ի ծովուն, մինչ նաւին ծածկել յալեաց անտի
(... այնպէս որ նաւը ծածկուեցաւ ...): Ժողո-
վեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մը-
տանել նմա ի նաւն: — Գրաբարում այս իմաս-
տով մինչ, մինչեւ դրում են անորոշ դերբայի
հետ, իսկ աշխարհաբար դիմաւոր բայով է առում:

Մինչչեւ — քանի դեռ չ... , դեռ չ. օրինակ՝
Մինչ չև հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս
զիս = Հաւը դեռ խօսած չի լինիլ, (որ) երեք
անգամ կուրանաս ինձ: Գիտէ հայրն ձեր, մինչև
ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ: — Աշխարհաբար
այս երկրորդական խօսքը սովորաբար անցեալ
դերբայով կամ առաջ բառով է առում, — Աք-
լորը դեռ չկանչած, դու... : Աքլորը կանչելուց
առաջ ... :

Չեւ, չեւ եւս = դեռ չ... Օրինակ՝ Չև էր ու-
րուք ձեռնարկեալ յեկեղեցին յայտնի — Դեռ
ոչ որ եկեղեցուն չէր դիպել: Ի ճշմարտութեան
վերայ չև է հասեալ:

Իրրեւ, յորժամ = երբ, երբ որ:

Յորժամ = մինչև (այն ժամանակ) որ. օրի-
նակ՝ Փախիր յեգիպտոս և անդ լինիլի, ցոր-
ժամ ասացից քեզ:

181. Իբրև ստորադասական շաղկապ բանում են, ինչպէս աշխարհաբարում, և հարցական բառերը, երբ առանց հարցման իբրև յարաբերական բառ են գործածուում: Դրանց ետեւից կարող է իբրև թարմատար շաղկապ գրուել նւ—էլ, էլ որ, երբեմն նաև թէ=որ: Օրինակ՝ Երբ և է՝ յայտնելոց են (=երբ էլ լինի...): Ձինչ և խնդրեսցես՝ տաց քեզ—ինչ էլ որ խնդրես՝ կը տամ քեզ:

ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

182. Դրաբարում ձայնարկութիւնները յաճախ առնում են տրական խնդիր: Ինչպէս աշխարհաբարում՝ երանի՛ նրան, վայ քեզ, այսպէս և դրաբարում աւուում են՝ աւանդ (աղետիցս), բարէ (թշուառութեանս), սհ (անմտութեանն), սվ (սքանչելեացն), վանչ (լինձ): Շատ գործածական ձայնարկութիւններից են նաև՝ աղէ, ճն, հնպա, ճշ թէ, իցիւ, իցիւ թէ (=երանի՛ թէ) և յն:



Յ Ա Ն Կ


| | Երես |
|----------------------------|------|
| Յառաջարան. | 3 |
| Գրաբար և աշխարհաբար. | 5 |
| ԲԱՅ | 9 |
| Անորոշ դերբայ | 9 |
| Ապառնի դերբայ | 15 |
| Անցեալ դերբայ | 16 |
| Ենթակայական դերբայ | 19 |
| ԽՈՆԱՐ ՀՈՒՄ | 21 |
| Լծորդի ձևեր | 23 |
| Բնի ձևեր | 24 |
| Գիտելիք | 26 |
| Լծորդի ժամանակներ | 29 |
| Բնի ժամանակներ | 30 |
| Ընդհանուր պատկեր խոնարհման | 32 |
| Կրաւորականի կազմութիւն | 33 |
| Անկանոն բայեր | 37 |
| Պակասուոր բայեր | 50 |
| Բազադրեալ ժամանակներ | 55 |
| Ժամանակների գործածութիւնը | 59 |
| Եղանակիչ բայեր | 69 |

| | |
|----------------------------|-----|
| ԳՈՅԱԿԱՆ (անուն և դերանուն) | 76 |
| ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՒՄ | 76 |
| Կանոնաւոր հոլովումներ | 84 |
| Ի հոլովում | 84 |
| Ու հոլովում | 86 |
| Ոյ հոլովում | 87 |
| Այ հոլովում | 94 |
| Ան հոլովում | 99 |
| Եր, եզ հոլովում | 107 |
| Անկանոն հոլովումներ | 109 |
| Փոխանցում հոլովումների մէջ | 116 |
| Չհոլովուող բառեր | 120 |
| ԴԵՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՒՄ | 121 |
| Հարցական և անորոշ անուններ | 122 |
| Անձնական դերանուններ | 132 |
| Ցուցական դերանուններ | 135 |
| Փոխադարձ դերանուններ | 142 |
| Յարաբերական դերանուն | 143 |
| Հոլովների գործածութիւնը | 146 |
| ԱԾԱԿԱՆ | 154 |
| Յօդեր | 157 |
| ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ | 164 |
| Չ | 166 |
| Ի, յ | 170 |
| Յ | 178 |
| Առ | 178 |
| Ընդ | 183 |

| | |
|-------------------------------|-----|
| Ըստ | 189 |
| Իբրև զ, քան զ | 191 |
| Մինչև ի, մինչև ց | 193 |
| Բայ, հանդերձ, առանց, վասն | 194 |
| Նախադրական և մակրայական բառեր | 195 |
| ՇԱՂԿԱՊ | 198 |
| Համադասական շաղկապներ | 198 |
| Ստորադասական շաղկապներ | 201 |
| ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ | 204 |



| | |
|-----|-----|
| 180 | ... |
| 181 | ... |
| 182 | ... |
| 183 | ... |
| 184 | ... |
| 185 | ... |
| 186 | ... |
| 187 | ... |
| 188 | ... |
| 189 | ... |
| 190 | ... |
| 191 | ... |
| 192 | ... |
| 193 | ... |
| 194 | ... |
| 195 | ... |
| 196 | ... |
| 197 | ... |
| 198 | ... |
| 199 | ... |
| 200 | ... |
| 201 | ... |
| 202 | ... |
| 203 | ... |
| 204 | ... |
| 205 | ... |
| 206 | ... |
| 207 | ... |
| 208 | ... |
| 209 | ... |
| 210 | ... |
| 211 | ... |
| 212 | ... |
| 213 | ... |
| 214 | ... |
| 215 | ... |
| 216 | ... |
| 217 | ... |
| 218 | ... |
| 219 | ... |
| 220 | ... |
| 221 | ... |
| 222 | ... |
| 223 | ... |
| 224 | ... |
| 225 | ... |
| 226 | ... |
| 227 | ... |
| 228 | ... |
| 229 | ... |
| 230 | ... |
| 231 | ... |
| 232 | ... |
| 233 | ... |
| 234 | ... |
| 235 | ... |
| 236 | ... |
| 237 | ... |
| 238 | ... |
| 239 | ... |
| 240 | ... |
| 241 | ... |
| 242 | ... |
| 243 | ... |
| 244 | ... |
| 245 | ... |
| 246 | ... |
| 247 | ... |
| 248 | ... |
| 249 | ... |
| 250 | ... |



133

133

« Ազգային գրադարան



NL0247247

5415

